պակսէ՝ նա զամենին վճարէ Աստուած յիրենցմէ վճարվի, եւ ի հայրապետէն՝ թէ գեպիսկոպոսն չըղորդէ: - 38. Եւ թէ ոչ՝ որ վասն ոչինչ ազգ սղալանաց կամ ծուլութեան յամեցնեն նա՝ զարիւն նոցա եւ զկորուստ երկրին ի ձեռաց նոցա խնդրեցից՝ ասէ տէր. եւ չէ պարտ կարծել. թէ փոքր գնով ենք գնած. Քրիստոսի արեան գինն ենք, եւ թէ թողուն մեր հովիւքն՝ որ գայլ զմեզ տանի, նա Քրիստոս առնու զիր վճարն: - 39. Բայց եւ մեզ աշխարհական հաւտիս պարտ է մերոց հովուացն հնազանդ լինել իբրեւ Աստուծոյ հայնց որ ասեն հովիւքն առաջի ահեղ ատենին Քրիստոսի՝ թէ ահաւասիկ ես եւ մանկունք իմ՝ զոր ետ ինձ Աստուած: - 39. Եւ ոչ յիշել զՔրիստոսի հրամանքն զոր հրամայեաց ընդ սուրբ առաքեալն Պետրոս՝ թէ դու ես վեմ - 40. Կու հրամայէ սուրբն Սահակ՝ թէ տգէտ եւ պեղծ մարդիկն բաժին կու ձգեն ի սուրբ եւ կաթուղիկէ վիմիս մեջ, եւ կու ասեն՝ թէ այլ եւ այլ են ազգաց եւ քրիստոնէից եկեղեցիքն: - 40. Ամ զայս տեսէք՝ թէ որ զայս միութիւնս կու քակեն ու կու այլայլեն, որ է մայր մեր սուրբ եկեղեցի՝ եւ հայր բանն Աստուծոյ Քրիստոս - 40. Բայց զայսչաքս պատեհ համարեցայ գրել՝ թէ ի՞նչ թարգմանի կաթուղիկէն եւ եկլէսիայն՝ որ է եկեղեցի: - 41. Ապա տեսէք՝ թէ այնոց պատիժն ի՞նչ է, կամ թէ երբ համբերեն իրենց կարաւորն՝ ինչ մեղք այնեն: - 41. Եւ ի յայս տեղս չկարցի եւ գրաւոս Սմբատս զինչ սուրբն Սահակ գրել էր ի հաւս արինաւք ի հին եւ ի նոր կտակարանացն՝ ու պնդել եւ խրատել էր՝ նա եւս թէ զայն զամենն գրել էի՝ նա կարի շատ էր լել: - 41. չուսուցին՝ թէ վասն նախանձու եւ ատելութեան պատռեցէք զսուրբ եկեղեցի եւ զքրիստոնէութեան միութիւնն. եւ ոչ ասացին թէ դիւաց եւ անարինաց կերակուր տուք զքրիստոնէք: - 41. Եւ տեսէք թէ սուրբ հայրն Սահակ քանի տարով յառաջ, երբ դեռ Յունաց գրովն վարեաք, զգուշացոյց զմեզ եւ պնդեաց՝ թէ՛ տեսէք որ վասն տաւնիցն՝ զոր կայ սովորութեամբ որ ամեն ազգ եւ երկիր իրենց հաշվնովն եւ ժովն իրենց տաւն կու այնեն, նա չլինի բնաւ բաժանումն սուրբ եկեղեցոյն եւ ոչ ազգացն, զի ոչ թէ եկեղեցին տաւնիցն է, այլ տաւնքն եկեղեցոյն - 41-42. Ու ի յայն կու հային՝ թէ զեկեղեցեաց անուանքն այլ եւ այլ են այրել, նա կու կարծեն թէ այլ եւ այլ է. զորս թէ յառաջագոյն զայս զիտացեալ էին առաջինքն, նա չէին այրել վասն այս ահիս քան մէկ անուն: - 42. Եւ ոչ եթէ զազգերոյս մէն կու բաժնին, քան զվաներոյ եկեղեցիսն յաշխարհականացն՝ որ կու ասեն՝ թէ այլ է վանացն եւ այլ է քաղաքացն եւ գեղերոյն: - 42. Եւ այլուի ի յեկեղեցոյ ժողովումն գան՝ ի մէկ կաթուղիկէ եկլէսիայ եւ ի մէկ հաւատ ի Քրիստոս. քաւել թէ բաժանած լինին ազգն եւ որոշած ի ճշմարտութենէն - 42. Չոր թէ հանդիպէր ուղղափառ բժշկի որ առողջացներ եւ հանէր զդէն, նա մեծ վարձք այներ եւ մեծ առնոյր ի Քրիստոսէ: - 42. Եւ հրամայած է, որ զինչ իսկ մարդ մեռնի, թէ հարուստ եւ թէ աղքատ, նա ամենեւին պառկելիքն ու հալան ինչուի գաւտին ու ի սաւերն ի վանքն երթայ - 44. Եւ վասն այսոր հրամայած է յարինացս, որ թէ որ պահք խոստանայ, նա երթայ ի վանքն պահէ, ինչվի լմննայ: - 44. Ապա թէ վանաց գեղ լինի, նա ի յիր վանքն տայ - 44. Եւ թէ որ երիցու առանձին ժամուց տայ կամ

մատղենի, նա կէս դրամուն ու մատղենոյն վանացն է: - 45. Եւ որ այսոր անհնազանդ լինի ու այլազգ այնէ, նա երեք հետ իր խրատն տան. եւ թէ չլսէ եւ ուղղի, նա ձգուի ի կարգէ: - 46. Եւ ապա թէ այլ իրք յաւելնայ, նա տայ ում կամի: - 46. Մարդ՝ որ վանից հրամանաւ բանադրած լինի վասն իրիք պատճառանաց՝ ու մահ գայ իր, նա չկարէ զինք երէց հաղորդել՝ ոչ /գրքում՝ որ/ թաղել եւ ոչ զիր տղայն կնքել, քաւել թէ կենայ ու մեռնի տղայն, նա ապա թող կնքեն ու թաղեն: - 47. Բայց աւտար երէց յայլ թեմէ՝ կարէ հաղորդել եւ թաղել զբանադրածն, ու ասէ՝ թէ չգիտէի: - 47. Բայց թէ որ առանց հրամանաց՝ հակառակ եպիսկոպոսին եկեղեցի շինէ ի թեմն, առանց հրամանաց, նա գայն այլ եպիսկոպոսի հրամանաւ, կարէ խափնեցնել: - 47. Նոյնպէս թէ զկնիկն տանին, նա այրիկն համբերէ, ու թէ չհամբերէ՝ նայ նոյն պատիժդ է: - 48. Ու թէ հետ այնոր ուրդի, որ գայ մէկայլն ի ծառայութենէ, նա իրաւունք է՝ որ թէ ուզենայ եկածն՝ նա խափանեն զետի պսակն եւ առջի պսակն է ընդունած: - 48. Թէ այրն լինի ծառայ տարած, նա կինն է տարի համբերէ. ու թէ այս է տարոյս ընդ ներքս այրիկ առնու, նա չէ ընդունած, այլ բոզութիւն է համարած - 48. Բայց թէ հաճութեամբ երէց լինի որդեգիրն՝ ճանաչած ի քահանայից ազգէ կամ ի յաղէկ ազգէ, որ բիճ չլինի ... նա կարէ իրաւնաւք ուննալ՝ զկէս տունն եւ զկէս հայրենացն - 49. Եւ թէ աւտար լինի յիւր ազգականութենէ՝ լաւկ որդեգիր, նա զիր ժամուն եւ զգնայուն իրք՝ գայն մէն կարէ տալ ըստ իր կամաց - 49. Վասն եպիսկոպոսաց՝ թէ որպէս իշխեն վաներոյ - 50. Ամ թէ յիստկի, նա լաւ է ու շահած լինի երկու դեհն. եւ թէ ոչ, նա յիրիցնոյն վասն այնոր հարկ կու առնուն. որ գիտենայք: - 50. Հիւանդանոց ուր կենայ՝ նա չէ պատեհ ամենեւիմբ անտից հարկ առնուլ, ոչ ի հիւանդէ եւ յիւր սպասաւորէ. թէ ոչ՝ թող համարի թէ զՔրիստոս կու կողոպտէ: - 51. Սահման է յաւրիսացն՝ որ թէ թագաւոր եւ թէ իշխան ու թէ հեծելւոր, որ ի ճանպահ կենայ, ու վանք պատահի, նա ի հաւն իջնու, չիջնու ի գեղ - 51. Նա կու պնդէ արեւնքս, որ երբ ի վանքն իջնուն, նա թէ կին կենայ ի հետն չելնէ՝ ի շուրջ գայ ի վանքն, ապա հարկաւք որ ծածուկ կենայ - 51. Եւ թէ ժառանկ որդի կենայ, ու իրիցութեանն լինի, նա գայն եպիսկոպոսն գիտենայ՝ թէ ծուխ տայ եւ թէ ոչ. որ թէ խելք ուննայ, որ զժողովուրդն հովվէ, նա տայ իր ծխեր, եւ թէ ոչ՝ նա ծխերն հայրենիք չէ իր՝ ապա եկեղեցոյն է ծուխն: - 52. Բայց թէ եպիսկոպոսն միաբան կենայ ի վանքն, նա այլ իրքն վանացն է. ապա թէ կենայ իր ճանչած իրք՝ որ ըղորդ իրն լինի, նա կարէ իր ազգի եւ կամ յում ինք կամենայ, եւ ոչ որ իշխէ նմա հակառակել: - 52. ու թէ երեցկինն այլ մեռնի, նա ամենն եպիսկոպոսին է: - 52. Ապա պատեհ տեսաք գրել՝ թէ ուստի ընկաւ տիպարնս այս: - 53. Թող աղէկ գիտենան, որ կու համբերին՝ զի չկայ ամենեւիին հրամանք, որ երէց ի յայլ երիցու ծխին մասն երթայ, քաւել թէ տեղոյն երեցն մեծարէ: - 53. Եւ արեղայի չկա հրաման որ բնաւ ծուխ ուննայ. եւ ոչ վասն այնոր որ թէ ի վանքն բերեն մեռելոց՝ կամ մատաղ այնեն - 55. Ու թէ չլինի արժանի, եւ անհաւատ քուրճիկ լինի, նա թող ի պարոնութեան դարպասն տայ զինք եկեղեցին, որ առնու զինչ ուննայ - 54. Ու թէ

լինի արժանի քահանայութեան, նա թող զինք ըզորդ քահանայացնէ - 54. Ապա թէ տառապեալ լինի մարդն, նա ըստ իր կարեացն բերէ, նա ոչ երեցն չկարէ խաւսել՝ թէ փոքր է կամ նուազ կամ քիչ - 55. Եւ մարդ թէ կենայ, որ չարի ընդ իր երեցն ու այլ երեցով մատաղ այնէ գաղտուկ, նա թէ երեցն դատաստնի՝ նա իրաւունքն հայնց է, որ տըպլէ զիր իրիցուն վզենն: - 55. Ու թէ խալապայ լինի եւ յանդգեալ քըշտէ իրիցուն, նա ձեռքն կտրվի. ապա թէ զըղջայ ու մեղայ ասէ, նա եպիսկոպոսն կարգ դնէ որ քաշէ: - 55. Բայց թէ երեցն անպատեհ իրք ուզէ ի ծխէն կամ քըշտէ, նա եպիսկոպոսն եւ դատաւորք եկեղեցոյն արգելեն զժողովուրդն եւ զժամն մինչեւ ապաշխարէ զինչ ցեղ որ մեղանքն արժենայ: - 55. Նոյնպէս եւ թէ անպատեհ բանդրէ, նա զինք բանադրեն՝ որ ապաշխարէ - 56. Չկայ հրաման յաւրինաց որ ոք իշխէ առանց եպիսկոպոսի եկեղեցի հիմնարկել, եւ ոչ յաւեր եկեղեցու քար առնուլ. թէ չիք, քակվի շէնքն եւ կամ փիրիսկոպոսովն լինի ի պակասութիւնն: - 56. Բայց թէ խղճայ եպիսկոպոսն ի քակելն՝ նա կարաւոյ է: - 56. Բայց երբ կենայ ու լինի եպիսկոպոսին ընտրաւորութիւն՝ նա վասն այնոր թէ բաժին մի հակառակին՝ նա կաթողիկոսն չլսէ նոցա - 57. Եւ թէ Յոհաննէս աւետարանչին Աթոռն ի յԵփոսոսէ ու ի Կոստանդինուպօլսէ ի Հռոմ եւ անտի դարձեալ ի Բիզանդիայ փոխեցաւ՝ նա չէ թէ վասն կաթողիկոսութեան պատճառանաց փոխեցաւ, քանց որ երկու հարկիքն մեկ եղան: - 57. Եւ յայլ իշխանութիւններ, թէ լինի առաքելական աթոռ եւ թէ չլինի, նա կայ հրամանք որ կարեն կաթողիկոսք լինիլ: - 57. Եւ թէ չուրդի ի նոցմէ՝ նա կարեն ժողովել եպիսկոպոսունք եւ ձեռնադրել կաթողիկոս: - 58. Եւ թէ ի հեռու տեղաց լինայ՝ նայ ուղարկեն երեք եպիսկոպոսունք որ երթան փնդոն յիր վերայ - 58. Ու թէ այլ յանդգնի, նա ու ի կարգէն այլ ձգվի, որ ոչ յեկեղեցին մտնէ՝ եւ զեղ պեղծ եւ անզգամ մարդ վստահի ձգվի: - 59. Եւ թէ իսկի եկեղեցական մարդ, զինչ ու լինի, իշխէ դեկան տալ ի վաշխ ու բանեցնել, նա կամ երաշխաւորաւք եւ թղթով խոստանայ որ այլ չայնէ՝ ու զոր արար՝ նա ապաշխարէ ու քաւէ. ու թէ չառնու յանձն, նա զեղ հերետիկոս ձգեն զինք ի կարգէն ինչուի յաւիտեան - 59. Նոյնպէս եւ թէ աշխարհական լինի բանադրած: - 59. Եւ թէ ոք ի կարգէ ձգած լինի ... եւ նա ջանայ այլ ուրեք երթալ առնուլ՝ նա չէ իրաւունք որ տան. քաւէլ թէ աղչանք գրեն ի կապաւղն որ արձակէ: - 59. Եւ թէ դիմադարձել է այն յորոյ կապած է, նա ով որ արձակէ կամ կարգ տայ՝ նա ծուրութեան եւ յանդգնութեան կարգ քաշէ՝ ի կաթողիկոսէն եւ յեպիսկոպոսացն: - 60. Եւ թէ ոք կարգաւոր ԱԲԵՂԱՅ որ գաղտաբար միս ուտէ, նա զայնպիսին զեղ զիտառ եւ ծուռ մարդ պարտ է դատել եւ տուալ ապաշխարութիւն եւ կարգ դնել - 60. Եւ թէ ուտէ, նա ալանի թող ուտէ: - 60. Եւ թէ՛ ո՞վ գիտէ՛ ընդ չգետն լինայ լել, նա տեսնուն՝ թէ հայնց որ գնաւոն շահել լինայ յայն հայրենեցն՝ թէ ոչ. եւ ի յայնոր վերայ այնէ, զինչ Աստուած իր ցուցնէ - 60. Ապա թէ ապաշխարէ երկու տարի մեծ հնազանդութեամբ յեկեղեցոյն դուռն եւ ի ներք չմտնէ ու ելնէ հետ այլ ապաշխարաւղացն - 61. Եւ Սմբատ սպարապետս փնդոնցի ի կանոնքն եւ գտայ, որ գրել էր զայս, թէ քահանայ, որ բոզնայ, նա Ժ

տարի ապաշխարելով եւ տրաւք թէ կենայ, նա ապա հաղորդելոյ կարէ արժանաւորել – 62. Եւ թէ սարկաւագն, որոյ կինն բոզնայ՝ նա թէ թողու զբոզ կինն՝ նա կարէ երեց լինել, թէ այլ կին չառնու եւ ոչ զայն ուննայ, որ բոզցել է – 62. Եւ այս հանչաք էր գրած ի կանոնքն, ու այլ յառաջ չէր գնացած, զոր թէ գնացած էր՝ նա պատեհ էր: – 62. Եւ թէ ի քաղաքն եպիսկոպոս կենայ, նա չէ պատեհ, որ քաղաքի երեցն առանց եպիսկոպոսին հրամանացն ժամ այնէ – 63. Եւ թէ որ իր ձեռնադրաւ եպիսկոպոսին հակառակի՝ եւ զուրբ եկեղեցոյ մուտքն յանպատեհ տեղ մտնէ, նա նզոված է ի սուրբ հայրապետացն: – 64. Ապա թէ եկեղեցական լինի, նա ընդ սուրբ եւ առաքինի կարգաւորացն դասն փարի. եւ թէ աշխարհի երեց է, նա արժան է ընդ հարկետր գիտունքն եւ ընդ մատուորս պարոնութեան ըստ իւրաքանչիւր կերպի յարիլ ի բարին – 64. Բայց ու տեսուչ են եպիսկոպոսացն, որ թէ անպատեհութիւն այնեն՝ նա ընդ կաթողիկոսն եւ ընդ պատրիարքն ասեն: – 64. Ու իշխեն պատարագ այնել եւ մկրտել եւ տալ խաղաղութիւն. ու թէ եպիսկոպոս չկենայ, նա արհնեն իսաչ, եւ թէ հրամանք տայ՝ նա մեռն էլ արհնեն – 66. Եւ թէ հրամայէ քահանայն, նա եւ սարկաւագուհիք էլ կարեն ձեռնադրել – 66-67. Եւ թէ հայրապետն հրամանք տայ, նա ու մեռն այլ կարեն արհնել, վասն զի եպիսկոպոսութեան արձումն ունին: – 67. Բայց այս այնէ, զոր գրել է առաքեալն՝ թէ յանձն առնեմ ձեզ զՓիբէ՝ քոյր մեր՝ որ է սպասաւոր եկեղեցոյն: – 67. Եւ թէ որ վասն արեւ եկեղեցոյ շինման իրք տայ յաշխարհական կամ ի քահանայ, եւ նա չշինէ, նա առնու այլվայ զիր ինչքն եւ տայ յայլ որ շինէ. եւ թէ ոչ՝ յայլ շէն եկեղեցի տան տուրք, նա ընդունելի է, բայց եպիսկոպոսովն: – 71. Եւ երբ եկեղեցոյ շինելն հարամ է ու մեղք, նա զայն դուր գիտացէք, թէ ինչ է: – 71. Եւ դեռ պատեհ է, որ խրատ տալով յանդիմանեն, եւ ապա՝ թէ չլսէ՝ նա փոխեն: – 72. Եւ թէ որ գայ եղբայրութիւն եւ փաւշմանի, նա կարէ այլվայ առնուլ զիր իրքն ու ելնել – 72. ապա թէ ի նոյն եղբայրութիւնն ազգ ուննայ կամ ընկերակից, նա հարն եւ եղբարցն տեսով եւ հաճութեամբ կարէ տալ չաք մի իր, որ այլվայ ի միաբանութեան տեղն կենայ: – 72. Եւ թէ երեսնայ որ կայ որ յեղբարցն որ շատ լինի հալծել ի վանքն ու ծառութիւն այրել քան զմէկայլն, նա թէ արելի բաժին ուզենայ ... նա տան իր ու հաճեցնեն զինք յիր գործ – 73. Եւ թէ վասն այնր որ տրտնջայ եղբայրն, նա կու հրամայէ արէնքս՝ որ զնորա գործն ի յայն տրտնջաւոյն տան՝ որ այնէ – 73. Եւ թէ վնաս լինի ի յանաւթն, նա վճարէ: – 73. Եւ որ չառնու զԱստուծոյ վճարն, թէ թագաւոր լինայ եւ թէ դատաւոր, նա յԱստուծոյ եւ ի ժողովրդենէ առցէ զվրեժն: – 74. Եւ այս է դատաստանն նոցայ, թէ հարուստ լինայ եւ թէ տառապեալ – 74. Եթէ որ ընդ անզէտս հաղորդի անսուրբ, նա պատեհ է տեսնուլ զմարդն՝ թէ ինչ մարդ է եւ կամ յինչ հասակի, իսկ է թէ իսելաւք որ հաքրեց ու արար վասն պղծութեան, թէ չգիտէր, թէ յահուէ, թէ զինչ ցեղ էր: – 74. Զի եթէ որ զՔրիստոս անարգէ, նոյն է՝ եւ զեկեղեցի եւ զխաչն եւ զհաղորդն եւ զմկրտութիւն, եւ թէ անարէն լինայ, նա մեր է վրէժխնդրութեան. եւ թէ քրիստոնէ է, եկեղեցին քննէ, եւ զոր պարտն է՝ ի դարպասն տայ որ դատէ: – 74. Ապա թէ հուքրելով լինի վասն

պղծութեան՝ դու արա նմա զէտ զանարգանացն որ գրեցաք – 74. Եւ թէ ընդ անգէտսն արար, նա հինգպատիկ կարգ քաշէ քան զարժանն: Նոյնպէս եւ թէ վասն ահու, նա դեղդրեն զնա զհտնական վարդապետք: - 75. Կու հրամայէ արեւնքն, որ զքահանայի տունն եւ զապրանք չգնէ այլ ոք՝ ու ի ներս կենայ, քան թէ պաշտանեալ եկեղեցոյ – 75. Եւ թէ ուսցնաւ լինի տառապեալ՝ նա թէ իր կամաւքն զիր վարդապետն քընքշեցնէ եւ տայ իր իրք իր կամաւք, նա այն հերիք է հոգեւոր սերմանաւդացն որ զմարմնաւոր հունն ժողովեն: - 77. Ու թէ չայնեն զայս աշակերտքն, նա վասն այնոր կու անհանգստեն զիրենք վարդապետներն, եւ թէ դատըստնին թէ՛ զմեր իրիկունքն առի, ու զմեզ չաւգտեցուցին՝ նա կու հրամայէ, որ ինչվի յետի փողն ի յետ տան – 77. Եւ թէ կարող լինին տերքն տղայոց՝ նա զհանդերձն մէն տան – 77. Գրած է ի Սովսեսի յարեւնքն, որ թէ ոք ի ծառէ ի վայր ընկնի ու մեռնի՝ նա զծառն կտրեն – 77. Եւ թէ եկեղեցոյ կամ ի տանէ քար ընգնի եւ մարդ սպաննէ, նա՝ թէ տուն լինի՝ քակեն զինք, ապա թէ եկեղեցի՝ նա մայր է մեր եւ իր սուգն իր հերիք է - 78. Եւ թէ անսուն քշտէ եւ սպաննէ զմարդ՝ նա զանասունն սպանեն եւ ձգեն, եւ չուտվի: - 78. Բայց թէ կենայ ճարակ՝ նա պատեհ է, որ եպիսկոպոսն զամենն եկեղեցոյն ի շէնքն տայ կամ ի վարդապետանոց եւ կամ ճշմարիտ գերէտորոց: -78. Ուխտի տեղ զինչ ու լինի՝ թէ եկեղեցի եւ թէ խաչ, նա ի յում վիճակ լինի որ եպիսկոպոսն տըլել լինի եւ ծառութեամբ լինի գրել՝ նա պատեհ է որ ծառութեամբն աղէկ ծառայէ, որ թէ հեռու լինի ի շինոյն: Եւ թէ ի մաւտ՝ նա քահանայքն ծառայեն, ու զիր մուտքն ի յիր վերայ հանեն եպիսկոպոսին տեսովն – 79. Եւ թէ երկուքն են վատ՝ նա նորն դնէ, որ հանգչի այն ուխտն եւ չլինի փոխանակ ուխտի անհանգստութեան տեղի: - 79. Եւ կու կապէ արեւնքս, որ ի կապալ չհանէ կամ ի յայտ ցեղ իրք եկեղեցին կամ դարպասն. թէ ոչ, որ զայս այնեն, նա նզովք առնուն յԱստուծոց՝ ով որ այնէ - 80. չիշխէ քրիստոնէ որ ի հասակ լինի հասել՝ նա աւագ հինգշաբթի արն զատկի քան զհաղորդն եւ զնշխար այլ աւելի իրք ուտել. թէ չէ՝ նա նզոված է: - 80. Եւ թէ յանդգնի յայս եպիսկոպոսն՝ նա ձգվի ի կարգէն: - 80. Ապա զայնոք որ մարդիկք դնեն, նա՝ թէ հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլվայ իրենք եկեղեցովն եւ ամէն բնակչաւք երկրին կարեն աքսորել: - 81. նա հրամայէ արեւնքս, որ այնպիսիքն, որ յԱստուծոյ լինին՝ նա Աստուած մէն կարէ զինք աքսորել, թէ լաւ է ու թէ վատ: -81. Բայց թէ որդիք կենայ թագաւորին, որ ի յայն թագաւորութիւնն լինին ծնածք՝ նա այնոք չեն մեղկան – 81. Ապա թէ իշխանքն իրենց իշխան լինին շինել, նա իրենք կարեն զիրենց դրած իշխանն ձգել ու խրատել եւ այնել զինչ կամին. ապա թէ թագաւորն լինա/դրել/, նա չկարեն ձգել, քաւել թէ թագաւորովն. նոյնպէս եւ թէ նախարարն լինի՝ նա իր ընկերքն դատէ զինք, եւ առանց իր ընկերաց չկարեն ձգել զնա - 82. Եւ թէ վասն փրկութեան աշխարհի կամենան զթագաւորն խրատել կամ մեռցնել՝ նա չկարեն իշխանքն. այլ հրամայէ արեւնքս, որ առանց այլ թագաւորի եւ հայրապետի չկարեն այնել, քաւել թէ այլ թագաւոր ու հայրապետ կենայ ու երկիրն առ հասարակ

հաւնին: - 82. Ապա թէ ուրդի՝ որ վասն անհնազանդ լինելոյ կնկանն անհանգստութիւն կենայ յիրենց մէջն, նա կու տայ հրամանք արեւնքս, որ բաժնեն երբ այլ ճարակ չկենայ – 84. Ապա թէ կեցցնեն ծնաւորն՝ որ ի յայրկանն տունն լինի լել, նա համբերէ է տարի. թէ բժշկի՝ նա լել բարի ու թէ ոչ նա թողու զինք իրաւանքն, եւ առնու իր այլ կին, եւ տղայ թէ կենայ՝ նա հարն է: - 85. Եւ թէ դիւահարութիւն հանդիպի այրուկնոջ՝ նա պատեհ է, որ աղէկ քննեն եւ ստուգեն, որ սուտ չլինի վասն ատելութեան: - 85. Եւ թէ յառաջ լինայ ցաւո ղիպել, որ այրիկն չլինայ լսել՝ նա ի ծնաւորն դառնայ, եւ ի յուխտերն նոքա թող ծախվորին, զի յիրենց տունն է լել առջեւ. թէ բժշկի՝ նա այրկանն է, եւ թէ ոչ՝ նա հանբերէ այրիկն քանի կարէ, եւ տայ զիրեն ամէն ինչքն՝ զոր բերել լինի եւ տուայր չկայ – 85. Եւ թէ դիւահար կինն այլ կանուխ տայ հրամանք այրկանն քան զելթն տարին, թէ՛ առ քեզ կին՝ նա ազատ է, կարէ առնուլ: Նոյնպէս է եւ թէ այրիկն դիւահրէ: - 85. Բայց թէ իսկի կեցցնի՝ որ գիտացեալ լինան յառաջ եւ յախպով հաւնել ու առել՝ նա չբաժնէ զիրենք քանց մահն: - 85. Եւ թէ նեղածն կանուխ տայ հրամանք եւ կամ պոման դնեն, եւ զինչ ու դնեն նա կարեն դնել մէկ դիհն եւ մէկալն, ու այն ընդունելի է: - 86. Այլ եւ թէ կինն ծառայ երթայ – 86. Եւ թէ ծառայ երթայ կինն յայրկանն ի տանէն՝ նա զգինն այրիկն տայ. եւ թէ ի ծնաւորաց եւ կամ ի յեղբարց, նա նոքա տան: - 86. Ապա թէ լինի անբժշկելի բորոտութիւն եւ կամ գողութիւն հանդիպի եւ կամ պիսակութիւն՝ թէ այրկան եւ թէ կնկան, նոյնպէս եւ հետ տարոյն ազատ են: - 86. Եւ թէ հետ տարոյն չգտնվի, ու տղայ չկենայ՝ նա դառնայ պոռոյքն, նոյնպէս եւ տուայրն՝ թէ այրիկն լինի տուել. ապա թէ տղայ կենայ՝ նա պոռոյքն տղային է, չդառնայ – 86. Ապա թէ ի կնկնէն լինի՝ նա չտայ այրիկն մագ մի՝ ոչ պոռոյք եւ ոչ մահր – 87. եւ ապա հետ այնոր՝ թէ այլ իսկի, բնաւ ճարակ չկենայ՝ նա թէ յայրկանէն լինի պատճառն, նա երբ բաժնեն՝ նա այրիկն չկարէ առնուլ այլ կին, քան կենդանի կենայ այն որ թողվաւ – 87. Ապա թէ երկուքն իրար հալալ այնեն, նա եպիսկոպոսին բաժնին յիրամէ, ու դնէ իրենց կարգ եւ տուգանք. զինչ որ Աստուած յիր սիրտն ծագէ: - 87. Վասն թէ ատեցվոր լինեն մէկն ու մէկն – 87. Եւ թէ ատեցվոր լինին մէկումէկն՝ անմեղանք՝ առանց բոզութեան՝ նա պատեհ է յերկար ժամանակ փնտռել – 87. Ապա թէ յայրկանէն լինայ պատճառն, նա զպոռուզացն յերեք բաժնէն մէկն տուգանք տայ կնոջն իր անձինն զին, որ թէ կոյս լինի զինք առել. ապա թէ ոչ նա չտայ: - 87. Եւ թէ ի կնկնէն է պատճառն՝ նա հայրն ուննայ զտղայքն, եւ առնու այլ կին – 87-88. Եւ թէ վասն բոզրածութեան լինի անհանգստութիւնն ի յայրուկնաց մէջն ... նա կու հրամայէ արեւնքս որ բաժնեն: - 88. Ապա թէ այլ իրաւք աղէկ ուննայ զկինն, նա վասն բոզրածութեան չկարէ թողուլ կինն զայրն – 88. Բայց չկարէ այն՝ որ պատճառաւորն է՝ այլ ամուսնանալ. թէ ոչ /ծն.չիք/ նա, որպէս Քրիստոս հրամայեաց, շնութիւն է համարած: - 88-89. Ապա յայրկանն հայրենեստներոյն վերայ էլ պիտի հայել ու տնտղել, թէ վասն ինչ իրաց կու ուզէ ժառանգ, կամ թէ ունի հանչաք մի ստացուածք, որ աժէ զպատուիրանազանց լինելն – 89. Ու թէ չայժենայ

ինչ դեղն՝ նա հային յայրն ու կինն. ու թէ գիտացեալ լինայ ու առել՝ նա չկայ բնաւ բաժինք – 89. քաւել թէ կինն կամենայ, ու հաշիւ այնեն ընդ իրար՝ որ դնէ զինք ի տուն ու տայ զիր ամեն պէտքն ու ինք առնու այլ կին – 89. Կին որ ամուլ լինի եւ տղայ չբերէ՝ նա պատեհ է բժշկաւք տեսնուլ եւ իմանալ՝ թէ ի յոր դեհաց է, ի յայրկնէն՝ թէ կնկնէն: - 89. Եւ թէ ցաւ ինչ կենայ՝ նա ջանան դեղերով: - 89. Ապա է տարի է պոմանն որ համբերէ, թէ հարուստ լինի ու թէ տառապեալ: - 89. Եւ թէ կինն այլ այրկան չկամենայ լինալ՝ նա ի յոր տեղ ուր կենայ կինն՝ նա պարտի այրիկն, որ զիր ապրանքն տայ զայն կնկանն եւ զհագնելիքն՝ անսղալ քանի ապրի – 89. Եւ թէ ի քրիստոնէութենէն ելնէ, եւ ճշմարտի, որ չլինի ըզորդ ի հաւատն, զայն երբ ստուգեն, ու այլ ճար չկենայ՝ նա բաժնվի իրանաւք – 90. Եւ թէ ծուռ բան այնէ այրն ընդ կինն պղծագործութեամբ հետ այլ ումէք, որ ստուգվի եւ թէ ընդ անասուն մեղանչէ ... նա բաժնվի իրանաւք – 90. Եւ թէ ուրդի, որ վասն ատելութեան լինի լել բաժնվել, որ այրիկն լինայ թողել զկինն. ու գնացել լինայ կինն՝ առել այլ այրիկ ու մեռել. եւ յետ այնոր հաշտի այլվայ այրիկն, եւ ուզենայ այրիկն, որ առնու զկինն՝ նա պատեհ է, որ տան ուրախութեամբ: - 90. Այրիկ մարդ զինչ ու լինի, որ հեռանայ յերկրէն, թէ ի վաճառ երթայ կամ թէ ծառայ ընկնի, ու համբաւն ելնէ թէ /ծն.եթէ/ մեռաւ, նա է տարի պատեհ է, որ համբերէ կինն: - 90-91. Եւ ո՞վ զիտէ՝ թէ փաւշամնի այրն ու գայ, նա թէ կամենայ կինն, նա շատ դատաստան ու իրաւունք կարէ ուննալ ի յիր վերայ, որ անարգեց զպսակն եւ կոխեց: Ապա թէ ոչ, նա իր շնորհաւորէ: - 91. Եւ թէ անհանգստութիւն լինի ի յայրուկնաց մէջ, եւ վասն խորթերոյ լինի պատճառն՝ նա պատեհ է, որ թէ պոմնով չլինի շակել այրիկն զխորթերն՝ ի մաւր առնուլն, նա տան զխորթերն ի յազգն, որ հանգչին: - 91. Եւ թէ այրիկն երթայ յիրմէ, եւ առնու իր այլ կնիկ՝ նա թէ ու լսէ կինն նա պատեհ է, որ զայն է տարի համբերէ, եւ ապա առնու այրիկ: - 91. Եւ ի վերայ այսր ամենայնի հարցնեն ընդ կնիկն, եւ զոր այր ուզէ, հետ այնոր երթայ. ու թէ որդիք կենայ, նա ի հայրն տայ: - 91. Եւ թէ յետ է տարոյն գայ այրիկն. ու գտնու այլ այր կնկանն պսակով՝ նա թէ անպսակ է, նա առնու առջի այրիկն զկնիկն անսղալ: - 91. Յետ այնոր որ ստուգէ կինն, թէ մեռաւ, եւ ապա յետ էտարոյն կարէ առնուլ այրիկ: - 91. Ապա թէ ի յայրկանն գէշ բարուց լինի, նա հայնց տուգնէն զայրիկն, թէ զիր կնիկն անպատեհ ծեծէ կամ քշտէ, զէդ երբ զաւտար կին ծեծէ՝ նա ծեծեն ու զնդանեն: - 92. Եւ թէ չըզորդի, նա բաժնէն իրանաւք – 92. Նոյնպէս եւ թէ կնիկն պատահի պեղծ՝ է նա մէկ է իրաւունքն: - 92. Ապա թէ ազգ մի լինի՝ որ փաւշամնի, նա պատեհ է, որ հաւատարիմ կինն ջանայ ի յետն – 93. Նոյնպէս եւ թէ կինն լինի՝ մէկ է: - 93. Եւ թէ վասն անհաստատութեանն կամ տվայտութեան, կամ թէ այրն բոզրած էր ու պեղծ եւ նա վասն այնոր թողցաւ եւ եսպան զինքն՝ նա զէդ մեծ մարդասպան է պատեհ, որ զինք տուժի ... ապա թէ ոչ, որ նա զիրն աղէկ ունէր՝ ու անկարիք կայր ... նա այտոր դատաստանն եւ քաւութիւնն այլազգ է ու այլ թեթև: - 93. Բայց ի մարմնաւորն այս է, որ թէ ոք զկինն եւ զցուլն ի յիր տուն իւէչ իրար գտնու, ու

սպաննէ՝ նա անդատապարտ է ի դարպսէ - 94. Ապա թէ զմէկն սպաննէ ու զմէկն թողու, նա զէդ մարդասպան դատեն զինքն - 94. Եւ կամ թէ զիր կինն ասէ զոք, եւ յիր սիրելեացն հոգցի ի խէչն տայ երթալ, ու զկինն սպաննէ անմեղ զէդ մեղկան - 94. Ի յայս տեղս նամասն հայնց կու հրամայէ՝ թէ՛ մենք եկեղեցականքս հոգոյ դատաստան եւ խնամք եմք դրել աստ - 95. Ապա թէ կին զայրիկն սպաննէ՝ մահադեղով կամ կախարդութեամբ կամ զինչ ցեղ ու լինի, եւ կամ թէ ցլու տայ սպաննել՝ նա սուրբ եկեղեցին ի հաւտ խնամաւք է գնացել ու կամատ քաւութիւն է դրել - 95. Վասն զի թէ զայս թուութիւնդ ուննան կաննին՝ նա շատք մեռնին ի կաննոյ ձեռաց, ու առաւել հեծելվորքն՝ որ ուննան զգրաւդին ան ու զչարկմուն - 95. Վասն զի թէ մարդ զոք մի աւտար առանց դատախազութեան սպաննէ՝ նա զինք նորա փոխան չարամահ կու այնեն - 95-96. նա պատեհ է ստուգութեամբ քննել զճշմարիտն՝ թէ կինն զցուլն է հարկել ու խաբել, թէ ցուլն զկինն: - 96. Ապա թէ կինն լինի խաբել զցուլն՝ նա խրատն ու մեծ տուժանք ի կնկանն դեհն է - 96. Եւ թէ ցուլն զկինն լինի խաբել ու բերել ի յայլոց տուն՝ նա յայս տեղս արենքս դժար սաստ է հրամայել, զի գրել է որ մեռնի, կամ ի պակասն զձետն կտրեն, առաւել թէ ի կահրայ բան լինի այրել: - 96. Ապա թէ անայր կին լինի լել, եւ խոստացել լինայ թէ՛ պսակվիմ ընդ քեզ, ու այնով լինայ խաբել զկինն՝ նա ճարն է որ պսակվի - 96. Նոյնպէս եւ թէ ընդ անասուն բռնեն. կտրեն զերկուքն զձուքն եւ զձետն, եւ ապա յեկեղեցին տան որ քաւէ: - 96. Եթէ ոք զկոյս աղչիկ բռնէ, եւ ուժ այնէ, եւ զինք ի յանձնէ հանէ՝ նա թէ խնամէխաւսւած լինի՝ նա դատաստանն զէդ կարգծին լինայ, որ գրեցաք: Եւ թէ ոչ՝ տայ հաւրն յիսուն դրամ, ու պսակվի ընդ ինք անբաժնելի: Ապա թէ չկամենայ՝ նա կտրեն զձետն: - 97. Եթէ ոք ասէ զկինն, եւ ասէ թէ՛ չգտայ զինք կոյս, եւ վկայնով սուտ ելնէ այրն՝ նա ծեծեն կուշտ վասն կնոջն քաշնացն - 97. Ապա թէ իրաւ լինի այրիկն՝ նա արենքն զմահ կու հրամայէ աղջկանն: - 98. Բայց թէ կարէ դատաւորն ծածկել ու հաշտեցնել՝ նա իր կամ է. եւ թէ ոչ՝ թողու, եւ իր այլ կին առնու, եւ զայն ազգն այնեն զինչ ուզեն: - 98. նա առնու այրիկն սալքարով մի, ու գրէ ի վերայ՝ թէ՛ ես ֆրլանս ... կու ապահարգեմ ի յայս անուն կնկնէս - 98. Եւ թէ այն այրն այլվայ առնու զինքն՝ նա չկարէ քաւել թէ եպիսկոպոսին հրամանաւք: - 98-99. Ու թէ այս փնթոյս ու անսգամիս արձագելն վասն այնոր է սահմանած արձանագրով, որ ամէն ազգ պատճառանաց դատաստան կարէ ոք տանել կնկանն - 99. Վասն որ թէ երկու երիկ յիրար կռիւ մտնին ու կնիկն մօտէ թափէ - 99. Կարէ արինաւք քահանայն մկրտել զյղի կին, որ թէ մահու կարիք կենայ - 99. Բայց թէ ներեն՝ նա զզինն տայ ըստ արժանեացն: - 99. Եւ թէ կենայ կին՝ որ այրկանն քրշտէ՝ նա զձեռն կտրեն - 99. Ապա թէ դառնայ՝ նա իր այնելոցն կարգ դնեն որ ապաշխարէ - 100. Եթէ ոք կին ուննայ, ու չկարէ ի հետն այրկութիւն այնել՝ նա չէ պատեհ որ կինն զինք ի փրթման թողու. թէ չէ՝ կարէ արինաւք այլ այրկան լինիլ: - 101. Եւ թէ յայն միջոցն այն թողած կինն մեռնի՝ նա բնաւ ոչ կարէ յեկեղեցի մտնել - 101. Վասն թէ ոք կոյս հանէ յանձնէ հաւրն կամաւք - 102. Ապա թէ ընդ այլ ոք լինայ

ինսամէխաւսած աղչիկն՝ նա ծնաւորն զնորա փաւշամնչէքն տան, եւ լմնցնեն զնրա պոմանն: - 102. Ապա թէ բոնվին՝ նա գտանաւորին զձուրն եւ զձէտն կտրեն - 103. Եթէ որ զարկնէ պտղաւոր կին, եւ նա ձգէ զտղայն, եւ թէ դեռ անկերպարանք լինի եւ խլինք՝ նա կէս տղայի վճարէ ցհայրն - 103. Ապա թէ կերպարանք ուննայ տղայն՝ նա անձն ընդ անձին տուծի, թէ ընդ հայրն չհաշտի եւ ընդ եկեղեցի: - 103. Զինչ փաւշամնելոյ զրոյց կայ՝ թող առջեւ հոգան այրն ու կինն, առաջ որ մտեն ի յեկեղեցի. զի՝ թէ մտեն ու յետոյ փաւշամնին նա. այլ չկարեն ամուսնանալ - 104. Վասն թէ չէ պարտ բաժանել իրիցու ձեռնտվածն - 104. Եթէ աւագ սարկաւագի մահ հանդիպի՝ նա կինն չկարէ բնաւ այլ այրիկ առնուլ պսակով, նոյնպէս եւ թէ կինն մեռնի՝ սարկաւագն զեղ երէց է համարած: - 104. Եթէ իրիցու ինսամութիւն հանդիպի այրկան ընդ աղչիկն՝ համարձակ ձեռնտալով՝ նա չկայ հրաման, որ վասն այնոր թէ յայլք հաճի, կամ թէ իր այլք շատ իրք տանին՝ նա կարէ փոխել զձեռնտվածն. քաւել թէ բոգութիւն այնէ, ու կեցցնեն ի վերայ առջնոյն: - 104. նա կարէ թողուլ զկինն ու ասել, թէ ես չունէի զիմ հասակն ու չգիտէի - 105. Վասն թէ յինչ հասակ պսակ լինի - 105. Ապա թէ տեսնուն. որ վասն այրկանն պղծութեան լինի...նա զայրիկն աղէկ ըղորդեն դարպսու սաստով եւ եկեղեցոյն, ու երեշխաւոր տայ որ այլ չայնէ, եւ ապա հաշտեցնեն զիրենք: - 105-106. ապա թէ մէկայլ այրկէն տղայ կենայ՝ նա ի հայրն տան. եւ ինք զիր կինն առնու անպատճառ, քաւել թէ չլինի եկեղեցոյ կամ: - 106. Ապա երբ փախաւ՝ թէ բոգցել լինայ, եւ կենայ յայրկանն ի վերայ այլ պատճառ՝ նա հաշտեցնելն է կամ բաժնելն - 106. Եթէ այր կնկան հանդերձ հագնի՝ նզոված է, եւ թէ կնիկ զայրկան՝ նոյնն է - 106. Ու թէ ատէ զնոյն կինն՝ նա չկարէ ուննալ զինք զէտ ծառայ, ապա ազատէ զինք, բայց ոչ առանց բոգութեան պատճառանաց - 107. Բայց թէ կտրիճ չկենայ, եւ փեսայ լինի առած ի տունն՝ նա փեսայն իր կնովն որդոյ տեղն ունին - 108. Եւ թէ որդիք կենայ դստերացն, կամ զինչ ու լինին՝ փեսայ կամ այլոք, որք՝ ի դուրս են ի հաւրն սերմէն՝ նա այնոնք ժառանգ ոչ լինին - 109. Եւ թէ կարգածք կենան ի դստերացն ի յայլ տուն՝ նա այնոք երկու քոյրն մէկ քուրոջ բաժին առնուն իրենց: - 109. ապա թէ դիաթէկ այնէ՝ նա զինչ գրուաւ ի հաւրէն՝ նա յայնոր այլ որ չկարէ յաւելցնել եւ կամ պակսեցնել: - 109. Եւ թէ գրէ կտակ, եւ զիր ծառայն իւր ժառանգ դնէ՝ նա կարաւոյ է հայրն զանհնազանդ որդիսն զրկել, եւ ծառայի տալ ըստ իր կամաց: - 109. Բայց թէ կարգած եւ բաժնած դստերն լինի ժառանկ՝ նա հաւրեղբայրն մէն ի չորք բաժնէ զմէկն առնու - 110. Եւ թէ կինն մայր լինի որդոց ու թէ աւտար մաւրու՝ զիր պոռոցն եւ զմահրն առնու, եւ թէ պիտի՝ կենայ ի իւէջ որդեցն. ու թէ ոչ՝ նա ելնէ առնու իր այրիկն եւ զինչ կամի՝ զայն այնէ: - 110. թէ ոչ որդի կենայ եւ ոչ դստերք եւ ոչ ի նոցանէ թոռունք՝ նա յեղբայրն եւ յեղբաւորորդիքն հասնի, ինչվի յիրենց չորս երեսք թոռունքն. եւ թէ այսոք չկենան՝ նա ի հաւրեղբայրն եւ ի հաւրեղբաւորորդիքն ի չորս երեսքն յիշվէ հայրենէտրութիւնս: - 110. Բայց թէ կտրիճին թոռ կենայ՝ եւ ուրդի, որ թոռինն հայրն չկենայ, նոյնպէս եւ թէ յաղջկանէն կենայ թոռ՝ եւ մայրն չկենայ՝ նա

թոռունքն ժառանգեն – 110-111. Ապա թե թոռունք չկենան՝ նա երբ հայրն կենայ՝ նա հայնց ժառանգ է հայրն որդեցն, զեղ որդիքն հաւրն՝ անդիմադարձ – 111. Ապա թե թոռանց հայրն կենայ կամ մայրն՝ նա որդի է. դուստր ի մաւտ է քան զթոռն ի ժառանգութիւն. եւ այլ ի յետ ի յիր յագգն երթայ. եւ թե այսոք չկենան՝ զոր գրեցաք: - 111. Ապա թե կինն աւտար այրիկ լինի առել, եւ չկենայ տղայ՝ նա ի կնկանն ի յընչիցն ի չորք բաժնէն զմէկն տան այրկանն, թե կալել լինի զայն զկնիկն, եւ ի յանձնէ հանել. ապա թե ոչ՝ նա զիր իրքն մէն առնու ու ելնէ: - 111. ու հաշվէ, թե մայր մի կենայ ի տունն եւ աղբայր մի ու քոյր մի նա դու զերկու դանկ ու կէսն աղբարն տուր ... եւ մնայ դանկ մի՝ զայն մաւրն տուր – 111. ու թե չկենայ առել կին որդին՝ նա զիր հարսնից ծախքն ի խառն միջեւնէն ի յետ հանեն – 112. Այս ամէնս անճարկութեան ճարակ է գրած, որ թե դիաթիկ չայնէ հայրն. զի թե դիաթիկ այնէ՝ նա ամէնն ջրեցաւ, եւ այն է զոր հայրն տայ: - 112. Եւ թե ծախէ եղբայրն զիր բաժինն՝ նա պատեհ է, որ ամէնն յիրաց վերայ բաժնէն ըստ գնոյն, եւ ոչ մէկն միայն, բայց սիրով լինի: - 113. Զի գրեալ է յաւրէնսն՝ որ՝ դեռ թե որդին արհամարիէ զհայրն եւ ի յուխտ եւ կամ աստուածպաշտութեան կարգ երթայ՝ առանց հաւրն հրամանացն՝ նա նզոված է յԱստուծոյ եւ յաւրիւնացս: - 113. Զի թեպէտ և Քրիստոս հրամայեաց թե՝ որ ոք եթող զհայր կամ զմայր, եւ զայլն որ ի կարգի՝ բայց կու հրամայէ արեւնքս որ զեղ ինք Քրիստոս հաւր կամաւ արար զինչ եւ արար յերկրի՝ նոյնպէս եւ որդին պատեհ է որ զինչ այնէ՝ հաւրն կամաւք այնէ. թե ոչ՝ նա չէ ընդունելի առաջի Աստուծոյ եւ նզոված է: - 114. Կու հրամայէ Մովսէս Աստուծոյ բերանով՝ թե որ քրջտէ հաւրն եւ իր մաւրն՝ նա մեռանի, կամ անարգէ կամ բամբասէ՝ մեռցի, քաւել թե տղայեկ լինի հայնց, որ իսկի չզիտենայ թե ինչ արար, եւ իր ծնաւորն եւ որ տեսանն չհամարեն ընդ սգայութենէ՝ թե ոչ, որ ի դարպասու դատաստանն ելեն ծնաւորն՝ նա անհնար է իրաւնաւք մեռնի: - 114. Հարցանէն յաւրէնքս վասն անընկմահու՝ թե լինի իրենց թաղումն կամ պատարագ. նա կու հրամայէ թե՝ աղէկ բարակ հետաքրքիր պիտի լինել – 114. հայնց որ, դեռ թե հայրն կամենայ զինք պատրան տալ որդւոյն ի մեղանքն՝ նա չէ պատեհ առնուլ – 115. ի քո լաւն է, թե մեր խրատուս լսես: - 116. Վասն թե ոչ է իրաւունք մտանել ի տուն գրաւկանն – 116. Ապա թե դնես՝ դու վճարէ, վասն որ չլսեցիր իմոյ խրատուս: - 116. Կու հրամայէ արեւնքս թե՝ մի՛ դներ պոխստիմոն եւ մի՛ գրավ վասն քո ... երկու երկնաքարերի թե որ է լավ կամ կտրուկ: - 116. Եթէ քեզ ոք պարտք պարտենայ՝ նա մի՛ մտեր ի յիր տունն՝ որ ընդ ներքս ուր էր գրաւկանն գրաւկնել. զի արեւնքն զայնպիսի այնելիքն հաւնաւվորումն է համարել. քաւել թե դարպասուն հրամանաւք եւ թե դեռ ու մարդ այլ ուզես ի հետդ՝ նա պատեհ է: - 116. Գրած է յաւրէնքս, որ թե ոք գրաւով զմարդոյ տուն կամ զտեղ կամ զհայրենիք շահի՝ նա տէրն որ կորոյս, թե յիմեցնէ ի յինք չտալով, հայնց որ հարկ լինի իր, որ ի դարպաս երթայ ու դարպասով առնու, նա չէ թե զայն մէն կորսնէ զոր կորոյս, ապա ու զյիմեցնելոյն զխաստն վճարէ, զամէն աւուր, զոր յիմեցուցել լինայ. քաւել թե պարտնութեան հրամանաւք

լինայ այրել գլխեցնելն եւ դարպսով: - 117. Այսցեղ լինի եւ թէ կենդանի իրք լինի գրան եւ թէ ի հանդերձից կամ այլ իրք զինչ ու լինի - 117. Եւ թէ ունաւոյն իրացն ուրանայ ու ասէ՝ թէ չէ, իմ է, հանչաք որ տէրն իրաց ի հարկ ընկնի որ երթայ վկայ բերէ եւ վկայնով եւ դարպսով կեցցնէ, որ իր է իրքն - 117. Եւ թէ ոք չարկամ յիշվէ ումեք իրք տանի, եւ հանդիպի երթալ այլվայ շահել կամ դարձնել զիրքն, նա կու հրամայէ արեւնքս որ ամէն իրաց տէր, որ զիր իրքն ճանչէ եւ կեցցնէ վկայնով եւ երդմամբ որ իւրն է իրքն՝ նա առնու անյապաղ զիր իրքն - 118. Եւ թէ լինի որ տեղոյն կամ տանն կամ իրացն տէրն ասէ ընդ մարդ, թէ՛ ձգէ կրակ կամ կոտրէ կամ արա զինա բանն՝ զինչ ու լինի, եւ ճորտն այնէ՝ նա չպարտի ճորտն իրք, պարոնին է մեղանքն՝ որ զվզենն վճարէ: - 118. Ապա թէ առանց հրամանաց այնէ՝ նա վճարէ այն որ արարն: - 119. Նոյնպէս եւ թէ անսուն կոտրէ կամ կորսնէ կամ պակսեցնէ՝ նա վճարէ. զի կու հրամայէ արեւնքս՝ թէ երբ զգրակնուն կամ զպոխստիմոնին վճարն հայնց ուժով կու տայ առնուլ, նա որչափ եւս առաւել զկորսնելոյն կամ զվատնելոյն հրամայէ վճար լինել - 119. զի չէ թէ ուժն գոր կու այնէ՝ այն կնկանն է, այլ դարպսուն է, վասն այնոր որ ամէն այրի ի դարպսուն պահն է: - 119. Եթէ ոք մի տուն վաճառէ՝ ծախէ կամ գնէ պարսպաւոր քաղաքի ընդ ներքնէ՝ նա յիր պոմանն թող լինի իր վճարն. եւ թէ չլինի, ու տարի մի յիմէ՝ նա կարաւղ է տան տէրն այլվայ առնուլ զիր տունն, եւ գնորա՝ զինչ որ տուել է, նա դարձցնէ: - 119. Բայց դատաւորքն պատեհ է, որ հային ի յայն գնաւոյն, թէ յաղքատութենէ լինի պատճառն՝ նա ներելով այնեն դէպի ի հարուստն: - 120. Ու թէ տանն ծախաւոյն մեռել լինայ ու կամ գնաւոյն՝ նա որդիքն եւ ազգն կարեն դարձցնել հետ տարոյն: - 120. Ապա ջաղացք եւ խանութք եւ հայնց իրք, որ կապալ բերէ՝ նա չէ պատեհ որ յիմէ վճարն, ապա վճարէ կամ մենակ դարձցնէ, քաւել թէ տիրոջն կամաւք լինի յիմելոյն պոմանն: - 120. Զի թէ գողունի լինի ու գտվի, ինչվի տարի մի ի յետ դառնայ, նոյնպէս եւ թէ քշտան լինի ու բեռին գրաստ լինի՝ նա դառնայ յետ կամ ի գնոջէն ի վայր երթայ՝ որն որ պատեհ լինի ու հաւնի ունաւոյն - 121. Բայց ըղորդ գրաստոնոյ վաճառն այս է, որ եւալթն ար փաւրձէ, թէ հաճի՝ նա իր է անդարձ, եւ թէ ոչ՝ նա ի յետ տայ: - 121. զի կու հրամայէ արեւնքս, որ թէ ինչվի տարի մի ի յայն պատճառնին գտվի՝ նա դառնայ ի տէրն, եւ առնու զիր դրամն: - 122. Նոյնպէս եւ կովն. թէ քշտան լինի, կամ ամուլ՝ նա դառնայ յետալթն արուրն փորձէն եւ ի պոմանն, որ դրվի ի վերայ: - 122. Ապա թէ հարուստ է ու զատական՝ նա մենակ պարտի այնել զվճարն ի ժամ. զի թէ տարին լմնայ, ու չլինայ վճարել, նա ի վճարն կարէ առնուլ զիր հողն այլվայ, ու տայ զինչ տուել լինայ ի գնողէն, թէ իր պիտենայ - 122. Եւ որ հող կամ գետին վաճառէ, թէ վասն տառապելութեան, որ ծախէ զիր գետինն, եւ գայ իր դրացին եւ ընկերն ու գնէ՝ նա ի պոմանն է իր համբերելն: - 122. Եւ թէ ոչ վասն տառապելութեան, այլ իրք պատճառի լինայ լել վաճառն՝ նա մէկ տարին է պոմանն: - 123. զի ինչվի յետոն տարին կարեն փնդուել ազգականքն՝ դարձցնել եւ կամ վճարել, եւ ետոն լուկ գրեցաք. թէ չէ յորդից յորդիք, կամ վճարի

գինն թխթով եւ վկայաւք, կամ դառնայ ծախսածն: - 123. Եւ որ մեղուք վաճառեն, նա թէ աշունն լինի՝ նա մեղրովն զեղ որ կայ ծախեն, կամ կըշռով դնեն պոման, կամ կոթրու: - 123. Թէ ի գարուն լինի ծախն՝ նա քսան աւր փորձէ գնաւոն, եւ զվճարն ընկերաւք եւ վկայաւք տայ ի պոմանն՝ զինչ ցեղ գուծն ու զելումուտն տեսնուն զմեղվացն: - 123. Ապա թէ աւելի լինի կոճակն՝ նա գնաւոյն քախտն է, չդառնայ: - 123. Թէ պոմանն կըշռով լինի, ու թէ պակաս լինի՝ նա ի գնողէն ի վայր երթայ, կամ վճարէ զպակասն - 123. Եւ թէ գնէ ի հայնց ժամ, կամ ծախէ ծախաւոն, որ չուննայ ելումուտ, նա անցած լինի, նա երբ ժամն գայ՝ նա ի ծախաւոն դառնայ. քայց ի վկայքն եւ ի պոմանն է հասել. թէ ի կերակրոյն կամ տարոյն պեղծութենէն անցնի՝ նա գնաւոյն է: - 123-124. Ապա թէ ոչ, նա թէ ընդ վատ լինելոյ կամ վատ թրծելոյ փրթի՝ նա վճարէ ծախաւոն զկարսի գինն եւ զգինոյն կէսն: - 124. Ով աման կամ անաւթ ինչ վաճառէ - զկարասն յառաջ կու գրենք - որ թէ ի նոյն տարին որ գնեց զիր գինին ամբողջ պահէ՝ նա լեալ է բարի: - 124. Վասն այգեց եւ այլ ազգ ծառոց զինչ ու լինի, որ թէ որ ծախէ կամ գնէ՝ նա թէ գնէ, եւ այն տարին զբերն սղալի, նա վասն այնոր չունի պացխուն ծախաւոն - 124. Ապա աղէկ պիտի իմանալ՝ որ դըրուստ ի վատ թրծելոյ լինայ պատճառն, եւ ոչ ի դիպելոյ կամ ի յայլ իրաց. թէ ոչ զամանն մէն վճարէ, նա հերիք է: - 124. Վասն ջաղցնոյ եւ այլ այնցեղ իրաց, երբ գնէ որ վկայաւք եւ հաստատէ թղթով՝ նա այլ չկարէ փաւշամնիլ՝ ոչ գնաւոն եւ ոչ ծախաւոն, քանց ամէն կազմութեամբն՝ գնաւոյնէ թէ շահի եւ թէ վզենկի, թէ կոտրի թէ այրի. նոյնպէս եւ թէ նա է՝ թէ տուն՝ թէ զինչ ու լինի իրք. ու թէ գողընվի իրք՝ նա նոյնպէս գնաւոյն է: - 125. Բայց թէ ընդ ծուլութենէ չփնտռէ գնաւոն զիրքն, եւ ի ծալն կենայ աւերն՝ նա գնաւոյն է - 126. ապա թէ տեսնու, եւ այպովն գնէ՝ նա իր է անդարձ: - 126. Կու հրամայէ Մովսէս Աստուծոյ բերանով թէ՛ մարդ որ զիր ընկերն խաբէ ու զարատ իրքն ընդ աղէկին ծախէ՝ նա անիծած է - 126. քայց ուր ծախ չլինի՝ նա չէ իրաւունք բաժ առնուլ. քաւել թէ ահուտ ճանպահ լինի, որ վասն պահելոյն իրենց իրաւունք առնուն ի վաճրակներոյն ի ճանպահն. թէ ոչ՝ նա կապլնին թագաւորաց տըվաւքն պատեհ է որ երթայ: - 127. Եւ զիտել պարտ է, որ այլ հալալ կումաշ չկայ եւ ոչ մուտք՝ քան զայն, որ մարդ իր թրովն շահի յանաւրինաց ծեծ, որ թէ ծախէ զիր բաժինն կամ տայ՝ նա ընդունելի է առ Աստուած եւ առ մարդիկ: - 128. նոյնպէս եւ թէ որդիքն ծախեն՝ նա հաւրն եւ հաւրեղբարցն ու քոյրվտոցն կամաւքն, զի թէ կամաւք չլինի՝ նա թէ և թուղթ ու ձեռնգիր լինի տված՝ նա ըղորդ ժառանգութիւնն չխանձրի եւ յորժամ գան ի դատաստան, նա առնու անսղալ: - 128. Բայց թէ ըղորդի բաժինք չբերէ առ պարոնութիւնն՝ նա գող է, ու հարամ է, զինչ պահէ - 128. Բայց թէ վասն աղքատութեան մարդ ընդ մարդ հաշիւ այնէ պոմնով, եւ տայ՝ թէ կալ զիսայ հայրենիքս, ու տուր ինձ զիսայ չաք դեկանս, ինչվի հանչաք մի ժամ՝ նա ի յայն սահմանեալ ժամն կամ ի յոր ժամ ուզէ՝ որ դառնայ ի յինքն իր պոմնովն եւ վկայաւք, նա կամ դառնայ ու կամ ազգ մի հաշտին ընդ իրար: - 129. Նոյնպէս եւ թէ որդի առանց հաւրն ու եղբարցն եւ կամ քոյրվտոցն կամաց եւ աւտրէ

եւ ծախէ. ապա որ կամաւք եւ աւտրէ ու ձեռնգրով ծախէ, նա հաստատուն է եւ
 անդարձ: - 129. Եւ թէ ողջնայ հիւանդն, նա չէ բռնած ի յայն -130. Եւ զխոստումն, թէ
 ելնէ՝ ինք կատարէ, եւ թէ մեռնի՝ նա հոգեբարձերն, զեղ, որ գրած է ի կտակն – 130.
 նա կոչէ զիր ծանաւթիքն եւ գնումիկոսն, եւ թէ ի գեղ լինայ՝ նայ զգեղջին երէցն – 130.
 Ապա թէ որդիք չկենայ ի մէջն, եւ առ իրար շատ լինին կեցել այրուկինք՝ նա գոր
 լինի հոգւոյ կնոջն՝ լինի տիարթկովն, եւ որ չլինայ՝ նա կնկանն յետմնացացն է: - 130.
 Ապա թէ բաժնած լինի, եւ կնկանն ճանչած ի յետէ նա իր ժառանգաւոր
 յետմնացացն լինի, գոր դնէ: - 130. Ապա թէ տղայ լել լինայ՝ նա՝ թէ կենայ տղայն ու
 թէ ոչ, նա այրկանն է ամէն իրք ու այրիկն հոգայ զհոգին եւ այս է ըզորորդն /ճիշտը՝
 զըզորդն/ եւ ի հին արինացն հաստատուն, թէ առջին այրուկին է՝ եւ թէ այլ
 հետինու ի հետ: - 131. Եւս առաւել թէ քիչ լինին կեցել խէշ իրաց այրուկինք, ու
 տղայ չկենայ՝ նա ամէնն դառնայ, եւ այրկանն ի հաւն բաժին չկայ: - 131. Բայց թէ
 մէնակ ժամնէ մահն, հայնց որ դեռ կինն չլինի գիտացել՝ նա ոչ կինն իրք այրկան է,
 եւ ոչ այրկանն կնկան: - 131. Եւ թէ իսկի տղայ լել լինայ ի մէջն՝ նա՝ թէ ու մեռել լինի
 տղայն, նա այլ չդառնայ իրքն յետ, այլ այրկանն է - 131. Ապա երբ այրիկն լինի որ
 մեռնի՝ նա զիր հոգւոյն բաժինն ի յիր ընչիցն այնել ըզորդ է. նոյնպէս եւ զկնկան ի
 յիրոյն, ի կնկան. եւ թէ տղայ կենայ՝ նա երկուքին ի ժառանգ: - 131. Բայց դարձ
 իրացն թէ լինի՝ նա հարսնից ծախքն չդառնայ, եւ ոչ յիշուի բնաւ: - 131. Եւ թէ
 կարգել լինայ զինք գնաւդն, ու որդիք էլ ուննայ նա այն գնաւդին է: - 132. Եւ թէ
 փաւշամնի՝ ու այլվայ դառնայ ծառայն առ իր տէրն ու ասէ թէ՝ տուր զիմ կնիկ ու
 զտղայքն՝ նա եկեղեցւոյն վկայութեամբ կարէ զինք ծառայ ուննալ մշտնջենաւոր
 ինչվի մահն: - 132. Եւ թէ որ քրիստոնէ ծառայ գնէ յանարինաց՝ նա ծառայէ
 զգնաւդն է տարի – 132. Յաղագս ծառայից՝ ի թագաւորաց նամաւսն գրել ենք ի
 յառաջ - եւ այս եւ այն մէկ է - որ չկարէ որ ծառայն ժառանգեցնել, քաւել թէ
 պարոնին եւ եկեղեցւոյն կամաւք – 132. Եթէ կնկով լինի մտել՝ նա կնկով ելնէ եւ
 որդովք. եւ թէ ինքն մէն՝ զինչ ցեղ գնվել է: - 132. Եւ թէ տաճիկ ծառայ գնէ որք, եւ
 ուզէ ծառայն որ քրիստոնէ լինայ նա չկարէ արգելուլ – 132. Բայց թէ ժողվէ զիր
 զինն ու տայ յիր տէրն՝ նա պատեհ է որ վասն քրիստոնէութեան առնու եւ ազտէ
 զինք. եւ թէ չառնու ու ազտէ՝ նա երբ հանչաք մի ծառայէ զինք ու զիր զինն
 արժենայ, նա իրաւունք ազատէ ի ծառայութենէն: - 133. Ապա թէ կամենայ զինք իր
 պսակով կին այնել՝ նա կարաւղ է, եւ թէ իր որդոյ կամ ազգի կամ ճորտոյ տալ՝ նա
 պատեհ է, եւ թէ /ծն.գոր/ կարենայ նա պռուզէ զիքն: Եւ թէ ոչ՝ նա երբ հանչաք մի
 ծառայէ՝ որ զիր զինն հանէ, նա ազատի: - 133. Կու հրամայէ արեւնքս, որ թէ՝
 պառիկոս փախչի յիր պարոնէն՝ նա քանի այն պառիկոսն ապրի, նա կարէ առնուլ
 զինք պարոնն. ապա թէ մեռնի ի դուրս՝ նա զորդիքն չկարէ ի կահրա տանիլ, քաւել
 իր կամաւքն երթայ: - 134. Բայց թէ ի զարկուց ժամն չմեռնի, ու երկու ար ապրի՝
 նա այլ տուգանք չտայ, թէ յետեւ մեռնի – 134. Եւ թէ որք քրիստոնէ ծառայի զակն
 հանէ կամ խոռէ՝ կամ զակոսայն ձգէ՝ նա ազատէ զծառայն, զի զիր զինն էառ: - 134.

Ապա թէ տաճիկ լինի, ու ասէ թէ՛ ծախէ զիս՝ նա թէ զիր չաք զին բերէ՛ նա տայ. ապա թէ չբերէ՛ նա իր է: - 134. Եւ թէ ծառայ ոք ի տաճկաց փախչի՛ նա մի՛ մատնէր զինք - 134. Էթէ ոք կրակ ձգէ ու խանձ առնէ նա պատեհ է որ տեսնուն աղէկ թէ վասն է՞ր արար՝ չարկամութեամբ արար եւ կամ թէ ի՞նչ ցեղ, եւ թէ կամաւք ու յոչ կամայ - 135. եւ թէ չուննայ զայն վզենն դեկան վճարէ: - 135. եւ թէ կամաւք էր ու վասն չարութեան՝ նա զվզենն վճարէ ու կամ զինքն այրեն եւ թէ յոչ կամաց՝ ի հեռուէ բերէ հողմն՝ նա զկէսն, եւ թէ ի մաւտէ՛ նա միատակ վճարէ: - 135. Եթէ ոք մարդոյ իրք տայ ի պահ, ու գողնվի՛ նա տեսնուլ պիտի թէ կայ իր գողցած իրք ի հետն թէ ոչ, եւ երդմամբ փնտռեն. նա թէ իրն էլ լինայ տարվել ի հետ՝ նա թող երկուքն զգողն փնտռեն, ինչուր գտնուն. ապա թէ իրն մէն լինի տարածն՝ նա այդ ի կասկած է, նա համբերութիւն տայ, որ զգողն փնտռէ. ու թէ չգտնվի՛ նա ի յերդումն է եւ ի կիսավճարն - 136. Եթէ ոք գրաստ կամ ընջուղ ուննայ, որ քշտան լինի, ու ասեն թէ հան զինքդ ի քենէ, նա չհանէ, որ քշտէ ու մարդ սպաննէ՛ նա քարկոծեն զինք եւ զիր տէրն ... ապա թէ այլ չլինայ քշտել՝ նա զանասունն մէն քարկոծեն: - 136-137. Ապա թէ մարդ սպաննէ՛ նա տայ զարեան զին, կամ զինք սպաննեն նորայ փոխան. բայց թէ ցորեկ լինի՛ նա զկէսն վճարէ. նոյնպէս եւ թէ հարբած լինի մարդն եւ ի հորն ընգնի: - 137. Նոյնպէս եւ թէ անսունքն զիրար սպաննեն, նա թէ ասցած լինայ նորա՛ թէ բռնէ զքո անսունն՝ քշտան է, եւ նա չլինայ բռնել՝ նա զայն անսունն ի սպանծին տէրն տան եւ զէդ զինք անսնոյն առնու - 137. ու թէ չլինի ասած՝ նա ծախեն զքշտանն, եւ ի կէս այնեն ընդ երկուքն: - 137. Եթէ ոք զիր հորն բաց թողու, եւ անսունն ընգնի ի ներս՝ նա զայն կոտրած անսունն առնու հորոյն տէրն՝ եւ զէդ որ էր անարատ՝ վճարէ նորան թէ անսնով եւ թէ դրամով: - 137. Բայց դեռ այլ կայ ի քշտանքն՝ որ թէ ասէ տէրն, թէ ի յետ քշտան է՛ նա զկէս վճարէ թէ մահ գործէ, եւ թէ խոց՝ նա զդեղզինն տայ ինչվի առողջնայ: - 138. Եթէ ոք զմարդոյ գրաստ պատռեցնէ՛ նա վճարէ. եւ թէ հրամնաւք լինի հեծել՝ նա զինչ արժենայ միատակ վճարէ, եւ թէ անհրամանք՝ նա կրկին: -138. Եւ թէ յիրոցն սպաննէ՛ ազատ կամ ծառայ՝ նա ապաշխարութեամբ քաւէ զինչ վարդապետն կամ եպիսկոպոսն կարգ դնէ նորա: - 138. Բայց թէ իսկի ներողութիւն լինի՛ որ կարէ զծառայն ազատել եւ յետ դարձնել՝ գողնալով կամ գնելով, ինքն ինչվի մահ ապաշխարէ ի զնդանն, նա այդ ի դատաւորին կամքն է - 138. Մարդ որ քրիստոնէ գողնայ, եւ տանի՛ անաւրինաց ծախէ՛ նա անհնար է ի հին արինաց թէ ապրի: - 138. Եւ թէ տէրն չյայտնի սպանծին՝ նա չկայ այլ տուգանք. ապա թէ տէր գայ՝ նա զարիան զինն այն շէնն վճարէ՛ որ ի մաւտ լինի: - 139. ու տան թաղում այնել, թէ քրիստոնէ լինի: - 139. ու չափեն թէ ի յոր շինու ի մաւտ է սպաննածն - 139. Եւ թէ ուրդի, որ ի խաղալն տղայք զիրար սպաննեն՝ նա պատեհ է տեսնուլ զսպաննաւորին հասակն. թէ հայնց, որ քան զտասնուերկու տարին ի վեր լինի՛ նա զէդ մարդասպան տուժեն զինքն ապա թէ տասնումէկ տարոյ լինի՛ նա զկէսն - 139. Եւ թէ վնասէ տղայ զտղայ եւ ի վնասելն խոցէ կամ կոտրէ նա նոյնպէս ի հասակն հային ու ի խոցն, եւ զդեղզինն յայնոր

վերայ դնեն: - 139. Նոյնպէս եւ թէ լողնալն զիրար խեղդեն ի մխելն՝ նա պատեհ է որ ի հասակն հային եւ ի յայնոր չաքն - 140. Այլ թէ տղայք տղայութիւն անեն, եւ գրաւով ի բարձր տեղաց ի վայր վազեն, ու մահ լինի, նա ի տղայոց յարեն ու ի չաքն հային՝ զէր գրեցաւ: - 140. Եւ թէ ի զգայութեան հասակ լինան՝ նա կէս տուժանացն եւ կամ տուգանացն լինի այնոր՝ որ տայր գրաւ յընկերն զի գրաւ դնէր. եւ թէ խոցնայ՝ նա դեղգինն ըստ տղայի հասակն լինի: - 140. Բայց թէ մեծ լինին՝ նա կէս մարդասպանութեանն է - 140. Եւ թէ գրաւով ծանր իրք վերցնեն՝ կամ ուժփորձուկ այնեն ... նա որ յորդորէ զմէկայլն ի յայն բանն, ու վնասել տայ զընկերն, նա նոյնպէս եւ նա կէս վնասուն տէր է - 140. Թէ մահ կենայ՝ նա յիմնան պատճառն եւ զմախանքն թէ յումնէ է. թէ հայնց որ յայնոր է պատճառն՝ որ սպանվաւ՝ նա զարեան գինքն տան. եւ թէ սպաննաւոյն է լել պատճառ՝ նա զէր սպաննաւոյն գինքն դատեն՝ զէր որ գրած կայ ի շատ տեղ: - 141. Եւ թէ խոց լինի մահու՝ նա քշտաւոյն տայ զդեղգինն - 141. Կու հրամայէ արեւնքս՝ որ թէ զայնոր ձեռքն կտրեն, որ քաւէ զսպաննութիւնն զոր արար՝ նա ի դատաւորին կամքն է, թէ վասն իր հոգոյն խղճայ եւ խրատ մէն տայ: - 141. Կու հրամայէ արեւնքս, որ թէ որ կենայ ու երթայ իր ճամբովն, եւ այլք կենան ու պահեն զճանապարհն՝ որ սպաննութիւն այնեն կամ գողութիւն, ու այն հալալ գնացաւոյն յաջող լինայ ու զնոքս սպաննէ՝ նա չէ արեան պարտական, այլ գովելոյ եւ աւժիթք տալոյ է արժան: - 142. Եւ թէ քահանայ լինի հարամոյն սպաննաւոյն, նա վասն այնոր թէ ինք առջընդրեց ու եսպան զայն՝ որ զինք կամէր սպանանել ու զայլքն սպանել էր՝ նա չկորսնէ զերիցութիւնն - 143. ապա ինքն յայնցեղ մահով մեռանի զէր այն տղայն, թէ այր եւ թէ կին՝ եւ թէ երկուքն: - 143. Բայց վասն եկեղեցոյն հնազանդութեանն պարտի մեղայ ասել խոստովանահարն՝ եւ թողութիւն առնուլ, թէ քրիստոնէ լինի - 143. Ու դնեն ի յինք նշան, որ թէ այլ այնէ՝ նա մեռնի - 144. վասն զի հնոյն հրամայածն այս է՝ թէ /ծն.եթէ/ զինչ քեզ պեղծ է, դու քո ընկերին մի՛ առնէր, եւ Քրիստոս զհինն ի նորս վերանորոգեց, թէ մի՛ առնէր ումէք, չար փոխանակ չարի: - 144. Ամ մի՛ այնէր. ու թէ այնէ, որ զայս՝ նա դատաւորք արինաւք զնոյն պարտին արբուցանել անաւղացն: - 144. Բայց թէ ի զին հանեն դատաւորք զքշտածին կամաւք զիր զարկան՝ նա թէ կտորած զաւղված կենայ՝ զինչ ու լինի, կամ ակոյայ ձգած, նա ԻԶ մթիսալ ոսկի դեկան է զինն՝ յիստակ ոսկի: - 145. Եւ թէ զարկն մարդոյ ի խալապայն, որ պեղծ զարկան ուննայ, եւ հետ այնոր տեսնուն իսկի որ զարկածն էլնէ ի շուրջ կու գայ՝ նա թէ այլ յետեւ մեռնի, նա էլած է քշտաւոյն ի մահուն պարտուցն ի դարպսէ եւ ընկած է ի յեկեղեցոյն պարտն եւ ի յապաշխարութիւն, որ քաւէ - 145. Եւ այլ կու հրամայէ արեւնքս որ թէ մարդ ուժ այնէ տառպել՝ մարդոյ, եւ զիր վարձն ի յիր պոմանն չվճարէ՝ կամ կտրէ, ու գայ դատըստնի տառպելն, նա դարպասն վճարել տայ - 145. Եթէ մարդ դատած լինի ի մահ վասն պատճառանաց, եւ ուրդի որ ինք ընդ ինք մեռանի, նա վասն այնոր թէ մեռավ չէ պատեհ թողուլ զինք - 146. թէ հալալ մարդ է պահաւոյն, նա կիսավճար այնէ. ապա

թէ ընդ ցորեղ դնելոյ լինայ գողնալ տված՝ նա ի լման վճարէ: - 147. Եւ թէ գողցել լինայ ի նիւթոյն՝ նա դարձցնէ, եւ դատվի զեղ գող՝ զինչ որ հրամայած է վասն գողերոյն: - 147. Եւ թէ ի ցեցէ կամ այլ կերչաց կերած լինայ ի պահ տվածն՝ վասն յիմելոյ՝ նա վճարել կու հրամայէ իրաւունքս զպատեհն - 147. Եւ թէ գրակնած լինի որ կորսնվի՝ նա վճարէ: - 147. Եւ թէ չարկամ յիշվէ կամ ծեծէ ու տանի՝ նա չտայ վճար: - 147. Ու թէ կորսնէ՝ նա վճարէ: - 147. Եւ թէ գող գողնայ, եւ ճշմարտի պահաւորն, որ զիրն էլ լինան գողցել՝ նա անպարտ է՝ չվճարէ պահաւորն. Բայց թէ զայնոր մէն լինան առել ու զպահաւորին թողել՝ նա պատեհ է որ մանտր փնտռէ դատաւորն եւ զճշմարտին իմանայ - 147. Բայց թէ կրակ ընկնի ի չարկմէ կամ հասարակաց այրեցմանէ՝ ու այրէ՝ նա չտայ վճար. ապա թէ ի պահաւորէն ընկնի կրակն՝ նա վճարէ զիրաց տէրն: - 147. Բայց թէ առանց տիրոջն հրամանաց առնու եւ վնասէ նա վճարէ: - 148. Եւ թէ զտիրոջն յիւր բանն կոտրէ՝ նա չտայ վճար: - 148. Եւ վարձկան, որ յունէ տիրոջն ի բանն սարված կոտրէ, չտայ վճար. ապա թէ իր կամաւք վնասէ՝ նա վճարէ: - 148. Եւ թէ ոք անհոգցնէ զմովսատրայն՝ եւ յուղարկէ զմարդ, ու մեռնի՝ նոյնպէս մահապարտ է: - 149. Կու հրամայէ արեւնքս, որ թէ ոք ի քրիստոնէից ի յիր ընկերոջ երկիր յիշվէ ու ծեծ այնէ, նա մահու կորուստ բերէ - 149. Ապա թէ տէրն յայն բանն յուղարկէ զմարդն ... ու վնասի՝ նա այն պարտական է եւ մահապարտ: - 149. Այլ կու հրամայէ Մովսէս՝ թէ՛ մի՛ իւր զհնոց սահմանած սինաւոն քո սինաւոկցերոյն, բայց քո ըղորդութեամբ պահէ ըղորդ իրանաւք. հայնց որ թէ իւր լինի՝ նա իրանաւք դարձնէ ու առնու, եւ ոչ ուժով. եւ թէ ոչ, նա տուժվի ի դարպսէ եւ յիրանաց: - 149-150. զի Մովսէս է ասցել թէ երդվիր երդմամբ առ այնպիսին եւ կորոյ. բայց մեզ հրամել է Քրիստոս՝ թէ մի՛ երդնուլ. բայց թէ երդնու եւ կատարէ, նա թող ապաշխարէ եւ քաւէ: - 149-150. Եթէ ոք զումեք իրք հարամ ուտէ՝ նա թող չորս կրկին վճարէ, եւ ապա քաւի. եւ թէ ոչ՝ նա թող յաղքատս տայ, եւ ընդունած է: - 150. Եւ արուեստաւոր, որ զմարդոյ իրք գողնայ՝ նա չորստակ վճարէ զտէրն իրացն. եւ թէ ոչ նա թող յաղքատս տայ, եւ ապա քաւէ: - 150. Բայց թէ ակերակք լինի ու շինվի՝ նա զիր հին ճանչած սինաւոն ուննայ, եւ կամ նոր դնեն՝ հայնց, որ այլք չգրկվին, ինչվի լցվի - 151. Բայց տեսնուլ պիտի՝ թէ ի՞նչ ցեղ էր յուղարկելն՝ ինքն յաւժարեցաւ ի գնալն, եւ թէ ի կահրա յուղարկեցաւ: - 151. Եւ թէ ինք լինի յաւժարել, կամ հռոզվոր լինի այն բանին՝ նա չկա մեղ. ապա թէ ոչ՝ նա մեղք է: - 152. Եթէ ոք առուով ջուր տանի ի յիր բանին կարիքն, եւ իր կարեցն լուծէ զջուրն՝ որ այլոց վնաս այնէ, նա թէ արիացուցել լինայ զվնասուն տէրն՝ նա կիսավճար տայ իւրն ապա թէ ոչ՝ որ լակ լուծել լինայ եւ թողել անփոյթ՝ նա ի լման վճարէ. բահրակ թէ վասն չարութեան լինի այրել: - 152. Նոյնպէս եւ թէ վարձվոր լինի ի բան ինչ կամ ի գործ, եւ զգուշացնէ պարոնն ու ասէ՝ թէ՛ զիտայ պատրաստ արայ, ու նա չայնէ, ու վասն այնոր վնասի՝ նա անպարտ է: Ապա թէ ոչ՝ որ անխնամ երեստ որոգայթել՝ նա պարտական է: - 152. Բայց աղէկ յիմանալ պիտի /գրքում՝ պետի/ զպատճառն՝ թէ զիշերն է լել յանկասկած, թէ ի մշակէ է, թէ յի՞նչ

իրաց – 152. Նոյնպէս եւ թէ որ մարդ ի ծառ հանէ կամ քար, եւ կամ յանմուղ գրաստ՝ ի կահրայ, եւ մեռանի՝ նա արեան տէր է. ապա թէ իր կամաւք լինի եղել ու վարձով՝ նա անպարտ է: - 152-153. Եւ դեռ կարէ լինել, որ հայնց մեծ հարկ հանդիպի բժշկին, որ սղալէ ու չկարէ գալ առ հիւանդն, կամ որ վասն աղէկի դեղ տայ, նա պեղծ բերէ. նոյնպէս եւ թէ խոց լինի ճեղքել կամ կտրել կամ խարել: - 153. Եւ յայս ամենիս վերայ փնդռել պիտի եւ ճշմարտել, որ թէ կամաւք լինի սղալն եւ կամ վասն պզման՝ նա զեղ մահապարտ զինք սպաննեն: - 154. Եւ թէ ի դարպաս ընկնի, եւ կեցցնվի, որ ոչ ի կամացն է եւ ոչ յակամայն՝ եւ միջակ լինի սղալանքն՝ նա տուգնաւք եւ զնդանով դատեն զինքն ըստ արժանեացն – 154. Ապա թէ ի յոչ կամաց լինի, որ ինք խոստովանի՝ նա այն ապաշխարութիւն քաշէ: - 154. Եւ թէ մարդ փայտ կենայ ու կոտրէ, նա փրթի կացինն ու դիպի եւ մարդ սպաննէ. եւ թէ փայտ կամ քար գլէ, նա գայ դիպի ու սպաննէ, եւ կամ յայգոց կամ յաճոց պահել քարէ եւ սպաննէ. եւ կամ թէ ի քար լուծելն ի ծառ, նա անցնի ու դիպի եւ սպաննէ, եւ թէ փակչի ի ծառն ու ի հետ ժամանակի ընկնի ու սպաննէ զմարդն. եւ կամ թէ հայր գորդի ի վերայ խրատու քըշտէ, նա մեռնի ... կամ թէ ձիով դիպի, կամ թէ սայլ կոխէ եւ սպաննէ ... եւ կամ թէ մարդ, որ ի մարդասպներոյ ի մէջ ընկնի՝ եւ կամենան զինք սպաննել, նա դառնայ եւ ինք իր աջողվորութեամբն զնոքա սպաննէ՝ նա այս ի կամայն եւ յոչ կամայն ի խառն է բանս: - 154-155. Եւ այսոք այլ ընդ մահապարտք են համարած՝ թէ այր լինի եւ թէ կին, եւ մահու վճար առնուն: - 155. Նոյնպէս եւ այս այլ է յերկուքէն, որ զիտենայ որ՝ թէ զչարկամն կու սպաննէ ու զընկերն քշտէ եւ սպաննէ: - 155. Ամ թէ ի կանոնք ընկնի եւ յեկեղեցոյ խոստովանութիւն նա սպաննաւդացն կարգ եւ ապաշխարանք ճանչած են առ վարդապետերն: - 156. Եւ թէ ի դատաստան ընկնի՝ նա զինչ թագաւորք են սահմանել՝ նա այս է, որ թէ այլազգի կամ քրիստոնէ գորիստոնէ սպաննէ, ու չփաւշմանի, քանց ուրախնայ ընդ սպաննելն յինչ ազգ պատճառանաց վերայ ու լինի՝ նա կամաւոր սպաննութիւն է համարած – 156. Նոյնպէս եւ թէ յոչ կամայ լինի, եւ չարկամ չլինի, եւ որ խնդայ՝ նա դեռ կամաւոր է համարած, եւ երբ խիստ ողորմութիւն այնեն իր՝ նա զկէսն տուծի. եւ թէ սպկիկ յոչ կամայ լինի՝ նա կէսն է. նոյնպէս եւ թէ ի կամաց եւ յոչ կամաց լինի՝ նա այլվայ կէսն է տուժանացն: - 156. Եւ թէ կոտորի կամ խոց լինի՝ նա զբժշկին եւ զդեղերոյն ծախքն ինք տայ – 156. Եւ թէ ընդ խաղ ի ներք լինի՝ մէկ է իրաւունքն. բայց թէ ներեն վասն խաղուն՝ նա ի կէս լինի կամ յերեքէն մէկն: - 157. Եւ թէ ի կէս հասակն է՝ նա գտուգնաց զկէսն տայ վնասաւղն: - 157. Եւ թէ թուրք լինայ եւ ծիծաղել իշխէ ընդ քրիստոնէին կորուստն՝ նա տուգնվի զկէս արեան զինքն՝ զի է՞ր իշխեց ծիծաղել: - 157. Ապա թէ տղայ լինի՝ նա ի հասակն հայել պարտ է - 157. Նոյնպէս լինի եւ ապաշխարութիւնն, թէ ի դատաստան չընկնի. բայց թէ յիրաւունք ընկնի՝ նա այն է զինչ որ դարպասն այնէ զիրաւունքն: - 157. Ապա թէ յանկասկած փրթի, եւ ի փախչելն դիպի եւ մեռանի կամ վնասի՝ նա զկէսն վճարէ անաւրէնն, եւ թէ քրիստոնէ լինի յումնէ խրտաւ՝ նա զկիսոյն կէսն: - 157. ու թէ գայ ի դարպաս՝

իրաւունք է որ զնա վճարես – 158. Վասն թէ որպէս պարտ է զնոր տուն շինել – 158. Կու հրամայէ արեւնքս՝ որ ով նոր տուն շինէ՝ նա բոլոր ցւիցն պսակ դնէ, որ մարդ ընդ տան երդն ի վայր չընկնի ու մեռնի. թէ չէ՝ արեան տէր է, եւ յամէնն զինքն վճարէ: - 158. թէ ու սիրով լինի վնասն՝ նա դեռ չէ պատեհ ի փրթման թողուլ – 158. Ապա թէ վասն չարութեան լինի՝ նա պեղծ է, որ ի յայս իշխեց, եւ թէ բռնվի ի յայս մեղանքդ՝ նա պատեհ է զինք այն հրովն տուծել – 159. Եթէ ուրդի, որ մարդ իր կամաւք կրակ ձգէ՝ նա պատեհ է տեսնուլ, թէ ի խալտնաց կամ ի խումրութենէ է լել՝ կամ հարբած լինայ՝ նա այն այլ ցեղ է - 159. Եթէ ոք իրք անաւթ առնու մարդոյ ի բան վարձով՝ նա զվարձն տայ ու զամանն. եւ թէ կորսնէ կամ կոտրէ՝ նա կամ գտնու կամ վճարէ զինչ արժենայ: - 159. Ապա թէ յիշու այնէ, ու տանի զամբննին եւ առնաւորին այլ ի հետ՝ նա չպարտի վճար. եւ թէ զբանառածն մէն տանի՝ նա ընտրաւորութեամբ ապա վճարէ, թէ լինի ըստ արժանեաց կերպին, գոր այն ենք գրել: - 159. Եւ թէ գազանակեր լինի, նա թէ տան անսուն լինի ու տված լինի պոմնով որ ի տունն ունայր, ու ի դուրս եթող՝ որ կերվաւ՝ նա վճարէ: - 160. Բայց թէ երմկէն էլաւ ի դուրս՝ նա զգեղն վկայեցնէ, ու նշան ցուցնէ տիրոջն, նա ազտի: - 160. Ապա թէ վարձ է տվել պահելոյ՝ նա այլ վատահի իրաւնաւք պարտի զվճարն. զի զվարձն այնոր է տվել, որ պահէր եւ ոչ կորսնէր, եւ այս հայնցեղ, թէ զգողն չգտնուն: - 160. Ապա թէ գտնուն՝ նա զգողն տուծեն. եւ թէ ոչ՝ նա զեղ ի վերայ գրեցաք հայնցեղ լինի վճարն – 160. զի թէ հայրն մեռել լինի՝ նա որդիքն բնաւ վաշխ չպարտին տալ յոչ որ իրաւունք: - 161. Եւ յիմանան թէ այն ծառն քանի արժենայ, եւ թէ որչաք պտուղ կու տայր ի տարոջն – 161. Զի հայնց կու հրամայէ իրաւունքս, որ թէ ոք քշտէ անասնոյ՝ նա իմանան ըղորդ զգարկելոյն պատճառն. եւ թէ ի վերայ սրտի լինի եւ կամ վասն ռխակալութեան, եւ ի դուրս ի վնասէն՝ նա զայն զարկն իր քըշտեն գոր ինք անմեղ անասնոյն եզարկ – 162. Ամ թէ զղջայ ու յեկեղեցին դիմէ եւ ի կանոնքն՝ նա տան անուշութեամբ դարձնել զգրկանքն ու քաւել զմեղանքն: Ապա թէ ոչ՝ որ ի դատաստան ընկնի՝ նա տայ իրաւունքն դարձնել զուծն եւ ըմպել զբաժակն, գոր ինք ընկերին իմցոյց – 162. ապա թէ վնաս լինի՝ նա ի վերայ զարկուցն վնասն կտրվի ի դատաստանն. եւ թէ քշտէ, ու համբերէ եւ գայ ի դատըստն՝ նա զիր վճարն ըստ վնասուն այժեցն առնու – 162. Եւ թէ ի խոստովանութիւն երթայ՝ նա կանոնքս կու հրամէ՝ որ Ե տարի եկեղեցի չմտնէ - 163. Եւ թէ ուրդի սուտ վկայ ի վերայ մարդոյ՝ նա կու հրամայէ արեւնքս, որ՝ զինչ այն սուտ վկայութեամբն անմեղն պիտի որ տանջուէր, նա զինք տանջեն թէ մահու էր՝ թէ խրատելոյ՝ եւ թէ տուգնելոյ: - 163. Ապա թէ չայնես զպէտ ու մեռնի՝ նա որ տեսաւ ու չարար պէտն նա վճարէ: - 163. Նոյնպէս եւ թէ ոք գրաստ գտնու փրթած՝ նա պատեհ է բռնել, ու չառնու վարձ. զի թէ այսաւր դու քո ընկերին այնես նա յեգուց քո ընկերն քեզ այնէ - 163. Եթէ կենաս ու հնձես՝ դու պատրաստ հրնձէ, որ ի քո դրացնին արդէն ի հետ չհրնձես. թէ ոչ՝ նա հարամ է - 164. Կու հրամայէ արեւնքս՝ որ երբ ձագերով բոյն գտնվի ու զմայրն ի վերայ, կամ ի վերայ հաւկրթերոյն՝ նա մի՛ նենգել մարն, ձագերն

Ի ՄԵՂԱՅ ԳԱԼ - եւ զայնոք որ ի մեղայն /ծն.մեղայ/ գան եւ մեղացուք լինին, նա աւերէ զիրենց զաւրվածքն եւ չսպաննէ - 10.

Ի ՄԵՋ /մկբ./ - Տէ՛ս Ի ՄԵՋ

Ի ՄԵԿ - եւ ջամբել ի կաթին տեղ գտուրք մարմին եւ զարիւն հաւրն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ զոր վասն մեր էհեղ, եւ այնով միանալ ի մէկ, վասն զի և առաքեալքն ի մէկ կեցան եւ զմեզ ի մէկ ուսուցին – 41. եւ մէկ է ընդ որ կու երթան տաւնքն, եւ այլուի ի եկեղեցոյ ժողովումն գան՝ ի մէկ կաթուղիկէ եկլէսիայ եւ ի մէկ հաւատ ի Քրիստոս – 42.

Ի ՄԵԿ ՏԵՂ - Եւ երբ նոքա առնուն՝ նա գան եկեղեցականքն յեկեղեցին ի մէկ տեղ ու բաժնեն – 34.

Ի ՄԵՋ /մկբ.,նիս./ - նա տեսնուն որ ոյի չկենայ ի մէջն ու տնտղեն զամէնն: - 33. Ապա թէ անարեւնն զքրիստոնէ սպաննէ՝ նա վասն մեծ ատելութեանն, որ կայ ի մէջն՝ կու հրամայէ արեւնքս, որ անհնար մեռնի անարեւն սպաննաւոյն: - 33. Կու հրամայէ սուրբն Սահակ՝ թէ տգէտ եւ պեղծ մարդիկն բաժին կու ձգեն ի սուրբ եւ կաթուղիկէ վիմիս մեջ /ծն.մեջն/ - 40. Ապա թէ ուրդի՝ որ վասն անհնազանդ լինելոյ

կնկանն անհանգստութիւն կենայ յիրենց մէջն, նա կու տայ հրամանք արեւնքս, որ բաժնեն երբ այլ ճարակ չկենայ – 84. Եթէ տղայք կենայ ի մէջ /ծն.մեջն/, ու պատճառաւորն հայրն լինի՝ նա գողայքն մայրն ուննայ, եւ հայրն այլ կին չկարէ առնուլ առանց կնկան հրամանացն – 87. Եւ թէ վասն բոզրածութեան լինի անհանգստութիւնն ի յայրուկնաց մէջն ... նա կու հրամայէ արեւնքս որ բաժնեն: - 88. Եւ թէ անհանգստութիւն լինի ի յայրուկնաց մէջ, եւ վասն խորթերոյ լինի պատճառն ... նա տան զխորթերն ի յազգն, որ հանգչին: - 91. Եթէ երկու այրիկ յիրար լինան անցել ի կոթիւ, ու կնիկ իշխէ ի մէջ /ծն.մեջն/ մտել, որ մէկին աւգնէ ու խալապալայ այնէ եւ պատճառաւ որ մէկն զմէկալն ծեծէ կամ սպաննէ՝ նա կու հրամայէ արեւնքս որ ձեռն կտրվի այն կնկանն – 99. Ապա թէ որդիք չկենայ ի մէջն, եւ առ իրար շատ լինին կեցել այրուկինք՝ նա գոր լինի հոգոյ կնոջն՝ լինի տիաթկովն, եւ որ չլինայ՝ նա կնկանն յետմնացացն է: - 131. Եւ թէ իսկի տղայ լել լինայ ի մէջն՝ նա՝ թէ ու մեռել լինի տղայն, նա այլ չդառնայ իրքն յետ, այլ այրկանն է – 131. Եւ այսոնք են կամաւորք եւ ակամայք, եւ որ յերկուքին մէջ սպաննութենէրն: - 155. Եւ կամ թէ մարդ, ի մարդասպաներոյ ի մէջ ընկնի՝ եւ կամենան զինք սպաննել, նա դառնայ եւ ինք իր աջողվորութեամբն զնոքս սպաննէ՝ նա այս ի կամայն եւ յոչ կամայն ի խառն է բանս: - 155. Եւ մէկ պատն որ լինի ընդ երկուք ի մէջ՝ նա երկուքին լինի – 171.

Ի ՄԷՁ ՄՏԵԼ - Եթէ երկու այրիկ յիրար լինան անցել ի կոթիւ, ու կնիկ իշխէ ի մէջ /ծն.մեջն/ մտել, որ մէկին աւգնէ ու խալապալայ այնէ եւ պատճառաւ որ մէկն զմէկալն ծեծէ կամ սպաննէ՝ նա կու հրամայէ արեւնքս որ ձեռն կտրվի այն կնկանն – 99.

ԻՄՆ – Մարդ՝ որ վանից հրամանաւ բանադրած լինի վասն իրիք պատճառանաց՝ ու մահ գայ իր, նա չկարէ զինք երեց հաղորդել – 46. Եթէ ուրդի, որ իրիք /ծն.իրք/ մի չար պատահմամբ խաբվի ոք եւ զհաւատ քրիստոնէութեանն ուրանայ ... նա չէ պատեհ որ այլ իր ուղղափառ կինն ի հետ իր կենայ – 93.

Ի ՅԱՆՁՆԷ ՀԱՆԵԼ - Եթէ ոք զկոյս աղչիկ բռնէ, եւ ուժ այնէ, եւ զինք ի յանձնէ հանէ՝ նա թէ խնամէխաւաւած լինի՝ նա դատաստանն զեղ կարգծին լինայ, որ գրեցաք: - 97. Ապա թէ կինն աւտար այրիկ լինի առել, եւ չկենայ տղայ՝ նա ի կնկանն ի յընչիցն ի չորք բաժնեն զմէկն տան այրկանն, թէ կալել լինի զայն զկնիկն, եւ ի յանձնէ հանել – 111.

Ի ՅԱՌ ԱԾԵԼ - Եւ թէ քաղաք լինի տղարել եւ ի յառ ածել, նա երեք հետ պատեհ է որ ձենել տայ՝ թէ եկէք ի հնազանդութիւն – 9.

Ի ՅԵՏ - Եւ թէ առնուլ իշխէ՝ նա զրկանք է, թող ի յետ /գրքում՝ թողի յետ/ տայ թէ ոչ նա պատճառ է /գրքում՝ պատճառէ/, որ լուծվի յեպիսկոպոսութենէն – 31. նա կու հրամայէ, որ ինչվի յետի փողն ի յետ տան – 77. Ապա թէ ազգ մի լինի՝ որ փաւշամնի, նա պատեհ է, որ հաւատարիմ կինն ջանայ ի յետն /ծն.յիրն/, եւ քանի ու կարէ յորդորէ զինք՝ որ դառնայ յըղորդն, ու շահի զինքն. նա մեծ վարձք ուննայ: -

93. Եւ որ զայնոք ի շենամէջ պարտ է թողուլ բնաւ, այլ ի յետ՝ յիւրեանց սահմանած բնակութեանն: - 108. Եւ այլ ի յետ /ծն.հետ/ ի յիր յազգն երթայ - 111. ու թէ չկենայ առել կին որդին՝ նա զիր հարսնից ծախքն ի խառն միջեւնէն ի յետ հանեն- 112. Զի թէ գողունի լինի ու գտվի, ինչվի տարի մի ի յետ դառնայ - 121. Բայց ըղորդ գրաստնոյ վաճառն այս է, որ եաւթն աւր փորձէ, թէ հաճի՝ նա իր է անդարձ, եւ թէ ոչ՝ նա ի յետ տայ: - 121. Ապա թէ բաժնած լինի, եւ կնկանն ճանչած ի յետ՝ նա իր ժառանգաւոր յետմնացացն լինի, գոր դնէ: - 130. Բայց դեռ այլ կայ ի քշտանքն՝ որ թէ ասէ տէրն, թէ ի յետ քշտան է՝ նա զկէս վճարէ թէ մահ գործէ - 138. Եւ մեղանչելն կամաւք չէ քանց իրք, որ արհամարհէ որ զԱստուծոյ հրամանն եւ զդատաւորացն ու զիրաւանացն անն մոռնայ ու ի յետ ձգէ ի մտաց - 162.

Ի ՅԵՏ ԴԱՌՆԱԼ - Զի թէ գողունի լինի ու գտվի, ինչվի տարի մի ի յետ դառնայ - 121.

Ի ՅԵՏ ԵՐԹԱԼ - Եւ այլ ի յետ /ծն.հետ/ ի յիր յազգն երթայ - 111.

Ի ՅԵՏ ՀԱՆԵԼ - ու թէ չկենայ առել կին որդին՝ նա զիր հարսնից ծախքն ի խառն միջեւնէն ի յետ հանեն - 112.

Ի ՅԵՏ ԶԳԵԼ Ի ՄՏԱՑ - Եւ մեղանչելն կամաւք չէ քանց իրք, որ արհամարհէ որ զԱստուծոյ հրամանն եւ զդատաւորացն ու զիրաւանացն անն մոռնայ ու ի յետ ձգէ ի մտաց - 162.

Ի ՅԵՏ ՏԱԼ - Եւ թէ առնուլ իշխէ՝ նա զրկանք է, թող /գրքում՝ թողի/ ի յետ տալ, թէ ոչ նա պատճառ է /գրքում՝ պատճառէ/, որ լուծվի յեպիսկոպոսութենէն - 31. նա կու հրամայէ, որ ինչվի յետի փողն ի յետ տան - 77. Բայց ըղորդ գրաստնոյ վաճառն այս է, որ եաւթն աւր փորձէ, թէ հաճի՝ նա իր է անդարձ, եւ թէ ոչ՝ նա ի յետ տայ: - 121.

Ի ՅՈՉ ԿԱՄԱՅՆ - Բայց ամէն բանի լինելն որ երթայ՝ ի կամայն է եւ ի յոչ կամայն: 153.

Ի ՅՈՉ ԿԱՄԱՅՆ - Ապա թէ ի յոչ կամաց լինի, որ ինք խոստովանի՝ նա այն ապաշխարութիւն քաշէ: - 154.

ԻՆԱ, ԻՆԱՅ - յղարկէ՝ թէ շուտ գնա ի յինա բանն - 32. Եւ ժողովուրդն չէ իրաւունք որ ընտրեն՝ թէ ինչայ երէցն լավ է քան զիսայ - 34. արա զինա բանն - 118.

Ի ՆԵՐՍ - Եթէ որ զիր հորն բանայ՝ եւ մէնակ մարդ ի ներս /ծն.ներք/ ածէ, ու մարդն ի նգէն խեղդվի, նա արեան տէր է ածաւոյն: - 18. Կու հրամայէ արէնքս, որ զքահանայի տուն եւ զապրանք չգնէ այլ որ՝ ու ի ներս /ծն.ներք/ կենայ, քան թէ պաշտանեալ եկեղեցոյ-75. Վասն որ զիր հորն բաց թողու եւ անասուն ի ներս ընգնի-137. Եթէ որ զիր հորն բաց թողու, եւ անսունն ընգնի ի ներս՝ նա զայն կոտորած անսունն առնու հորոյն տէրն-137. Եթէ որ ընդ դիւահարութիւն ի ներս/ծն.ներք/ անխել եւ դիւուն միջնորդութեամբ մարդ սպաննէ՝ նա պատեհ է աղէկ ստուգել - 166.

Ի ՆԵՐՔ - Վասն որ որ զիր հորն բանայ եւ մարդ ածէ ի ներք՝ նա նիգն սպաննէ - 18. Մարդ որ մեռնի՝ նա ի մահուն ժամանակն ի հոգոյն բաժնէն պատեհ է՝ որ առաջ զիր եկեղեցոյն հոգայ, որ ի ներքն /ծն.ներք/ լինի կնքած եւ իր ծուխ լինի կեցել - 46.

Ապա թե ապաշխարե երկու տարի մեծ հնազանդութեամբ յեկեղեցոյն դուռն եւ ի ներք չմտնէ ու ելնէ հետ այլ ապաշխարաւորացն...նա ապա հաղորդութեան արժանի լինի – 61. Ու կարեն ձեռնադրել եպիսկոպոսունք, արհնել մեռն, բայց որ յայլ մեծերոյն մեռնէն մասն ուննան, որ խառնեն ի ներք /ծն.ներքս/ զեղ զխմոր իրք – 65. նա ընդ իր անն ի ներք դառնայ եւ զնա սպաննէ - 155. Եւ թէ ընդ խաղ ի ներք լինի՝ մէկ է իրաւունքն – 157.

Ի ՆԵՐՔՍ – նա Ե տարի ի դուրք կենայ ի յեկեղեցոյն եւ ապաշապարե, եւ երկուք ի ներքս անհաղորդ - 62.

Ի ՆԵՐՔՍԵԻ – Ու այն որ ի քաղաքի ներքսեւ է՝ կարե համբերել տարի մի ու այլ աւելի: - 120.

Ի ՆՈՐՈՅ - վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս – 4.

ԻՆՉ - եւ ընդհանուր զին արեան քրիստոնէին ԳՃ դեկան պերպեռատ է, եւ այլ ինչ որ մարդն լինի: - 10. Եւ ինչ շահ կենայ՝ ըղորդն այն է՝ որ զամէնն յիրուր քշտեն, ու կէսն թագվորին է՝ եւ կէսն այլ իշխանացն – 11. Եւ թէ ժառանգաւոր իշխան յիր երկիրն ծախվորի, եւ բերդ կամ ամրոց շինէ կամ այլ ինչ, նա վասն այնոր կու շինէ որ իր ու իր յետմնացացն մնացական մնայ – 14. Բայց ինչ ասեմ ես՝ ու կու գրեմ, չկարցի այլ ցեղ գրել քան զոր յարինակն գտայ – 27. զի նախնի հարքն հայնց են սահմանել, որ ամենին չիշխէ եպիսկոպոս յայլ եպիսկոպոսի գաւառ ու ի թէմ ոչ ինչ ազգ աւծումն եւ ձեռնադրութիւն այնել – 27. Աւագ եւ զլիաւոր կացուցած երէցն՝ զեղ եկեղեցապան՝ չէ պատեհ որ իր տանն ինչ գործ երթայ հոգայ՝ քանց զամէն զեկեղեցոյն եւ զժամհարելոյն – 35. զի մենք յայս կանոնս չհամարձակեցաք այլ ինչ գրել: - 36. Եւ որ վասն իրիք երկրաւոր բանից յայս իրք պակասեցնէ՝ նա սաստիկ պատուհաս կրէ՝ եւ ի կարգէն ընկնի – 38. Ամ ի՞նչ Քրիստոս զայդ ընդ Պետրոսի մարդկութիւնն հրամայեաց եւ ընդ այլ հետեւողացն, թէ՞ ընդ եկեղեցոյն քարն կամ ընդ փայտն: - 40. Ապա տեսէք՝ թէ այնոց պատիժն ի՞նչ է, կամ թէ երբ համբերեն իրենց կարաւորն՝ ինչ մեղք այնեն: -41. Բայց զայսչաքս պատեհ համարեցայ գրել՝ թէ ի՞նչ թարգմանի կաթուղիկէն եւ եկլէսիայն՝ որ է եկեղեցի: - 41. Բայց արդ ի՞նչ աւելաբանեմք – 42. Մարդ՝ որ վանից հրամանաւ բանադրած լինի վասն իրիք պատճառանաց՝ ու մահ գայ իր, նա չկարէ զինք երէց հաղորդել – 46. Կու հրամայե արեւնքս որ ոչ իրիցնին ի հարկտուքն խառնին եւ ոչ հարկտուքն յիրիցնին, ոչ ինամութեամբ եւ ոչ ինչ ազգ իրաւք /գրքում՝ իւրաւք/, վասն պարոնութեանն հարկուն – 49. Եւ իրք որ եկեղեցոյ լինի եւ եպիսկոպոսութեան, եւ իրիցնին եւ եկեղեցոյ բանհոգերն ծախել լինի՝ կամ այրել ինչ ի պետքս է նա երբ նստի եպիսկոպոսն՝ նա կարէ այլուի զամէնն առնուլ – 60. Եւ չկարէ որ յայլոց հող հակառակութեամբ եկեղեցի շինել, զի մեղք է. եւ երբ եկեղեցոյ շինելն հարամ է ու մեղք, նա զայլն դուք գիտացէք, թէ ինչ է: - 71. Եթէ որ ընդ անգէտս հաղորդի անսուրբ, նա պատեհ է տեսնուլ զմարդն՝ թէ ինչ մարդ է եւ կամ յինչ հասակի – 74. Եւ թէ ցաւ ինչ կենայ՝ նա ջանան դեղերով: - 89. Ու թէ չայժենայ ինչ /ծն. իրք/ դեղն՝

նա հային յայրն ու կինն – 89. Ապա յայրկանն հայրենեստներոյն վերայ էլ պիտի հայել ու տնտղել, թէ վասն ինչ իրաց կու ուզէ ժառանգ – 89. Եթէ ուրդի, որ իրիք /ծն.իրք/ մի չար պատահմամբ խաբվի ոք եւ զհաւատ քրիստոնէութեանն ուրանայ ... նա չէ պատեհ որ այլ իր ուղղափառ կինն ի հետ իր կենայ – 93. Վասն թէ յինչ հասակ պսակ լինի – 105. Կին՝ որ վասն մեղաց ի ծառութեան տարվի կամ ի յայլ ինչ, որ նման է սորա ... բայց զինչ ցեղ ու է, երբ գայ՝ նա զիր կինն անաղալ առնու – 106. Կու հրամայէ Մովսէս Աստուծոյ բերանով՝ թէ որ քրջտէ հաւրն եւ իր մարն՝ նա մեռանի, կամ անարգէ կամ բամբասէ՝ մեռցի, քաւել թէ տղայեկ լինի հայնց, որ իսկի չգիտենայ թէ ինչ արար – 114. Եթէ ոսկի կամ արծաթ կամ անասուն կամ ինչ /ծն.զինչ/ այլ իրք որ լինի կորուսած, ու տէրն վկայ բերէ կամ երդնու որ իւր է ու կորուսել է նա իրաւունք է, որ մենակ առնու զիր իրքն: - 117. Ով աման կամ անաւթ ինչ վաճառէ ... որ թէ ի նոյն տարին որ գնեց զիր զինին ամբողջ պահէ՝ նա լեալ է բարի: - 124. Էթէ ոք կրակ ձգէ ու խանձ առնէ նա պատեհ է որ տեսնուն աղէկ թէ վասն է՞ր արար՝ չարկամութեամբ արար եւ կամ թէ ինչ ցեղ, եւ թէ կամաւք ու յոչ կամայ – 135. Բայց տեսնուլ պիտի՝ թէ ինչ ցեղ էր յուղարկելն՝ ինքն յաւժարեցաւ ի գնալն, եւ թէ ի կահրա յուղարկեցաւ: - 151. Նոյնպէս եւ թէ վարձվոր լինի ի բան ինչ կամ ի գործ, եւ զգուշացնէ պարոնն ու ասէ՝ թէ զիտայ պատրաստ արայ, ու նա չայնէ, ու վասն այնոր վնասի՝ նա անպարտ է: - 152. Բայց աղէկ յիմանալ պիտի զպատճառն՝ թէ զիշերն է լել յանկասկած, թէ ի մշակէ է, թէ յինչ իրաց – 152. որ թէ այլազգի կամ քրիստոնէ զքրիստոնէ սպաննէ, ու չփաւշմանի, քանց ուրախնայ ընդ սպաննելն յինչ ազգ պատճառանաց վերայ ու լինի՝ նա կամաւոր սպաննութիւն է համարած – 156. նա պատեհ է որ աղէկ իմանան զպատճառն, եւ զտալն ու զյուղարկելն եւ թէ ինչ ցեղ էր, արտորանաւք էր, ու զհեծնաւորին գնացքն եւ զվարելն թէ յոր չաք էր, կամ թէ ինչ ցեղ վնասեցաւ կամ պատռեցաւ – 165. վասն զի ոչ ձիոյ երմակ եւ ոչ այլ ինչ չկարեն գոյանալ բնաւ – 170.

ԻՆՉՈՐ, ԻՆՉՈՒԻՐ – նա կու հրամայէ արեւնքս, որ ձգեն զինք ի դուրս յեկեղեցոյն եւ կորսնէ առ եպիսկոպոսն զկարգն, ինչոր /ծն.ինչոր/ ապաշխարութեամբ ելանէ ի մեղանացն ազատ: - 35. Նոյնպէս եւ թէ անպատեհ բանդրէ, նա զինք բանադրեն՝ որ ապաշխարէ. բայց կապածն՝ այն կապած կենայ ինչոր իր տան արձակել: - 56. Եւ տըֆնդէ սուրբ ժողովն մեծ կապանաւք, որ դեռ ոչ զեռսուն տարին մարդն չէ լցել՝ նա երեց չայնեն, ինչոր այլ աւագ լինայ ու զիր անձն փորձեն, ու ապա այնեն: - 63. Եւ կարեն ամենն ելնել ի վանացն, ինչոր /ծն. ինչ որ/ դատաստանն ուղղի՝ ու իրենց հայր գայ՝ որ ամէն հաճին – 73. Եւ զայնք որ վասն ահու կամ նեղութեան կամ վասն զատելոյ քրիստոնէ լինի՝ նա պատեհ է, որ ընդունի զինք եկեղեցին. բայց ոչ լման, ինչոր հաստատի ի հավատն: - 75. նա թէ իրն էլ լինայ տարվել ի հետ՝ նա թող երկուքն զգողն փնտռեն, ինչոր /ծն. մինչ որ/ գտնուն – 136. Եթէ ոք նոր գեղ շինէ՝ նա չէ պատեհ մենակ զհողերն սինաւռով բաժնել, ինչոր գայ ամէն մարդ ու

լցվի, ու նեղցնեն ի վերայ – 151. նա յամեն տարի զայն խաստն վճարե ի ծառին տերն, ինչուր նոր տնկածն ի յայնոր չաքն բեր տայ: - 161.

ԻՆՉՈՒԻՐ - ՏԵ՛Ս ԻՆՉՈՒՐ

ԻՆՉՈՒԻՐ, ԻՆՉՎԻՐ - Եւ արբեցաւն ու խալապարարն՝ ի դուրս ձգվի՝ ինչվի հայնց գոյ ի խելք՝ զեղ առաջնորդն կամի: - 38. Եւ բիճ՝ ոչ ինք եւ ոչ իր ծնունդն եւ ոչ իր թոռն ինչվի յերեք երեսն երեց չլինին ժամարար: - 38. Եւ վասն այսոր հրամայած է յարինացս, որ թէ ոք պահք խոստանայ, նա երթայ ի վանքն պահե, ինչվի լմննայ: - 44. Եւ հրամայած է, որ զինչ իսկ մարդ մեռնի, թէ հարուստ եւ թէ աղքատ, նա ամենեւին պառկելիքն ու հալան ինչուի գաւտին ու ի սաւերն ի վանքն երթայ – 44. նա զեղ հերետիկոս ձգեն զինք ի կարգեն ինչուի յաւիտեան: - 59. նա կու հրամայե, որ ինչվի /ծն.մինչ/ յետի փողն ի յետ տան – 77. Եւ թէ յայն միջոցն այն թողած կինն մեռնի՝ նա բնաւ ոչ կարե յեկեղեցի մտնել, եւ ոչ այլ կին առնուլ ինչվի ութ տարի հայնց ապաշխարե, որ զեկեղեցին հաւնեցնէ - 101. Եւ այլ հրամայե արեւնքս, որ այս հայրենետրութիւնս ի հարն դեհաց ինչվի չորս երեսն յիշվէ - 110. թէ ոչ որդի կենայ եւ ոչ դստերք եւ ոչ ի նոցանէ թոռունք՝ նա յեղբայրն եւ յեղբարորդիքն հասնի, ինչվի /ծն. մինչ ի/ յիրենց չորս երեսք թոռունքն – 110. Զի թէ գողունի լինի ու գտվի, ինչվի տարի մի ի յետ դառնայ – 121. կու հրամայե արեւնքս, որ թէ ինչվի տարի մի ի յայն պատճռնին գտվի՝ նա դառնայ ի տերն, եւ առնու զիր դրամն: - 122. զի ինչվի յեօթն տարին կարեն փնդռել ազգականքն՝ դարձցնել եւ կամ վճարել – 123. ու տուր ինձ զիսայ չաք դեկանս՝ ինչվի հանչաք մի ժամ – 129. նա եկեղեցոյն վկայութեամբ կարե զինք ծառայ ուննալ մշտնջենաւոր ինչվի մահն: - 132. ինքն ինչվի մահ ապաշխարե ի զնդանն – 138. նա զդեղզինն տայ ինչվի /ծն. մինչ որ/ առողջանայ: - 138. նա չէ պատեհ, որ յեկեղեցի Աստուծոյ սպասաւորութիւն այնէ, եւ ոչ պատարագ, ինչվի յեպիսկոպոսէն եւ ի վարդապետէն հայնց կարգ քաշէ՝ զոր պատեհն է, որ դնեն: - 142. Բայց թէ աւերակք լինի ու շինվի՝ նա զիր հին ճանչած սինաւոն ուննայ, եւ կամ նոր դնեն՝ հայնց, որ այլք չգրկվին, ինչվի լցվի – 151.

ԻՆՉՎԻՐ - ՏԵ՛Ս ԻՆՉՈՒԻՐ

ԻՆՉՔ - Եթէ այր եւ եթէ կին որ եկեղեցական լինի, եւ անորդի մեռնի՝ կամ անդուստր, եւ ի յիր ազգէ իր յետմնաց անուանէ ու դնէ, նա կարե դնել, ապա իր ընչիցն մէն – 49. եւ զծխերն տայ ում կամի. ու այլ ինչքն զինչ որ լինի՝ ու այն որ ի պառկացն՝ երեցկնկանն լինի – 52. Եւ թէ ոք վասն աւեր եկեղեցոյ շինման իրք տայ յաշխարհական կամ ի քահանայ, եւ նա չշինէ, նա առնու այլվայ զիր ինչքն եւ տայ յայլ ոք որ շինէ - 71. եւ տայ զիրեն ամեն ինչքն զոր բերել լինի եւ տուայր չկայ – 85. եւ իրաւունք է որ տան իրեն զիր ամեն ընչիցն կէսն, որ երթայ իր այլ այրիկ առնու: - 102. Բայց թէ կտրիճ չկենայ, եւ փեսայ լինի առած ի տունն՝ նա փեսայն իր կնոսն որդոյ տեղն ունին, եւ պիտի որ զեղ որդոյ առնուն ի տանէն եւ ի տեղոյն եւ յընչիցն բաժին զեղ երկու քուրոջ: - 109. Ապա թէ կինն աւտար այրիկ լինի առել, եւ չկենայ տղայ՝ նա ի կնկանն ի յընչիցն ի չորք բաժնէն զմէկն տան այրկանն – 111. Երբ

եղբարք կենան ու յիրարմէ բաժնվին՝ նա պատեհ է, որ իրենց հաւրեղբարովն ու քեռոյն տեսովն լինի, որ յառաջ յընչիցն եւ ի հալծնացն իւրեանց կաննոյն բաժին հանեն, ու ապա զիրենցն՝ զոր պատեհ է բաժնեն: - 112. Ապա երբ այրիկն լինի որ մեռնի՝ նա զիր հոգոյն բաժինն ի յիր ընչիցն այնել ըղորդ է - 131. եւ թէ ոք բռնվի ի յայտ մեղանքդ՝ նա պատեհ է զինք այն հրովն տուծել, ու յիր ընչիցն զայրեցման վզենն տուալ վճարուիլ զինչ ազգ ու լինայ վզենն: - 159.

ԻՆՔ,ԻՆՔԸ,ԻՆՔՆ - Բայց վասն աւգտութեան աշխարհաց իրաւունք է՝ որ աղէկ տեսնու հայրն՝ իր ամէն գաւառաւքն եւ գաւառապետացն տեսովն եւ սուրբ եկեղեցովն - 7. Եւ պատեհ է որ յիր հայրենի երկրէն զեղ եղբար մի կէս բաժին տան իր արժեաւք ընդ պոռոյզն: - 8. որ բնաւ որդի չկենայ թագաւորին՝ այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինք ի պոման՝ որ հետ իր մահուն չլինի ժառանգ աթոռոյն այն թագած դստերն որդիքն - 8. Ու կարաւ է թագաւորն յիր առողջութեան եւ ի մահուն կտակ գրել, ու սահմանել եւ տալ զլեռն եւ զդաշտն եւ զիր ամէն երկիրն զինչ ցեղ որ իր կամքն լինի, որ չկարէ իր որդի եւ ոչ այլ մարդ դիմադարձ կանգնել: - 8. Բայց թէ անճարկութենէ լինի՝ որ բնաւ որդի չկենայ թագաւորին՝ այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինք ի պոման՝ որ հետ իր մահուն չլինի ժառանգ աթոռոյն այն թագած դստերն որդիքն - 8. զեղբար որդիսն դնեն երկրին հաւատարիմքն յիրենց պարոնին աթոռն - 8. որ յիրենց պարոնին սերմէն է եւ ոչ աւտար սերմի ծնունդ: - 8. Եւ զթագաւորի հալաւ չիշխէ ոք հագնել առանց իր հրամանին: - 9. Ի թագաւորի մաւտ մի՛ ոք իշխեսցէ նստել՝ քաւել թէ ինք հրամմէ եւ յիր սեղանն՝ քաւել հայրապետն: - 9. Քրիստոսի դատաստանին արինակովն պարտի թագաւորն զիր իրաւունքն տանել ըղորդ - 9. Եւ որ այսոր ուժ չուննայ՝ որ վճարէ՝ նա ծախեն զինքն ու զիր տունն ու զինչ ուննայ ու ի զինն տան, զարդ ի կնկնէն ու ի յորդեցն: - 10. եւ զայնոք որ ի մեղայն գան եւ մեղացուք լինին, նա աւերէ զիրենց զաղվածքն եւ չսպաննէ - 10. եւ երբ իր խիստ ողորմութիւն այնէ՝ որ չմեռնի, նա զաչսն հանէ - 10. Բայց զգողն արժան է՝ որ ամէն երկրկալ խրատել կարէ. Բայց իւրենց ճորտերն չխրատեն առանց իրենց պարոնին: - 11. Եւ թագաւորն զիր շահուն տասնեակն պատեհ է որ եկեղեցոյն տայ: - 11. Եւ ինչ շահ կենայ՝ ըղորդն այն է՝ որ զամէնն յիրուր քշտեն, ու կէսն թագվորին է՝ եւ կէսն այլ իշխանացն՝ ըստ իրենց մարդաթրւին չափոյն ի յիրենց վերայ բաժնեն: - 11. զի այս թագաւորին է՝ որ ինքն դատէ - 11. Եւ թէ լաւ կինք յիրմէ որ երթայ ծեծէ՝ առանց պարոնին, նա երկու բաժին ծեծվորին է եւ մեկ բաժինն պարոնին, զի ինքն յիրմէ գնաց ի ծեծ: - 12. Ապա թէ թագվորն չլինի ի հետ՝ ու իշխան յիշվէ իր երկիրն դիպան, նա ոսկին թագվորին է անհնար, եւ շահուն տասնեակն մէն տան թագվորին - 12. Եւ նոքա զիրենց տասնեակն տան յիրենց եկեղեցեացն - 12. Եւ թէ լաւ կինք յիրմէ ոք երթայ ծեծէ՝ առանց պարոնին, նա երկու բաժինն ծեծվորին է եւ մեկ բաժինն պարոնին, զի ինքն յիրմէ գնաց ի ծեծ: - 12. եւ թէ ինք յիրմէ երթայ, նա ինք զինք գնէ: - 12. Եւ թէ ժառանգաւոր իշխան յիր երկիրն ծախվորի, եւ բերդ կամ ամրոց շինէ կամ այլ ինչ,

նա վասն այնոր կու շինե որ իր ու իր յետմնացացն մնացական մնայ – 14. իշխանքն զիրենցն ուննան մնացական եւ թագաւորին ուժ տան: - 14. Ապա վայրի պտուղքն ի ծառոցանցն երկրին՝ շինականացն է, որ քաղեն իրենց: - 16. քանց կարեն հանել ու տանել խանդկով ընդ ամէն մարդոյ գետններ՝ ի յիր /ծն.յիւր/ հողն եւ շինել զինչ իւր պիտենայ – 16. Եթէ ոք ի դուրս ի յիր աւերակք՝ յարտ կամ յայգի ոսկի գտնու կամ արծաթ ... նա այլ վայ թագվորին լինի – 17. եւ տեղոյն տէրն պարտի, որ՝ թէ այլ մարդ լինայ գտել ի յիր հողն՝ նա կիսէ ընդ ինք զայն հնկակն: - 17. Ապա թէ իշխանի ժառանգութիւն լինայ տեղին՝ որ իրքն գտվի, նա ի յիր ազգէն տեղոյն տէր կենայ – 17. ապա թէ մշակ կենայ կամ այլ ցեղ վարձվոր կամ հոռքվոր, նա չտան իր՝ քանց իրք մի բաժին մասնաւորեն: - 17. Վասն որ ոք զիր հորն բանայ եւ մարդ ածէ ի ներք՝ նա նիգն սպաննէ - 18. Եթէ ոք զիր /ծն.իր/ հորն բանայ՝ եւ մէնակ մարդ ի ներս ածէ, ու մարդն ի նգէն խեղդվի, նա արեան տէր է ածաւոյն: - 18. Վասն որ զիր մշակն ի շատ հալծելոյն եւ ի ծանր վերցնելոյն մեռցնէ - 18. Վասն որ չլինի քահանայ եւ զինք քահանայ երեւցնէ - 19. եւ առաջնորդ այնէ ինք զինք եկեղեցական քաներոյ զինչ ու լինի – 19. նա թէ քահանայ չէ աւրհնած՝ նա զեղ աշխարհական դատեն զինք – 19. Եւ եթէ իրք կենայ՝ որ ճանչնան, որ ըղորդ իր լինի ու բնաւ չլինի յաթոռոյն, նա կարէ վկայեցնել ու տալ տիաթկով իր/ծն.իր/ ազգին – 20. զի թէ վկայութեամբ չայնէ՝ նա հետ իր մահուն տուժեն զազգն եւ առնուն: - 20. նա ձգեն զինք ի դատաւորական աթոռոյն և զեղ աստուածաձախ տուժեն – 20. վասն զի ամէն եկեղեցական հայնց է հաստատած ի յիր ապրանքն ի սուրբ եկեղեցոյն ծառութենէն՝ զեղ հեծելվոր որ թրովն իր այնէ զթոշակն: - 21. եփ զուզվի եւ կարգվի ջանուն յեկեղեցին՝ այլ չկարէ պակսեցնել եպիսկոպոսն յիր /գրքումէ յին/ ապրանացն մագ մի առանց իրաւանց: - 21. նա զիրենց իրքն խնայեն ի յայն կարիքն – 21. նա զեղ մարդասպան ձգեն զինք եւ դատեն ու հաւնաւորեն ու դնեն յեկեղեցոյն կարիքն: - 21. նա առնուն զկարգն եւ ի դարպասն տան զինք, որ զեղ սպաննաւ դատեն զինք: - 21-22. Վասն որ մարդ յեկեղեցոյ ձիթէ կամ ի մումէ յիր տունն տանի – 23. եւ թէ յանդգնի ու չգայ ի ժողովն, նա իմանան զիր խաւսքն եւ զպատճառն՝ եւ ի յայնոր վերայ իրաւունք տան եւ սագայ ի շատն եւ ի քիչն: - 23. Ջնոյնն այնէ եւ եպիսկոպոսն եկեղեցականի, որ ապստամբէ յիրմէ - 23. նա յղրկեն առ ինք երկու եպիսկոպոս – 23. նա թէ կարգաւոր լինի՝ նա ձգուի ի կարգէն եւ վարուի յամէն երկրէն եւ թէ աշխարհական լինի՝ նա հաւնովրեն զինքն եւ բանադրած վարեն – 25. նա թէ չգայ լաւցնէ զիր արատն, նա թէ կարգաւոր լինի՝ նա ձգուի ի կարգէն եւ վարուի յամէն երկրէն – 25. որ ամէն հին եւ նոր կտակարանացն Աստուծոյ հմուտ լինի եւ հայնց գիտունն, որ ամէնն պատեհ տեսնուն՝ որ իր գաւազան տան – 26. Ապա թէ այլ ցեղ լինի՝ նա ամբարտաւանութիւն է եւ սգիտութիւն ու իր սագայ տան այլ վարդապետին: - 26. Եւ թէ քամահրանք այնէ իր վարդապետին՝ նա զայն վարդապետն ողջացնէ թէ զղջայ: - 26. պատեհ է, որ յարհիւեպիսկոպոսին ի հնազանդութիւն կենան, որ զիր/ծն.զիրենց/

աշխարհավարութիւնն նոցա թըտայրով այնեն – 27. նա չէ բնաւ արժան զայն ածել
 յեպիսկոպոսութիւն՝ որ ինք իր կամաւ ուզէ եւ սեղան տայ պարոնաց՝ թէ զիս
 եպիսկոպոս դիք – 27. նոյնպէս զմահ եւ զհոգեբարձութիւն երիցանց իրենք
 /ճն.իւրանսն/ այնեն:-27. Եւ եթէ կաթողիկոսն փնտռէ՝ թէ սուտ ելնէ անկեալն ի
 կարգէն ու եպիսկոպոսն իրաւ լինի, նա տուժեն զինքն /ճն.զինք/ զնոյնով որ
 ապաշխարէ - 28. Վասն եպիսկոպոսաց եւ իրենց թէմերոյն – 28. Եթէ ուրդի որ
 եպիսկոպոսին վերայ իր ժողովուրդն խուխայ այնեն եւ իր այլ հնազանդ
 եպիսկոպոսն չկենան ի հնազանդել իր եւ կէսն չար կենան ու ասեն՝ ու կէսն բարի,
 նա չէ պատեհ որ ի կասկած թողվի այն հիլայքն, որ ասցած լինի – 29. Ապա թէ
 յարհիւեպիսկոպոսի վերայ լինի խաւսքն՝ նա առանց կաթողիկոսի ոչ լինի կամ իր
 հրամանացն՝ որ հրամայէ եւ եպիսկոպոս դնէ յիր տեղն, որ զայն ժողվէ զամէնն, ու
 փնտռեն ու ստուգեն զըղորդն – 29. եւ ապա՝ թէ մեղկան լինի եպիսկոպոսն՝ նա
 կաթողիկոսի գիտելութեամբն ձգեն զինք /ճն.զինքն/ կամ տուժին զինքն ըստ
 մեղանացն: - 29. Վասն մայր եկեղեցեաց եւ իրենց ժողովրդեանն – 30. նա զատկին
 եւ ծննդին եւ այլ մեծ տաւներոյն չիշխէ այլ եկեղեցի հաղորդ կամ նշխար տալ, այլ
 զան յաւագ յեկեղեցին եւ ի հաւն առնուն իրենց քահանայից գիտելութեամբ: - 30.
 Չկարէ եպիսկոպոս՝ քանի որ մեծ լինի՝ յայլ եպիսկոպոսի վիճակէ իրք առնուլ եւ
 զիր եկեղեցին զարդարել – 31. որ կամենան զինքն ու զիր ընկերքն սպաննել – 31.
 որ սպաննէ զթշնամին անձին իրոյ – 31. որ կամենան զինքն /ճն.զինք/ ու զիր
 ընկերքն սպաննել – 31. այլ զամէնն մէկ Աստուծոյ սպասաւոր համարին եւ զիրենց
 ըղորդ իրաւունքն զամէն իրք ի յիր ժամն տան: - 34. եւ այլքն զեղ աւագ ընկերոջն
 հնազանդին իր աննախանձ – 34. եւ այրի իրիցկինն՝ որ իր երիկն յեկեղեցոյ
 սպասաւորութիւնն լինի մեռեալ եւ ինքն ի բոզութենէ սպրկիկ կենայ՝ նա յիր
 իրիցուն տեղն մասն մի բաժին նորայ տան առանց խալապայի – 35. Աւագ եւ
 զլիաւոր կացուցած երեցն՝ զեղ եկեղեցապան՝ չէ պատեհ որ իր տանն ինչ գործ
 երթայ հոգայ՝ քանց զամէն զեկեղեցոյն եւ զժամհարելոյն, հայնց որ ամէն ժամ ու
 ժամ յիր տեղն լինի: - 35. եւ քահանայ որ ծոյլ կենայ՝ նա խրատէ եւ յանդիմանէ
 զինք Գ հետ, ու թէ չլանայ՝ նա յեկեղեցոյ մտոցն իրեն /ճն.իւր/ փող մի չտան, ապա ի
 վերայ յարիականացն բաժնեն զիր բաժինն: - 35. ապա թէ ոք յանդգնի եւ խալապայ
 շարժէ՝ նա կու հրամայէ արեւնքս, որ ձգեն զինք ի դուրս յեկեղեցոյն – 35. Եւ
 զանաւթ եւ զսպասն եկեղեցոյ ինքքն պահէ: - 35. եւ քահանայ որ ծոյլ կենայ՝ նա
 խրատէ եւ յանդիմանէ զինք Գ հետ – 35. Եւ եպիսկոպոսունքն հետ այնոր ամէն
 մեկի ի յիր վիճակեալ քաղաքն եւ ի թէմն փնտռեն եւ ըղորդեն. եւ փիրիսկոպոսներն
 յամէն ժամ ամէն մէկ զիր վիճակն: - 37. Ու զկնքադրամն եւ զայլ մտերոյն բաժինքն
 սիրով եւ անխալապայ՝ որպէս գրել ենք՝ առնու ամէն մէկ զիր բաժինն սալար: - 37.
 որ իրենք /ճն.ինքեան/ աւգտին եւ այլոց քարոզեն: - 37. Եւ բիճ՝ ոչ ինք եւ ոչ իր
 ծնունդն եւ ոչ իր թոռն ինչվի յերեք երեսքն երեց չլինին ժամարար: - 38. Եւ զայս
 ամէնս եպիսկոպոսն պարտի ի կարգ պահել, եւ այս այնով լինի՝ որ ինք չծուլնայ եւ

ոչ աչառէ լքառով. ի վանք եւ ի դուրք զամէն մէկ ի յիր սահմանն պահէ: - 38. Եւ հաւս շատ երկար եւ մեծ է տարել զբանս եւ զծանդր շալակն ի վերայ եպիսկոպոսացն է դրել, որ՝ թէ իսկի պակսէ՝ նա զամէնին վճարէ Աստուած յիրենցմէ վճարվի, եւ ի հայրապետէն՝ թէ զեպիսկոպոսն չըղորդէ: -38. Եւ յաշխարհական ոք չտան յեկեղեցոյ գործոյ եւ ի բան մերձենալ, քաւել զիրենց որդիքն՝ որ յուսումն լինին: - 38. Նոյնպէս եւ զվարուց ժողովրդեան որ յորդորէ զամէնէսեան զիրենք եւ անուշացնէ անուշ պաշտելով եւ ամէն ազգ հնարօք յիրենց հոգոյն փրկութիւն. եւ ի տաւներն երկար եւ պինդ քարոզութեամբ՝ զհտուն վարդապետաց քարոզութեամբ՝ կշտացնէ զիրենք - 38-39. եւ ինք ի յիր վերայ չթողու զշալակն եւ զպարտք՝ որ փախչին եւ փրկին ի չարագործութենէ եւ ի հերծուածաւոյաց: - 39. Քրիստոսի արեան գինն եմք, եւ թէ թողուն մեր հովիւքն՝ որ գայլ զմեզ տանի, նա Քրիստոս առնու զիր վճարն: - 39. երբ զիր հայրն ու զմայրն կորսնէ՝ նա գայլն ու զազանք կու յափշտակեն ու կու ուտեն զինք - 40. նա գայլն ու զազանք կու յափշտակեն ու կու ուտեն զինք - 41. ամէն ազգ եւ երկիր իրենց հաշվնովն եւ ժմովն իրենց տան կու այնեն - 42. իրենք գիտեն զայս՝ ու տան պացխուն առաջի Քրիստոսի - 42. յառաջն սուրբն Գրիգոր եւ այլ յուրաքանչիւր հայրապետք ազգաց յիրենց երկիրն իջեւանք եւ հանգչելոյ տեղիք շինեցին ... հայնց որ զիրենց ամէն պէտքն յայնկից ուննային - 43. Եւ միաբանք տեղոյն պսակած լինին ընդ ուխտ տեղոյն սահմանեալ կարգովն հայնց, որ զեղ աշխարհական այրուկինք զիրենց ուխտին վառումն առ իրար անցնեն - 43. եւ ի յայն աղքատացն եւ յաւտարացն ի պէտքն եւ ի կարիքն դնեն զամէնն, հայնց որ իրենք չիշխեն այլ ուննալ, քան զիրենց քթեթն մէն: - 43. Վասն զի չկայ ամենեւին հրաման եւ ոչ իշխէ այր կամ կին, որ ընդ իր վանքն կապած լինի եւ ընդ եկեղեցին միաբանութեամբ, ոչ իշխէ ի կանոնական հրամանացս ի յիր վանացն ի դուրս արթել կամ այլ աւելի կերուխում այնել: - 44. Ապա թէ վանաց զեղ լինի, նա ի յիր վանքն տայ - 44. Եւ պատեհ է որ ոք յիր ամէն ազգ մտերոյ՝ ի մրգերոյն քթոց մի, եւ ի սերմունցն դստակ մի եղի, եւ յայլոցն նոյնպէս ... իր եկեղեցոյն տայ: - 45. Ջայս սահմանս գրեաց սուրբն Սահակ. եւ հրամայեաց որ ամէն մէկ զիր /ծն.զիւր/ բաժինն առնու ուրախութեամբ եւ սիրով, հայնց որ աշխարհականքն անգէտքն զբարին տեսնուն եւ ուսնին ի յիրենցմէ եւ ոչ զչարն, եւ առաւել առաջնորդքն: - 45-46. Մարդ՝ որ վանից հրամանաւ բանադրած լինի վասն իրիք պատճառանաց՝ ու մահ գայ իր, նա չկարէ զինք երեց հաղորդել - 46. երբ խիստ յանդգնի, նա ամենին տեսովն ու պատեհովն զիր մեղկանն մէն բանադրէ եւ ոչ զամէն տունն: - 47. Ու բանադրաւոյն պատեհ է, որ յայդ տեղդ աղէկ առնու զիր թպտիրն ի բանադրելն, զի եւ իր այլ կայ կապաւղ եւ արձակաւղ: - 47. ու բաժնեն զինք ու հաւնովորին՝ որ ապաշխարէ է տարի: - 48. Եթէ այր եւ եթէ կին որ եկեղեցական լինի, եւ անորդի մեռնի՝ կամ անդուստր, եւ ի յիր /ծն.ձեր/ ազգէ իր յետմնաց անուանէ ու դնէ, նա կարէ դնել, ապա իր ընչիցն մէն - 49. Եւ թէ աստար լինի յիր /ծն.ձեր/ ազգականութենէ՝ լաւկ

որդեգիր, նա զիր ժամուն եւ զգնայուն իրք՝ զայն մէն կարէ տալ ըստ իր կամաց – 49. Սուրբն Գրիգոր եւ թագաւորն Տրդատ զիրիցնին ազատել են յամենայն ազգ ծառութենէ իրենց որդովքն: - 49. Նա գրած է հիմայ՝ որ ով լսաւ լինի սահմանիս, եւ յեպիսկոպոսն թողու զվանքն իր ապրնաւքն՝ նա աւրինած է յԱստուծոյ, եւ Աստուած զիր մեղքն թողու ու զիր ծնաւդացն: - 50. եւ էրիկ մարդն չիմէ որ հարբենայ. եւ ոչ գուսան երգոց կամ ավջի ձայն իշխէ հանել բնաւ, եւ կուսան արեղայի մեղաց պատճառ լինի՝ եւ իր անթողնելի մեղք շահի: - 51. որ թէ խելք ուննայ, որ զժողովուրդն հովվէ, նա տայ իր ծխեր, եւ թէ ոչ՝ նա ծխերն հայրենիք չէ իր՝ ապա եկեղեցոյն է ծուխն: - 52. Բայց եպիսկոպոսն իր ծուխ չկարէ ուննայ: - 52. Բայց թէ եպիսկոպոսն միաբան կենայ ի վանքն, նա այլ իրքն վանացն է. ապա թէ կենայ իր ճանաչած իրք՝ որ ըզորդ իրն /ծն.իր/ լինի, նա կարէ իր ազգի եւ կամ յում ինք կամենայ, եւ ոչ ոք իշխէ նմա հակառակել: - 52. Բայց թէ եպիսկոպոսն միաբան կենայ ի վանքն, նա այլ իրքն վանացն է. ապա թէ կենայ իր ճանաչած իրք՝ որ ըզորդ իրն լինի, նա կարէ իր ազգի եւ կամ յում ինք կամենայ. եւ ոչ ոք իշխէ նմա հակառակել: - 52. Եւ չէ այլ իրաւունք, որ տայ մեռելն՝ քան զիր հալան ու զպատկելիքն – 53. Եթէ ոք որ չէ քահանայ, եւ սուտ քահանայութիւն կու այնէ՝ նա պատեհ է, որ բերէ զինք եպիսկոպոսն եւ վարդապետաւք փնտռէ հետ իր: - 54. Ու թէ լինի արժանի քահանայութեան, նա թող զինք ըզորդ քահանայացնէ. ապա պարտ է յառաջ իր ապաշխարութիւն տալ քաշել վասն անհնազանդութեանն – 54. Եւ այլ կու պնդէ զեկեղեցոյ առաջնորդն եւ զաշխարհի դատաւորն, որ ուր երէց գտնուն՝ որ առնու, նա զկարգն առնուն, եւ թագաւոր կամ պարոն զինք այրէ, եւ զինչ որ ունի՝ նա առնու իրն հալալ: - 54. Վասն որ ոք զինք սուտ քահանայ անուանէ - 54. Ու թէ չլինի արժանի, եւ անհաւատ քորձիկ լինի, նա թող ի պարոնութեան/գրքում՝ պարոնութեան/ դարպասն տայ զինք եկեղեցին, որ առնու զինչ ուննայ – 54. Ապա թէ տառապեալ լինի մարդն, նա ըստ իր կարեացն բերէ, նա ոչ երէցն չկարէ խաւսել՝ թէ փոքր է կամ նուազ կամ քիչ. ապա զինչ զենել է՝ սալար զիր իրաւունքն առնու՝ զերին ու զերբուծն ու զմորթին: - 55. Եւ մարդ թէ կենայ, որ չարի ընդ իր երէցն ու այլ երէցով մատաղ այնէ զաղտուկ, նա թէ երէցն դատըստնի՝ նա իրաւունքն հայնց է, որ տըպլէ զիր իրիցուն վզենն: - 55. Ապա զմիսն աշխարհականացն թողուն, եւ իրենք զիրենց կերակուրն զպատեհուրն ուտեն առանց մսի: - 55. Նոյնպէս եւ թէ անպատեհ բանդրէ, նա զինք բանադրեն՝ որ ապաշխարէ. բայց կապածն՝ այն կապած կենայ ինչուի իր տան արձակել: - 56. Եւ կաթողիկոսութեան աստիճանն այս է՝ որ եպիսկոպոսն որ առանց իր ձեռնադրվի՝ նա չէ ընդունած եպիսկոպոս – 57. Բայց եւ Երուսաղէմայ եպիսկոպոսն ի հնոյ սովորութեամբ հարկելորած էր, եւ ի կաթողիկոսութեան աստիճանի էր՝ չէր ի պատեհութեան, եւ զմայրաքաղաքաց եպիսկոպոսաց զձեռնադրութիւնն ինքն տայր – 57. Զի զեպիսկոպոսն պատեհ է, որ երկրին եւ գաւառին ու իր կարգակցերոյն եւ ուսուցչացն ու վարդապետացն տեսով եւ ընտրաւորութեամբ

նասուցանեն յաթոռ: - 58. Եւ թէ ի հեռու տեղաց լինայ՝ նա յուղարկեն երեք եպիսկոպոսունք որ երթան փնդոեն յիր վերայ - 58. Վասն որ գլխաւոր եկեղեցոյ ջանայ զիր ընկերոջ աստիճանն իլել - 58. Եթէ եպիսկոպոս կամ երեց ջանայ զիր ընկերոջ զաստիճանն եւ կամ զիրաւունքն իլել, նա կու հրամայէ արէնքս՝ որ արգելեն զինքն ի յայն գործոյն: - 58. Եւ չկարէ բնաւ ինք ի յիրմէ կաթողիկոս ձեռնադրել - 58. ու թէ չառնու յանձն, նա զէր հերետիկոս ձգեն զինք ի կարգէն ինչոյի յաւիտեան: - 59. եւ ի յայնոր վերայ այնէ, զինչ Աստուած իր ցուցնէ - 61. Վասն որ զիր անձն ի կուսութիւն խոստանայ - 61. Կու հրամայէ արէնքս, մարդ, որ յիր չափ հասակին է՝ ի ԺԵ տարին, եւ զիր անձն ի կուսութիւն խոստանայ, ու ստէ եւ չկարէ ժուժել, նա ընդ այն է համարած, որ երկու կին լինի առել, եւ այլ ի քահանայութիւն չկարէ հասնիլ բնաւ: - 61. հայնց որ հաճեցնէ իր սրտին ջերմութեամբն - 61. զի երկու ամուսնութիւնն է ընդ երեք համարած քահանայից իրենց հետեւողացն ի յայն գործն: - 61. Բայց ի քահանայութիւն ածել զինք բնավ չկայ ճարակ: - 61. եւ զոր գտնուի յայս գործս՝ նա այն ի յիր սրտին խեղճն է մնացել: - 62. Եւ տըֆնդէ սուրբ ժողովն մեծ կապանաւք, որ դեռ ոչ զերեսուն տարին մարդն չէ լցել՝ նա երեց չայնեն, ինչոր այլ աւագ լինայ ու զիր անձն փորձեն, ու ապա այնեն: - 63. Նոյնպէս եւ զնշխարն պատեհ է, որ առաջ եպիսկոպոսին տանին, որ խաչ հանէ եւ յառաջ ինքն /ծն.ինք/ առնու եւ հարկեւորացն տայ - 63. Եւ թէ որ իր ձեռնադրաւ եպիսկոպոսին հակառակի՝ եւ զսուրբ եկեղեցոյ մուտքն յանպատեհ տեղ մսխէ, նա նգոված է ի սուրբ հայրապետացն: - 64. Ապա զայս խրատ կու տայ՝ որ չնայի որ ի յայնք, որ քան զինք ի վեր լինան ու նախանձով չարի, ապա ըստ ինքն ի վայր հայի յայլ ցածերն եւ փառք տայ Աստուծոյ ու զիրն /ծն.ուզերն/, որ ունի իրեն հերիք այնէ եւ իր մեծին հնազանդի: - 65. Յուստիանոս կայսրն կամեցաւ ի յիր աւուրքն զՅովհաննէս աւետարանչին զմեծ պատրիարքութեան աթոռն ի յԵփեսոսէ ի Կոստանդինուպոլիս փոխել եւ անդ հաստատել - 65. Ապա զայս խրատ կու տայ՝ որ չնայի որ ի յայնք, որ քան զինք ի վեր լինան ու նախանձով չարի, ապա ըստ ինքն ի վայր հայի յայլ ցածերն եւ փառք տայ Աստուծոյ ու զիրն, որ ունի իրեն հերիք այնէ եւ իր մեծին հնազանդի: - 65. նա կարեն արհնել իրենց մեծ մետրապոլիտ, ու սուրբ սեղան ու մեռոն եւ աւագան: - 66. Եւ թէ որ վասն աւեր եկեղեցոյ շինման իրք տայ յաշխարհական կամ ի քահանայ, եւ նա չշինէ, նա առնու այլվայ զիր ինչքն եւ տայ յայլ որ շինէ - 71. Եւ թէ որ գայ եղբայրութիւն եւ փաւշմանի, նա կարէ այլվայ առնուլ զիր իրքն ու ելնել - 72. Բայց ոչ է ամէն կարգերն մէկ ազգ. այլ թագաւորք եւ իշխանք իրենց վանաց տուն են հաստատել եւ հայր եւ գլուխք դրել այլ եղբարցն: - 72. Եւ չէ պատեհ զհայր վանացն փոխել, քաւել քանց մեծ պատճառի՝ որ խալապայ այնէ հայրն, նա փոխեն զինք. եւ դեռ պատեհ է, որ խրատ տալով յանդիմանեն - 72. նա թէ աւելի բաժին ուզենայ՝ եւ չքոնէ զինք վճառած ի յաւիտենական վճարն, նա տան իր ու հաճեցնեն զինք յիր գործն - 73. որ վասն կաշառոյ սոցա հայր դնէ, զոր իրենք չուզենան - 73. Եւ կարեն ամէնն ելնել ի

վանացն, ինչուր դատաստանն ուղղի՝ ու իրենց հայր գայ՝ որ ամեն հաճին – 73. Եւ եկեղեցոյն եպիսկոպոսն պատեհ է, որ սահմանէ եւ ուղղէ զիրենց կարգն – 73. Եթէ որ զԱստուած հայիոյէ կամ անարգէ, նա զայտոր դատաստանն ինք Աստուած է հրամել ընդ Մովսէս – 74. Եւ այնք որ լսեցին՝ զձեռովին ի վերայ գլխոյն դնեն ու ի տեղն քարկոծեն զինք – 74. Եւ զայնք որ վասն ահու կամ նեղութեան կամ վասն զատելոյ քրիստոնէ լինի՝ նա պատեհ է, որ ընդունի զինք եկեղեցին – 75. Ու թէ չայնեն զայս աշակերտքն, նա վասն այնոր կու անհանգստեն զիրենք վարդապետներն – 77. Եւ թէ ուսնաւորն լինի տառապեալ՝ նա թէ իր կամաւքն զիր վարդապետն քննքշեցնէ եւ տայ իր իրք իր կամաւք, նա այն հերիք է հոգեւոր սերմանաւորացն որ զմարմնաւոր հունն ժողովեն: - 77. նա մայր է մեր եւ իր սուգն իր հերիք է - 78. Եւ թէ եկեղեցոյ կամ ի տանէ քար ընգնի եւ մարդ սպաննէ, նա՝ թէ տուն լինի՝ քակեն զինք – 78. ապա պատեհ է որ ուխտիւք եւ պատարագաւք զինք զեղ զսգաւոր մխիթարեն ի յիր սուրբն, զեղ երբ հացիւ երթան – 78. նայ երբ գտնվի սուտն ի վերայն, նա զինչ ուննան առնուլ պիտի...եւ կամ ի յայն սուրբն տալ՝ յոր տեղ որ սուտ եղաւ ինքն/ծն.ինք/-78. ու զիր մուտքն ի յիր վերայ հանեն եպիսկոպոսին տեսովն – 79. մնացելովքն իրենք ապրին – 79. Ապա երբ խիստ թոյլ տվի՝ նա չոր հաց, կամ ի նշխարէն թող լնու զիր պէտքն: - 80. Եւ զայս ժիր կարդալ պարտ է եպիսկոպոսին եւ պարոնացն, որ ի յայն ընծայիցն չմտէ ի յիրենց տունն – 80. Եւ իշխան՝ զոր ինք թագաւորն լինին իշխանացուցել, նա ինք կարէ ձգել. երբ ու կամի՝ յիշխանութենէն, եւ խրատել ու այնել զինչ իր պիտի: - 81. Բայց զայլ ինքնակալք, որ ինքեանք չլինին իշխան դրել, նա չկարէ առանց այլ իշխանաց՝ որ իր ընկերք լինին՝ ոչ զնա արքայրել եւ ոչ ձգել: - 81 նա Աստուած մէն կարէ զինք արքայրել – 81. Ապա զայնք որ մարդիկք դնեն, նա՝ թէ հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն , նա այլվայ իրենք եկեղեցովն եւ ամեն բնակչաւք երկրին կարեն արքայրել: - 81. Բայց զայլ ինքնակալք, որ ինքեանք/ծն.ինք/ չլինին իշխան դրել, նա չկարէ առանց այլ իշխանաց՝ որ իր ընկերք լինին՝ ոչ զնա արքայրել եւ ոչ ձգել: - 81. ապա զնտանել եւ ծեծել եւ տուգնել եւ հանել վարել յիրենց տեղոյ ի բաց՝ կարեն այնել: - 82. Ապա թէ իշխանքն իրենց իշխան լինին շինել, նա իրենք կարեն զիրենց դրած իշխանն ձգել ու խրատել եւ այնել զինչ կամին ... նոյնպէս եւ թէ նախարարնի լինի՝ նա իր ընկերքն դատէ զինք եւ առանց իր ընկերաց չկարեն ձգել զնա – 82. Եւ այն որ իշխանաց իշխան լինի՝ նա դատեն զինք իշխանաց իշխանաւքն: - 82. Եւ զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն եւ իրենց տեսովն. նոյնպէս եւ զազատքն՝ որ են ի մերս ձիաւորքն եւ լիճ ճորտերն՝ նա իրենցովն զիրենք /ծն.զերենք/ դատեն իշխանաց իշխանքն – 82. Եւ այլք հայն ցեղ ամեն մէկ զիրն դատեն՝ յիրենց դարպասն զիրենց ճորտերն, ըստ իւրաքանչիւր կերպի – 82. Եւ այլ ցած շինականք՝ հեծելվորք ամեն մէկ զիրն կարեն դատել – 83. զի ինք է տվել իրենց /ծն.զիրենց/ կարգն: - 83. Եպիսկոպոսն զերեցն եւ զսարկաւազն դատէ ... Եւ վարդապետք ի յրաբունապետաց եւ յիրենց հրամանք

տուաւդաց: - 83. զի ինք է տվել իրենց կարգն: - 83. սոքա երիցանցէ դասին եւ արքորին: Եպիսկոպոսք ի կաթուղիկոսաց, եւ կաթուղիկոսք ի պապէ եւ ի պատրիարքաց եւ յայն եպիսկոպոսացն, որ զինք կաթուղիկոս լինին ձեռնադրել: - 83. ապա ի վերայ աղալանաց կարէ զինք ի ժամէ արգելել – 83. Ապա թէ ուրդի՝ որ վասն անհնազանդ լինելոյ կնկանն անհանգստութիւն կենայ յիրենց մէջն, նա կու տայ հրամանք արեւնքս, որ բաժնեն երբ այլ ճարակ չկենայ – 84. եւ տայ երիկն զինչ հետ իր առել լինի ի յինք, որ երթայ երիկ մի այլ առնու: - 84. Եւ թէ յառաջ լինայ ցաւոյ դիպել, որ այրիկն չլինայ լսել՝ նա ի ծնաւորն դառնայ, եւ ի յուխտերն նոքա թող ծախվորին, զի յիրենց տունն է լել առջեւ – 85. Ապա թէ կեցցնեն ծնաւորն՝ որ ի յայրկանն տունն լինի լել, նա համբերէ է տարի. թէ բժշկի՝ նա լել բարի ու թէ ոչ նա թողու զինք իրաւանքն – 85. Բայց թէ իսկի կեցցնի՝ որ գիտացեալ լինան յառաջ եւ յախպով հաւնել ու առել՝ նա չբաժնէ զիրենք քանց մահն: - 85. եւ տայ զիրեն /ծն.իր/ ամէն ինչքն գոր բերել լինի եւ տուայր չկայ. եւ առնու իր այլ կին: - 85. եւ առնու իր այլ կին – 85. ու առնու իր այլ կին – 87. ու այն կինն չկարէ առնուլ իր այլ այրիկ՝ քանի այն այրիկն կենդանի կենայ: - 87. ու այն կինն առնու յայրկէն զիր ամէն պոռոյքն ու զմահին, եւ երթայ առնու իր այրիկն: - 87. Ապա թէ երկուքն իրար հալալ այնեն, նա եպիսկոպոսին բաժնին յիրամե/ծն.յիրացմե/, ու դնէ իրենց կարգ եւ տուգանք. զինչ որ Աստուած յիր սիրտն ծագէ:-87. Ապա թէ յայրկնէն լինայ պատճառն, նա զպոռուգացն յերեք բաժնէն մէկն տուգանք տայ կնոջն իր անձինն զին, որ թէ կոյս լինի զինք առել – 87. որ դնէ զինք ի տուն ու տայ զիր ամէն պէտքն ու ինք առնու այլ կին – 89. Եւ թէ կինն այլ այրկան չկամենայ լինալ՝ նա ի յոր տեղ ուր կենայ կինն՝ նա պարտի այրիկն, որ զիր ապրանքն տայ զայն կնկանն եւ զհագնելիքն՝ անսղալ քանի ապրի. եւ զիր պոռոյգն եւ զինչ բերել լինայ զամէնն ի յինք դարձնէ: - 89. Եւ ո՞վ գիտէ՝ թէ փաւշամնի այրն ու գայ, նա թէ կամենա կինն, նա շատ դատաստան ու իրաւունք կարէ ուննալ ի յիր վերայ, որ անարգեց զպսակն եւ կոխեց: Ապա թէ ոչ, նա իր շնորհաւորէ: - 91. Եւ թէ այրիկն երթայ յիրմե /ծն.յիրմե/, եւ առնու իր այլ կնիկ՝ նա թէ ու լսէ կինն նա պատեհ է, որ զայն է տարի համբերէ, եւ ապա առնու այրիկ: - 91. Ապա թէ ի յայրկանն գէշ բարուցն լինի, նա հայնց տուգնէն զայրիկն, թէ զիր կնիկն անպատեհ ծեծէ կամ քշտէ, զեղ երբ զաւտար կին ծեծէ՝ նա ծեծեն ու զնդանեն: - 92. եւ թողու զկնիկն, ու պէտ չլինայ արել իր բնաւ – 92. Եւ ինքն /ծն.ինք/, որ ծուռն է եւ պեղծ, նա զամէնն կորսնէ եւ մէկայլն առնու: - 92. նա չէ պատեհ որ այլ իր ուղղափառ կինն ի հետ իր կենայ, եւ կարէ բաժնվիլ յիրմէ: - 93. Եթէ ոք վասն բոզութեան զիր կնիկն սպաննէ՝ նա սպաննելն չէ հրամայած, այլ թողուլն. եւ պատեհ է խոստովանահաւրն, որ զսպաննաւոյն տեսնու՝ նոյնպէս եւ զսպաննածն, ու իմանայ զիրենց կենքն – 93. նա զեղ մեծ մարդասպան է պատեհ, որ զինք տուժի եւ զիր կարգն դնեն ու վճարվի զարիւնն. ապա թէ ոչ, որ նա զիրն աղէկ ունէր՝ ու անկարիք կայր՝ եւ զինչ ունէր նա յիր ձեռքն կայր՝ եւ ինք սպկիկ էր ի բոզութենէ, ու կու բոզնայր եւ զիր տունն ու զհալաւն այլոց կու վատնէր՝ նա

այտոր դատաստանն եւ քաւութիւնն այլազգ է - 93. Ապա թէ ազգ մի լինի՝ որ փաւշամնի, նա պատեհ է, որ հաւատարիմ կինն ջանայ ի յետն, եւ քանի ու կարէ յորդորէ զինք՝ որ դառնայ յըդորդն, ու շահի զինքն - 93. կամ թէ այրն բոզրած էր ու պեղծ եւ վասն այնոր թողցաւ եւ եսպան զինքն /ծն.զինք/ - 93. Բայց ի մարմնաւորն այս է, որ թէ ոք զկինն եւ զցուլն ի յիր տուն խէշ իրար գտնու, ու սպաննէ՝ նա անդատապարտ է ի դարպսէ, վասն զի զիր վկայութիւնն ունի, որ հաւն կայր ի խէշն: - 94. Ապա թէ զմէկն սպաննէ ու զմէկն թողու, նա զեղ մարդասպան դատեն զինքն վասն զի կարէ ոք ատել զմարդ, եւ բարութք այնել որ խաբէ զինք իր կինն՝ ու բերէ յիր տունն ածէ, եւ սպաննէ զինք. եւ կամ թէ զիր կինն ատէ զոք, եւ յիր սիրելեացն հոգցի ի խէշն տայ երթալ, ու զկինն սպաննէ անմեղ զեղ մեղկան, եւ թողու զմէկալն: - 94. ու երբ յայնոր ազտին ու ի յիրենց տունն գան ի հանգչիլ՝ նա իր կինն զինք ի յիր անհոգութիւնն սպաննէ: - 95. կին՝ որ զիր այրն՝ որ իր գլուխ է՝ ջանայ սպաննել վասն իր բոզութեանն՝ նա պարտ է զինք չարաչար մահուամբ սատակել - 95. վասն զի թէ մարդ զոք մի աւտար առանց դատախազութեան սպաննէ՝ նա զինք նորա փոխան չարամահ կու այնեն - 95. ապա այն որ զիր այրն սպաննէ՝ այլ զի՞նչ կրէ քան զչարաչար մահն արդար իրաւամբբ: - 96. Եթէ ումեք կին ի բոզութեան բռնվի, եւ կամ մարդ ցուլ առ ինքն /ծն.ինք/՝ նա պատեհ է ստուգութեամբ քննել զճշմարիտն՝ թէ կինն զցուլն է հարկել ու խաբել, թէ ցուլն զկինն: - 96. Բայց պարտ է զհտել՝ որ երկրին բնակիչք ի պարոնին պահն են, եւ այն որ տառպել աղչիկ մի գտնու ու իր ուժ այնէ՝ նա պարոնին է ուժն: - 97. Եթէ ոք զկոյս աղչիկ բռնէ, եւ ուժ այնէ, եւ զինք ի յանձնէ հանէ՝ նա թէ խնամէխաւուած լինի՝ նա դատաստանն զեղ կարգծին լինայ, որ գրեցաք: - 97. Եւ թէ ոչ՝ նա տայ հաւրն յիսուն դրամ, ու պսակվի ընդ ինք անբաժնելի: - 97. Եթէ ոք ատէ զկինն, եւ ասէ թէ՝ չգտայ զինք կոյս, եւ վկայնով սուտ ելնէ այրն՝ նա ծեծեն կուշտ վասն կնոջն քաշնացն - 97. Եթէ ոք անբախտի եւ հայնց անբժշկելի փնթի կին առնու՝ որ չկենայ ճար որ ի հուն ելնէ կամ հայնց անգամ՝ որ չկարէ իր ոք տեվել՝ նա հայնց է հրամայած յարէնքս որ ջանայ վկայաւք դրացենացն եւ ազգին - 98. Բայց թէ կարէ դատաւորն ծածկել ու հաշտեցնել՝ նա իր կամ է. եւ թէ ոչ՝ թողու, եւ իր այլ կին առնու, եւ զայն ազգն այնեն զինչ ուզեն: - 98. Բայց մենք եկեղեցականքս ներելով զբաժինքն կու տեսնունք պատեհ. եւ զաղջկինն իր ազգ թող զհտենան: - 98. ու տայ զիր իրքն եւ զպոռոյզն ի յինքն /ծն. յինք/ - 98. ապա ինքն /ծն.ինք/ այլ կին չկարէ առնուլ, քանի այն կինն ապրի: - 98. Եւ թէ այն թողած կինն այլ այր առնու, ու մեռնի այն այրն՝ նա թէ կամենայ առջի այրն այլվայ առնու զինքն՝ նա չկարէ քաւել թէ եպիսկոպոսին հրամանաւք: - 98. Այնոնք որ աներկեղութեամբ զիրենց պսակով կինն թողուն՝ առանց բոզութեան եւ կամ այլ իրաւնաւք պատճառանաց կոխեն զեկեղեցոյն պսակն եւ թողուն զիրեանց /ծն.զիրենց/ կաննին՝ նա կու հրամայէ արէնքս որ եաւթն տարի եկեղեցոյն յամեն ընդունելութենէ եւ ի պահէն ի դուրս մնան, չհաղորդեն զինք՝ եւ ոչ ի մահ թողուն եւ ոչ ի կեանք: - 100. Ապա թէ դառնա՝

նա իր այնելոցն կարգ դնեն որ ապաշխարե - 100. Եթէ որ կին ուննայ, ու չկարէ ի հետն այրկութիւն այնել՝ նա չէ պատեհ որ կինն զինք ի փրթման թողու - 101. Եթէ որ քր բաւլաւ լինի ի ծածուկ եւ խաբենայ ու կին առնու՝ նա յորժամ յիմանայ կնիկն զիր թափն, նա կարաւղ է որ մենակ երթայ յեկեղեցին եւ ասէ եպիսկոպոսին, եւ իրաւունք է որ տան իրեն /ծն.իր/ զիր ամէն ընչիցն կէսն, որ երթայ իր այլ այրիկ առնու: - 101-102. Եթէ ումեք կին գողենայ կամ աների ի ցաւոց և հաշիւ առնէ ընդ իրիկն, որ տայ իր զիւր պետքն քանի որ ապրի - 102. Եթէ իրիցու խնամութիւն հանդիպի այրկան ընդ աղչիկն՝ համարձակ ձեռնտալով՝ նա չկայ հրաման, որ վասն այնոր թէ յայլք հաճի, կամ թէ իր այլք շատ իրք տանին՝ նա կարէ փոխել զձեռնտվածն - 104. եւ երբ զիր հասակն առնու ... նա կարէ թողուլ զկինն ու ասել, թէ ես չունի զիմ հասակն - 105. Կին՝ որ առանց եկեղեցոյ եւ առանց հրամանաց եւ մեծ պատճառանաց, որ հաւնեցնէ գղատաւորն, թողու զայրն ու փախչի՝ նա իրաւունք է, որ բռնեն զինք եւ ի յիր այրիկն տան, որ յաւիտեան ծառայ ուննայ զինք /ծն.զինքն/ ու այնէ զինչ իր պիտի - 105. ապա հրամայած է յաւրէնքս, որ ծախել այլ կարէ զինք այրիկն: - 105. որ փախաւ՝ ի հարկից տեղ գնաց առ իր ազգ - 106. Բայց զինչ ցեղ ու է, երբ գայ՝ նա զիր կինն անսղալ առնու - 106. եւ ինք զիր կինն առնու անպատճառ - 106. եւ ապա հաշտեցնեն զիրենք: - 106. զի որ ծուռն է՝ նա ինք տայ Աստուծոյ պացխուն - 106. Եթէ որ ծառայ շահի, եւ կամենայ ընդ ինք պսակուիլ՝ նա պատեհ է, որ Խ ար թողու զինք, որ զիր ծնաւորն լայ - 107. եւ ապա կազմէ զինք քրիստոնէական հաւատով, եւ մկրտէ, ու հազնի զքրիստոնէութեան զագեստն. եւ ապա պսակվի, եւ ուննայ զինք հալալ: - 107. Ու թէ աստէ գնոյն կինն՝ նա չկարէ ուննալ զինք զէտ ծառայ, ապա ազատէ զինք, բայց ոչ առանց բոզութեան պատճառանաց - 107. նա զայնպիսեացն խափնեցնեն զխնամութիւնն, որ ոչ առնուն եւ ոչ տան իրենց բնաւ կին - 107. Բայց թէ կտրիճ չկենայ, եւ փեսայ լինի առած ի տունն՝ նա փեսայն իր կնովն որդոյ տեղն ունին - 108. Եւ թէ գրէ կտակ, եւ զիր ծառայն իւր ժառանգ դնէ՝ նա կարաւղ է հայրն զանհնազանդ որդիսն զրկել, եւ ծառայի տալ ըստ իր կամաց: - 109. Եւ թէ կարգածք կենան ի դստերացն ի յայլ տուն՝ նա այնք երկու քոյրն մէկ քուրոջ բաժին առնուն իրենց: - 109. Բայց սուրբ թագաւորքն, որ զառաջին նամաւսն գրեցին եւ սահմանեցին, նա զայս իրենք /ծն.իրեանք/ վասն հարկելորելոյ զպարոնն, գրեցին՝ որ պարոնին զիտելովն եւ կամովն լինի - 109. Եւ թէ կինն մայր լինի որդոց ու թէ աստար մարու՝ զիր պոռոցն եւ զմահրն առնու, եւ թէ պիտի՝ կենայ ի իւէ որդեցն. ու թէ ոչ՝ նա ելնէ առնու իր այրիկն եւ զինչ կամի՝ զայն այնէ: - 110. թէ ոչ որդի կենայ եւ ոչ դստերք եւ ոչ ի նոցանէ թոռունք՝ նա յեղբայրն եւ յեղբարորդիքն հասնի, ինչվի յիրենց չորս երեսք թոռունքն - 110. եւ այլ ի յետ ի յիր /ծն.ի հետ/ յազգն երթայ - 111. նա զիր իրքն մէն առնու ու ելնէ: - 111. նա զիր հարսնից ծախքն ի խառն միջեւնէն ի յետ հանեն - 112. Երբ եղբարք կենան ու յիրարմէ բաժնվին՝ նա պատեհ է, որ իրենց հարեղբարովն ու քեռոյն տեսովն լինի, որ յառաջ յընչիցն եւ ի հալծնացն իւրեանց կաննոյն բաժին

հանեն, ու ապա զիրենցն՝ զոր պատեհ է բաժնեն: - 112. Եւ թէ ծախե եղբայր զիր բաժինն՝ նա պատեհ է, որ ամենն յիրաց վերայ բաժնեն ըստ գնոյն, եւ ոչ մէկն միայն - 113. եւ ապա արեւնութեամբ բաժնէ յիրմէն /ծն.յիրմէ/ - 113. Եւ այն որդին որ զսնուցանաւ եւ զդարմանաւ հայրն ուրանայ, եւ թողու զինք ... նա այլ խիստ այն է անիծած յԱստուծոյ եւ յարինաց: - 113. Կու հրամայէ Մովսէս Աստուծոյ բերանով՝ թէ որ քրջտէ հարն եւ իր մարն՝ նա մեռանի, կամ անարգէ կամ բամբասէ՝ մեռցի, քաւէլ թէ տղայեկ լինի հայնց, որ իսկի չգիտենայ թէ ինչ արար, եւ իր ծնաւորն եւ որ տեսանն չհամարեն ընդ սգայութենէ - 114. Հարցանեն յարեւնքս վասն անընկմահու՝ թէ լինի իրենց թաղումն կամ պատարագ - 114. Բայց կու հրամայէ արեւնքս որ զէդ ինք Քրիստոս հար կամաւ արար զինչ եւ արար յերկրի՝ նոյնպէս եւ որդին պատեհ է որ զինչ այնէ՝ հարն կամաւք այնէ - 114. ապա դատաստանս հրաման տայ՝ ու զամեն մարդ իր զլիտովն սպաննեն:- 115. զի անընկմահն ի բազումս բաժնին. եւ, որ ի խելք են, ու իրենց կամաւ կու մեռնին ... են որ ի յիրենց խելացն ի դուրս վասն ցաւոց - 115. դեռ թէ հայրն կամենայ զինք պատրան տալ որդոյն ի մեղանքն՝ նա չէ պատեհ առնուլ - 115. Ապա ի դուրս կարես գրաւկնել զինքն զինչ ցեղ ուզես - 116. Եթէ քեզ ոք պարտք պարտենայ՝ նա մի՛ մտեր ի յիր տունն՝ որ ընդ ներքս ուր է գրաւկանն գրաւկնել - 116. նա իրաւունք է, որ մենակ առնու զիր իրքն: - 117. Գրած է յարեւնքս, որ թէ ոք գրաւով զմարդոյ տուն կամ զտեղ կամ զհայրենիք շահի՝ նա տէրն որ կորոյս, թէ յիմեցնէ ի յինք չտալով, հայնց որ հարկ լինի իր, որ ի դարպաս երթայ ու դարպսով առնու - 117. եւ պարտական են թագաւորք եւ զարագուիսք՝ որ զիրենց երկրին վզենն մենակ դարձնեն ի ճանչաւոն: - 118. հանչաք որ տէրն իրաց ի հարկ ընկնի որ երթայ վկայ բերէ եւ վկայնով եւ դարպսով կեցցնէ, որ իր է իրքն - 118. կու հրամայէ արեւնքս որ ամեն իրաց տէր, որ զիր իրքն ճանչէ եւ կեցցնէ վկայնով եւ երդմամբ որ իւրն է իրքն՝ նա առնու անյապաղ զիր իրքն - 118. որ զիր ապրանքն կենա ու ուտէ: - 119. Եւ այլ կու հրամայէ արեւնքս, որ զայրի կնիկ չիշխէ ոք գրաւկնել վասն պարտուց, ապա դարպսու տեսովն վճարվի զիր պարտքն - 119. Եթէ ոք մի տուն վաճառէ՝ ծախե կամ գնէ պարսպաւոր քաղաքի ընդ ներքնէ՝ նա յիր պոմանն թող լինի իր վճարն. եւ թէ չլինի, ու տարի մի յիմէ՝ նա կարաւղ է տան տէրն այլվայ առնուլ զիր տունն, եւ գնորա՝ զինչ որ տուել է՝ նա դարձցնէ: - 120. եւ նա զիր դեկանն ի ծախաւղէն առնու անյապաղ - 121. Բայց ըղորդ գրաստնոյ վաճառն այս է, որ եւարթն ար փորձէ, թէ հաճի՝ նա իր է անդարձ - 121. զի կու հրամայէ արեւնքս, որ թէ ինչվի տարի մի ի յայն պատճռնին գտվի՝ նա դառնայ ի տէրն, եւ առնու զիր դրամն: - 122. Եւ որ հող կամ գետին վաճառէ, թէ վասն տառպելութեան, որ ծախէ զիր գետինն, եւ գայ իր դրացին եւ ընկերն ու գնէ՝ նա ի պոմանն է իր համբերելն: - 122. զի թէ տարին լմնայ, ու չլինայ վճարել, նա ի վճարն կարէ առնուլ զիր հողն այլվայ, ու տայ զինչ տուել լինայ ի գնողէն, թէ իր պիտենայ - 122. զի վաճառին վճարն է հանած մանավանդ այնոց, որ վասն սննկութեան կու ծախեն զիրենց իրքն- 123. Ով աման

կամ անաւթ ինչ վաճառէ ... որ թէ ի նոյն տարին որ գնեց զիր գինին ամբողջ պահէ՝ նա լեալ է բարի: - 124. Բայց Ժ ար պատեհ է որ գնաւոյն տեսնու եւ զիր թոսպիրն առնու - 125. մարդ որ զիր ընկերն խաբէ ու զարատ իրքն ընդ աղէկին ծախէ՝ նա անիծած է - 126. ապա թէ տեսնու, եւ այսպովն գնէ՝ նա իր է անդարձ: - 126. Բայց ամէն ծախաւոյ պատեհ է, որ ի նգովիցն Աստուծոյ վախէ ու զիր իրացն նա է զարատն, եւ յայկից ի վեր չկարէ գնաւոյն դարձցնել: - 126. այն ծախաւոյն, որ խաբէ զանգէտն ու իր սուղ իրք ծախէ, նա զինք զեղ գող ու անհաւատ դատեն - 127. պատեհ է, որ թագաւորն ժողովէ զիր զամէն գաւառապետք եւ իշխանք ի յամենայն աշուն - 127. Բայց այնոց որ զկշիռն կամ զչափն աւիրեն՝ նա այս է որ չորեքկին վճարեն, եւ խրատեն զիրենք ի դռան, որ այլքն վախեն: - 127. Եւ զիտել պարտ է, որ այլ հալալ կումաշ չկայ եւ ոչ մուտք՝ քան զայն, որ մարդ իր թրովն շահի յանաւրինաց ծեծ, որ թէ ծախէ զիր բաժինն կամ տայ՝ նա ընդունելի է առ Աստուած եւ առ մարդիկ: - 128. Բայց թէ ըզորդի բաժինք չբերէ առ պարոնութիւնն՝ նա գող է, ու հարամ է, զինչ պահէ. ապա իր ըզորդի բաժինն է իր հալալ: - 128. եւ Աստուած յիրենցմէ խնդրէ զամէնն - 128. Բայց մեծ իշխանք եւ փոքունքն եւ իմաստունք բնակիչք աշխարհին պարտին յորդորել միշտ զթագաւորն եւ իրենք զիրար՝ ի յայս ուղիղ սահմանիս պահելն: - 128. նա պատեհ է, որ որդեցն կամաւք լինի իրենց ելնելն ի ժառանգութենէն - 128. որ դառնայ ի յինք իր պոմնովն - 129. մինչդեռ հիւանդն աղէկ ուննայ զիր խելքն՝ նա կոչէ զիր ծանաւթիքն եւ գնումիկոսն, եւ ... գրել տայ զիր /ծն.իւր/ իրքն. ու սահմանէ հոգոյն եւ իր ետմնացողացն ըստ իր կամաց - 130. Եթէ այրն ու կինն ի մէկ լինի, եւ խառնած լինի իրենց ամէն ստացուածքն անբաժին ընդ իրար՝ նա կարէ այրն տիաթիկ անել եւ ի, խառն միջեւնէն զիր հոգին հոգալ: Ապա թէ բաժնած լինի, եւ կնկանն ճանչած ի յետ՝ նա իր ժառանգաւոր յետմնացացն լինի, զոր դնէ: - 130. Եւ զխոստումն, թէ ելնէ՝ ինք /ծն.իւրեանց/ կատարէ - 130. Ապա երբ այրիկն լինի որ մեռնի՝ նա զիր հոգոյն բաժինն ի յիր ընչիցն այնել ըզորդ է. նոյնպէս եւ զկնկան ի յիրոյն /ծն.իւրոցն/, ի կնկան. եւ թէ տղայ կենայ՝ նա երկուքին ի ժառանգ: - 131. Եւ թէ ոք քրիստոնէ ծառայ գնէ յանաւրինաց՝ նա ծառայէ զգնաւոյն Է տարի. եւ ապա կարէ բաժնիլ յիրմէ, եւ վճարէ զիր գինն: - 132. Եւ թէ փաւշամնի՝ ու այլվայ դառնայ ծառայն առ իր տէրն ու ասէ թէ՝ տուր զիմ կնիկն ու զտղայքն՝ նա եկեղեցոյն վկայութեամբ կարէ զինք ծառայ ուննալ մշտնջենաւոր ինչվի մահն: - 132. Եթէ կնկով լինի մտել՝ նա կնկով ելնէ եւ որդովք. եւ թէ ինքն /ծն.ինք/ մէն՝ զինչ ցեղ գնվել է: - 132. Եւ թէ կարգել լինայ զինքն գնաւոյն, ու որդիք էլ ուննայ նա այն գնաւոյն է: - 132. Բայց թէ ժողովէ զիր գինն ու տայ յիր տէրն՝ նա պատեհ է որ վասն քրիստոնէութեան առնու եւ ազտէ զինք. եւ թէ չառնու ու ազտէ՝ նա երբ հանչաք մի ծառայէ զինք որ զիր գինն արժենայ, նա իրաւունք ազատէ ի ծառայութենէն: - 133. Եթէ ոք զիր դուստրն վասն աղքատութեան ծախէ քրիստոնէի՝ նա կարէ զեղ ծառայ մի ուննալ զինք - 133. Եւ թէ տաճիկ ծառայ գնէ ոք, եւ ուզէ ծառայն որ քրիստոնէ լինայ նա չկարէ արգելել. բայց

ծառայ է հետ մկրտութեանն, որ չկարէ բաժնիլ յիրմէ: - 133. Վասն որ զիր դուստրն ծախէ վասն աղքատութեան – 133. Ապա թէ կամենայ զինք իր պսակով կին այնել՝ նա կարաւոյ է, եւ թէ իր որդոյ կամ ազգի կամ ճորտոյ տալ՝ նա պատեհ է - 133. նա երբ հանչաք մի ծառայէ՝ որ զիր /ծն.յիւր/ զինն հանէ, նա ազատի: - 133. Վասն որ զիր ծառայն քշտէ որ մեռնի – 133. Եթէ որ զիր ծառայն քշտէ ու սպաննէ՝ նա զարեան զինն ի դարպասն վճարէ - 133. Եւ թէ ծառայ որ ի տաճկաց փախչի՝ նա մի՛ մատնէր զինք – 134. նա կարէ առնուլ զինք պարոնն – 134. Վասն որ թողու զիր անասունք, որ զայլոց արտ ուտեն – 135. Եթէ որ զիր անասունքն թողու որ երթայ զայլոց արտ ուտէ կամ զայգի՝ նա չափին չուանով զկերածն, եւ այն չափովն ի յիրոյն տան – 135. Եւ թէ կամաւք էր ու վասն չարութեան՝ նա զվզենն վճարէ ու կամ զինքն /ծն.զինք/ այրեն – 135. Եթէ որ մարդոյ իրք տայ ի պահ, ու գողնվի՝ նա տեսնուլ պիտի թէ կայ իր գողցած իրք ի հետ թէ ոչ, եւ երդմամբ փնտռեն. նա թէ իրն էլ լինայ տարվել ի հետ՝ նա թող երկուքն զգողն փնտռեն, ինչուր գտնուն. ապա թէ իրն մէն լինի տարած՝ նա այդ ի կասկած է, նա համբերութիւն տայ, որ զգողն փնտռէ - 136. Եթէ որ քրաստ կամ ընջուղ ուննայ, որ քշտան լինի, ու ասեն թէ հան զինքդ ի քենէ, նա չհանէ, որ քշտէ ու մարդ սպաննէ՝ նա քարկոծեն զինք եւ զիր տէրն, եւ կամ գնէ ինք զինք ի դարպսէն – 137. Ապա թէ մարդ սպաննէ՝ նա տայ զարեան զին, կամ զինք /ծն.զինք/ սպաննեն նորայ փոխան – 137. Վասն որ զիր հորն բաց թողու եւ անասուն ի ներս ընգնի – 137. Եթէ որ զիր հորն բաց թողու, եւ անասունն ընգնի ի ներս՝ նա զայն կոտորած անսունն առնու հորոյն տէրն – 137. Բայց թէ իսկի ներողութիւն լինի՝ որ կարէ զծառայն ազատել եւ յետ դարձնել՝ գողնալով կամ գնելով, ինքն ինչվի մահ ապաշխարէ ի զնդանն – 138. նա զէդ մարդասպան տուժեն զինքն /ծն.զինք/ - 139. Կու հրամայէ արեւնքս, որ զայն ցեղն երկու ազգ պիտի դատել՝ մէկ վասն արբեցողութեան, որ ինք մարդ էր ու հանչաք խմեց՝ որ խումբեցաւ տայ ու զայն վնասն արար. եւ երկու հետ, վասն վնասուն գոր գործեց – 141. Եւ թէ սպաննաւոյն է լել պատճառ՝ նա զէդ սպաննաւոյ զինքն դատեն: - 141. Եւ թէ խոց լինի մահու՝ նա քշտաւոյն տայ զդեղզինն, եւ զինք ի զընդանն պահեն ըստ զարկուցն – 141. Եւ զայն խափանն, գոր յիր բանէն կեցաւ՝ վճարել տան – 141. նա ի դատաւորին կամքն է, թէ վասն իր հոգոյն խղճայ եւ խրատ մէն տայ: - 141. Կու հրամայէ արեւնքս, որ թէ որ կենայ ու երթայ իր ճամբովն, եւ այլք կենան ու պահեն զճանապարհն՝ որ սպաննութիւն այնեն կամ գողութիւն, ու այն հալալ գնացաւոյն յաջող լինայ ու զնոքս սպաննէ՝ նա չէ արեան պարտական - 142. Եթէ որ զտղայ որ վասն բոգութեան կամ վասն այլ ցեղ պեղծ գործոյ խեղդէ կամ սպաննէ՝ կու հրամայէ արեւնքս որ զէթ այլ կենդանացնել չկարէ զինք, նա յայնց եւ ոչ քաւել, ապա ինքն /ծն.ինք/ յայնցեղ մահով մեռանի զէդ այն տղայն – 143. Եւ թէ քահանայ լինի հարամոյն սպաննաւոյն, նա վասն այնոր թէ ինք առջընդրեց ու եսպան զայն՝ որ զինք կամէր սպանանել ու զայլքն սպանել էր՝ նա չկորսնէ զերիցութիւնն–143. Վասն այն ազգ անհաւատաց, որ զմեռեալ կողոպտեն՝ կու

ՊԱՏԿԱՌԻԼ – զի երբ ի սրբոյն ի սահմանէն չեն իպատկատիլ՝ նա ի մերոյս ո՞րպէս: - 36.

ՊԱՏՃԱՌ – Եւ ի կոնի ուր թագաւորն ուրդի՝ նա երբ սուրն վերնա՝ նա չէ պատեհ այլ մարդ սպաննել. քաւէլ հայնց մարդիկք լինին յայլազգեացն, որ այն շմորոյն պատճառք լինին լել: - 9. Եւ իրք պատճառ /ծն. պատճառք/ այնէ թագաւորին – 15. Եւ թէ յանդգնի ու չգայ ի ժողովն, նա իմանան զիր խաւսքն եւ զպատճառն՝ եւ ի յայնոր վերայ իրաւունք տան եւ սագայ ի շատն եւ ի քիչն: - 23. ապա կարեն հարցնել եւ քննել այլ վարդապետք զբանադրելոյ պատճառն եւ հրաման տան: - 26. Եւ թէ առնուլ իշխէ՝ նա զրկանք է, թող ի յետ /զրքում՝ թողի յետ/ տայ թէ ոչ նա պատճառ է /զրքում՝ պատճառէ/, որ լուծվի յեպիսկոպոսութենէն – 31. Եւ ժողովուրդն չէ իրաւունք որ ընտրեն՝ թէ ինայ երեցն լավ է քան զիսայ կամ այլն անուշաձայն, եւ զմէկն թողուն ու ի մէկալն հարկեն, եւ ի խալապայի պատճառ լինին եւ մեղաց – 34. ամէն քակտելոյս պատճառն ի յառաջնորդացն եկեղեցոյն է լել եւ ի թագաւորացն – 42. Եւ ոչ գուսան երգոց կամ ավջի ձայն իշխէ հանել բնաւ, եւ կուսան արեղայի մեղաց պատճառ /ծն. պատճառք/ լինի՝ եւ ի անթողնելի մեղք շահի: - 51. Եւ չէ պատեհ զհայր վանացն փոխել, քաւէլ քանց մեծ պատճառի՝ որ խալապայ այնէ հայրն – 72. Եւ այլ չթողուն մաւտ՝ ի յուխտ որ այնոց որ ի բարիքն զան զայթազողութեան պատճառ չլինի ի պիղծն: - 80. նա թէ յայրկանէն լինի պատճառն՝ նա այրիկն չկարէ առնուլ այլ կին, քանի կենդանի կենայ այն որ թողվաւ – 87. Ապա թէ յայրկանէն լինայ պատճառն, նա զպռուգացն յերեք բաժնէն մէկն տուգանք տայ կնոջն իր անձինն զին – 87. Եւ թէ ի կնկնէն է պատճառն՝ նա հայրն ուննայ զտղայքն, եւ առնու այլ կին, եւ ուննայ զիքրն զամէն – 88. Վասն բաժանման, որոյ պատճառ լեալ է ատելութիւնն – 90. Եւ թէ անհանգստութիւն լինի ի յայրուկնաց մէջ, եւ վասն խորթերոյ լինի պատճառն ... նա տան զխորթերն ի յազգն,

որ հանգչին: - 91. Ու թէ այս փնթոյս ու անսգամիս արձագելն վասն այնոր է սահմանաձ արձանագրով, որ ամէն ազգ պատճառանաց դատաստան կարէ որ տանել կնկանն՝ ապա այս երկու պատճառնով բնաւ չկարէ: - 99. Եթէ երկու այրիկ յիրար լինան անցել ի կոիւ, ու կնիկ իշխէ ի մեջ մտել, որ մեկին աւգնէ ու խալապալայ այնէ եւ պատճառաւ որ մեկն զմեկայլն ծեծէ կամ սպաննէ՝ նա կու հրամայէ արեւնքս որ ձեռն կտրվի այն կնկանն – 99. Վասն պատճառանաց բաժանման – 100. Ի վերայ ամենայնի արեւնքս զարձակելն լաւ կու հրամայէ այն կնկանոյ, որ զայս պատճոնիս /ծն. պատճառս/ ուննան՝ բոգութիւն կամ կախարդութիւն – 100. Զի այդ բոգութեան պատճառ է – 105. Ապա երբ փախաւ՝ թէ բոգցել լինայ, եւ կենայ յայրկանն ի վերայ այլ պատճառ՝ նա հաշտեցնելն է կամ բաժնելն – 106. զի գոյացութեան եւ ապրնաց է պատճառք – 116. Բայց դատաւորք պատեհ է, ո հային ի յայն գնաւոյն, թէ յաղքատութենէ լինի պատճառն՝ նա ներելով այնեն դէպի ի հարուստն: - 120. զի կու հրամայէ արեւնքս, որ թէ ինչվի տարի մի ի յայն պատճոնին /ծն.պատճառնեն/ գտվի՝ նա դառնայ ի տէրն, եւ առնու զիր դրամն: - 122. Եւ թէ ոչ վասն տառպելութեան, այլ իրք պատճառի լինայ լել վաճառն՝ նա մէկ տարին է պոմանն: - 123. Ապա աղէկ պիտի իմանալ՝ որ դըրուստ ի վատ թրծելոյ լինայ պատճառն, եւ ոչ ի դիպելո կամ ի յայլ իրաց – 124. Բայց այրեցմանն վզենն ու տուգանքն այնոր է՝ որ պատճառ լինի այրեցման: - 129. թէ մահ կենայ՝ նա յիմնան պատճառն եւ զմախանքն թէ յումնէ է. թէ հայնց որ յայնոր է պատճառն՝ որ սպանվաւ՝ նա զարեան գինքն տան. եւ թէ սպաննաւոյն է լել պատճառ՝ նա զէդ սպաննաւոյն գինքն դատեն – 141. եւ որ այլ աւելի է՝ նա պեղծ է եւ ազահութիւն եւ պատճառ ամէն չարեաց – 142. Բայց աղէկ իմանալ պիտի /գրքում՝ պետի/ զպատճառն /ծն. պատճառքն/՝ թէ զիշերն է լել յանկասկած, թէ ի մշակէ է, թէ յի՞նչ իրաց – 152. եւ այսպիսի պատճառնիս շատ են – 153. Եւ որ ի հիւրնդին դեհն լինին պատճառք՝ նա այս են, որ կամ լինի ի հիւրնդին յանլտորդութենէ, կամ յուտելոյ, կամ բացուելոյ, եւ կամ յայլ այսպիսեացս – 153. Զի հայնց կու հրամայէ իրաւունքս, որ թէ որ քշտէ անասնոյ՝ նա իմանան ըղորդ զգարկելոյն պատճառն /ծն. պատճառքն/ - 162. նա պատեհ է որ աղէկ իմանան զպատճառն – 165. Բայց աղունին վատութեան պատճառն էլ պիտի տեսնուլ վասն զիճութեան ցորենոյն եւ այլ իրվոյ գոր լինի ի հացն: - 171.

ՊԱՏՃԱՌԱՅՆԵԼ - Տե՛ս ՊԱՏՃԱՌ

ՊԱՏՃԱՌԱՆՔ – որ աղքատանայ եկեղեցին վասն յերեւան պատճառանաց – 21. Եւ թէ Յոհաննէս աւետարանչին Աթոռն ի յԵփեսոսէ ու ի Կոստանդինուպօլսէ ի Հռոմ եւ անտի դարձեալ ի Բիւզանդիայ փոխեցաւ՝ նա չէ թէ վասն կաթողիկոսութեան պատճառանաց փոխեցաւ – 57. նա առնու այրիկն սալքարուկ մի, ու գրէ ի վերայ՝ թէ՛ ես ֆրլանս, որ վասն իսայ պատճառանացս անճարկեցայ, եւ կու ապահարզեմ ի յայս անուն կնկնէս – 98. Ու թէ այս փնթոյս ու անսգամիս արձագելն վասն այնոր է սահմանաձ արձանագրով, որ ամէն ազգ պատճառանաց /ծն.պատճառանոց/

դատաստան կարէ որ տանել կնկանն – 99. Այնոք որ ... առանց բոգութեան եւ կամ այլ իրանաւք պատճառանաց ... թողուն զիրեանց կաննին՝ նա կու հրամայ՝ արեւնքս որ եարթն տարի եկեղեցոյն յամեն ընդունելութենէ եւ ի պահէն ի դուրս մնան – 100. Կին՝ որ առանց եկեղեցոյ եւ առանց հրամանաց եւ մեծ պատճառանաց ... թողու զայրն ու փախչի՝ նա իրաւունք է, որ բռնեն զինք եւ ի յիր այրիկն տան – 105. Ու թէ առէ զնոյն կինն՝ նա չկարէ ուննալ զինք զէտ ծառայ, ապա ազատէ զինք, բայց ոչ առանց բոգութեան պատճառանաց – 107. Եթէ մարդ դատած լինի ի մահ վասն պատճառանաց, եւ ուրդի որ ինք ընդ ինք մեռանի, նա վասն այնոր թէ մեռավ չէ պատեհ թողուլ զինք, ապա կախել, եւ լնուլ զիրաւունքն: - 146. որ թէ այլազգի կամ քրիստոնէ գրիստոնէ սպաննէ, ու չփաւջմանի, քանց ուրախնայ ընդ սպաննելն յինչ ազգ պատճառանաց վերայ ու լինի՝ նա կամաւոր սպաննութիւն է համարած – 156. զսպաննածն ու զկոտրածն անսղալ վճարել պիտի: Նոյնպէս եւ զդին ձգեցվոր այնելն կամաւոր պատճառանաւք: - 174.

ՊԱՏՃԱՌԱԻՈՐ – Եթէ տղայք կենայ ի մեջ, ու պատճառաւորն հայրն լինի՝ նա զտղայքն մայրն ուննայ, եւ հայրն այլ կին չկարէ առնուլ առանց կնկան հրամանացն – 87. Բայց չկարէ այն՝ որ պատճառաւորն է՝ այլ ամուսնանալ – 88.

ՊԱՏՃՌԱՅՈՅՁ – Նոյնպէս եւ իշխանքն պարտին զիրեանցն հարկատվացն եւ հնազանդացն պահել՝ որ ... չլինին ի վերայ յիրաց պատճառայոյզ ի պիղծն: - 14.

ՊԱՏՈՒԵԼ – Չամեն ազգ արուեստավոր պատուեցէք – 14.

ՊԱՏՈՒԻՐԱՆ – Դու պատուիրեցեր զպատուիրանս քո, ի պահել ինձ յոյժ: - 3. Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ, ի պահել ինձ զպատուիրանս քո: - 3. Յայնժամ ես ոչ ամաչէի ի զգուշանալ ինձ ի պատուիրանս քո: - 3.

ՊԱՏՈՒԻՐԱՆԱԶԱՆՑ – Ապա յայրկանն հայենեստներոյն վերայ էլ պիտի հայել ու տնտղել, թէ վասն ինչ իրաց կու ուզէ ժառանգ, կամ թէ ունի հանչաք մի ստացուածք, որ աժէ զպատուիրանագանց լինելն – 89.

ՊԱՏՈՒԻՐԵԼ - Դու պատուիրեցեր զպատուիրանս քո, ի պահել ինձ յոյժ: - 3.

ՊԱՏՈՒՀԱՍ – Եւ որ վասն իրիք երկրաւոր բանից յայսր իրք պակասեցնէ՝ նա սաստիկ պատուհաս կրէ՝ եւ ի կարգէն ընկնի – 38.

ՊԱՏՇԱՃ – Եպիսկոպոսին պարտ է եւպատշաճ, որ զամեն արի կենաց եւ փնտռէ ի վերայ քահանայիցն եւ սարկաւագացն վասն բոգութեան – 62.

ՊԱՏՌԵԼ - առաքեալքն...չուսուցին՝ թէ վասն նախանձու եւ ատելութեան պատռեցէք զսուրբ եկեղեցի եւ գրիստոնէութեան միութիւնն – 41. նա պատեհ է որ աղէկ իմանան զպատճառն ... թէ յոր չաք էր, կամ թէ ինչ ցեղ վնասեցաւ կամ պատռեցաւ – 165.

ՊԱՏՌԵՅՆԵԼ - Վասն որ զմարդոյ գրաստ պատռեցնէ – 138. Եթէ որ զմարդոյ գրաստ պատռեցնէ՝ նա վճարէ – 138. նա թէ յուղարկաւորին ատորգնելոյն լինի լել նա պատռեցնաւորին մեղ չկայ – 165. նա թէ պատռեցնաւորն ի հասակ կենայ՝ նա վճարել պիտի: - 165.

ՊԱՏՏՐԱՆ - թե հայրն կամենայ զինք պատրան տալ որդւոյն ի մեղանքն՝ նա չէ պատեհ առնուլ - 115.

ՊԱՏՏՐԱՍՏ - Յայս պիտի հայիլ դատաւորացն, եւ պատրաստ կենալ յանմեղ արենէ: - 150. Նոյնպէս եւ թէ վարձվոր լինի ի բան կամ ի գործ, եւ զգուշացնէ պարոնն ու ասէ՝ թէ՛ զիտայ պատրաստ արայ, ու նա չայնէ, ու վասն այնոր վնասի՝ նա անպարտ է: - 152. Վասն որ պատրաստ հնձես զարտն - 164. Եթէ կենաս ու հնձես՝ դու պատրաստ հրնձէ, որ ի քո դրացնին արդէն ի հետ չհրնձես - 164.

ՊԱՏՏՐԱՍՏԵԼ - Եւ պատրաստել /ծն. պատրքատիլ/ պիտի եկեղեցւոյն յայստեղս, որ բարեգործութեան բանն ի չար չդառնայ - 25. Թէ ու սիրով լինի վնասն՝ նա դեռ չէ պատեհ ի փրթման թողուլ, ապա չաք մի տուգնել պիտի, որ պատրաստին ի բան: - 158. նա թող պատրաստի /ծն. պատրստի/ որ չթուլացնէ Աստուած, որ յինք կամ յիր մարդիքն գայ այն ցաւն - 167.

ՊԱՏՏՐԻԱՐԳ - Տէ՛ս ՊԱՏՏՐԻԱՐՔ

ՊԱՏՏՐԻԱՐՔ, ՊԱՏՏՐԻԱՐԳ - Բայց ու տեսուչ են եպիսկոպոսացն, որ թէ անպատեհութիւն այնեն՝ նա ընդ կաթողիկոսն եւ ընդ պատրիարքն ասեն: - 64. Եւ սոքա կարեն արհնել մեռոն ու դնել պատրիարք: - 65. Եւ Թ դասք աւագ եւ մեծ ամուսնութիւն է՝ պատրիարգն, որ է պապն: - 67. սոքա երիցանցէ դատին եւ արքային: Եպիսկոպոսք ի կաթողիկոսաց, եւ կաթողիկոսք ի պապէ եւ իպատրիարքաց /ծն. պատրիարգաց/ - 83.

ՊԱՏՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ - Յուստիանոս կայսրն կամեցաւ ի յիր արարքն զՅովհաննէս անտարանչին զմեծ պատրիարքութեան արժոնն ի յԵփեսոսէ ի Կոստանդինուպոլիս փոխել եւ անդ հաստատել - 65.

ՊԱՏՐԻՍՊ - Եւ բնաւ ոչ ի քաղաք եւ ոչ ի գեղ եկեղեցի առանց պարսպի որ լինի եկեղեցւոյն բոլոր ու դուռն ի վերայ՝ որ ի յեկեղեցին անսուրբ իրք չմերձենայ՝ չթողուն պրոպատիկէ աւագանովն: - 37. Ապա տուն, որ պարքսպի ընդ դրուցէ լինի, նա այնոր հաշիւն զեղ արտի կամ զետնի մի է համարած - 120.

ՊԱՏՐՈՆ - որ բնաւ որդի չկենայ թագաւորին ... զեղբար որդիսն դնեն երկրին հաւատարիմքն յիրենց պարոնին արժոն, որ յիրենց պարոնին սերմէն է եւ ոչ արտար սերմի ծնունդ: - 8. բայց իւրենց ճորտերն չխրատեն առանց իրենց պարոնին: - 11. Եւ գոր իշխան՝ որ յղարկէ ի ծեծ, նա ի կէս է շահն ընդ պարոնն: - 12. Եւ թէ լաւ կինք յիրմէ ոք երթայ ծեծէ՝ առանց պարոնին, նա երկու բաժինն ծեծվորին է եւ մեկ բաժինն պարոնին - 12. Եւ թէ ծեծվոր յղարկէ պարոնն գոք՝ ու բռնվի, նա պարոնն պարտի որ գնէ - 12. Մարդ որ մարդ պրկէ՝ ամենն զինչ կենա՝ պրկաւորին է, եւ զրհին մէն պարոնին: - 12. Ոսկեհանքն թագվորին է, եւ արծաթհանքն ի կէս է ընդ երկրին պարոնն եւ ընդ թագվորն - 13. Ջգաւառաց հարկն սահմանովն որ սահնանած է՝ առնուն պարոնայքն - 13. Եւ ի շաբաթն ար մի պարոնին բանի - 13. Կովն լիտր մի եղ տայ պարոնին - 13. Ոչխարն՝ եփ գառն կամ ուլ բերէ տարեկան՝ ի տասնէն մէկն առնու պարոնն /ծն. պարոնին/: - 13. զի

յամեն տաներսն որ են ի տարին՝ ԺԲ տարպայ՝ գան ծառայեն պարոնին: - 13. Եւ թէ վասն անհատութեան չէ մեռել հայրն ի պարոնէն /ծն. պարոնութենէն/, ապա լուկ վասն իրաց բարկութեան կամ այլ ցեղ մեղանաց, նա ոչ ի հետ ծնած որդիքն չկորսնեն: - 15. Հայնց լինի դատաստանս եւ ընդ իւրաքանչիւր պարոնայքն առ հասարակ՝ եւ ընդ իւրեանց ճորտերն: - 15. նա չէ բնաւ արժան գայն ածել յեպիսկոպոսութիւն՝ որ ինք իր կամաւ ուզէ եւ սեղան տայ պարոնաց՝ թէ զիս եպիսկոպոս դիք - 27. Եւ զկամաւ սպաննութիւններն՝ աշխարհական պարոնայք գիտնան, եւ զկամայն եկեղեցին: - 33. զի որպէս զերէցն չէ պատոհ ի հարկ դնել, նա հայնց ոչ զհարկտուն չկարէ որ հանել ի հարկէն առանց պարոնին կամացն: - 50. Եւ այս է ըզորդն՝ այն պարոնն, որ յիրիցվէ՝ պատարագաւ լինի՝ հարկ առնու, նա անէծք է գրած այնոր - 50. եւ զվաներն աշխարհական պարոնայք /ծն. պարոնայքն/ հոգային - 50. եւ թագաւոր կամ պարոն զինք այրէ, եւ զինչ որ ունի՝ նա առնու իրն հալալ - 54. եւ յերկրին պարոնէն /ծն. պարոնին/ եւ յամենէն հաճութեան գիր առնուն՝ որ արժանավոր է ու գիտուն՝ հեզ եւ խոհեմ - 58. Եւ զայս ժիր կարդալ պարտ է եպիսկոպոսին եւ պարոնացն - 80. Եւ այլ ցած շինականք՝ հեծելվորք ամեն մէկ զիրն կարեն դատել, նոյնպէս ու զխրատելն եւ զվարել՝ որպէս գրել ենք. ապա հայրենէ փթել չկարեն առանց պարոնին: - 83. Բայց պարտ է զիտել՝ որ երկրին բնակիչք ի պարոնին պահն են, եւ այն որ տառպել աղջիկ մի գտնու ու իր ուժ այնէ՝ նա պարոնին է ուժն: - 97. Բայց սուրբ թագաւորքն, որ զառաջին նաւմաւսն գրեցին եւ սահմանեցին, նա զայս իրենք վասն հարկելորելոյ զպարոնն, գրեցին՝ որ պարոնին գիտելովն եւ կամովն լինի - 109. Եւ թէ լինի որ տեղոյն կամ տանն կամ իրացն տէրն ասէ ընդ մարդ, թէ՝ ձգէ կրակ կամ կոտրէ կամ արա զինա բանն՝ զինչ ու լինի, եւ ճորտն այնէ՝ նա չպարտի ճորտն իրք, պարոնին է մեղանքն՝ որ զվզենն վճարէ: - 118. մանաւանդ այն, որ պարոնին այնէ զպակասութիւնն, որ զիր ապրանքն կենա ու ուտէ: - 119. եւ զայնոք որ ծեծնաւք չըղորդին հետ երեք դարպայի քրշտանացն՝ նա ի պարոնն կամ յերեսփոխանն բերեն, որ ի վերայ մեղանացն խրատել տայ կամխոռել կա մեռցնել: - 127. Բայց ձեռնգիրն հաստատէ զբանն՝ պարոնին ձեռնգիրն եպիսկոպոսին խաչին եւ վկայիցն: - 129. Յաղագս ծառայից ... որ չկարէ որ ծառայն ժառանգեցնել, քաւել թէ պարոնին եւ եկեղեցոյն կամաւք - 132. Եթէ որ զիր ծառայն քշտէ ու սպաննէ՝ նա զարեան զինն ի դարպասն վճարէ. զի սպաննելն ու խրատելն պարոնացն է: - 134. Վասն որ պատիկոս փախչի յիր պարոնէն - 134. Կու հրամայէ արեւնքս, որ թէ՝ պատիկոս փախչի յիր պարոնէն՝ նա քանի այն պատիկոսն ապրի, նա կարէ առնուլ զինք պարոնն - 134. Նոյնպէս եւ թէ վարձվոր լինի ի բան ինչ կամ ի գործ, եւ զգուշացնէ պարոնն ու ասէ՝ թէ՝ զիտայ պատրաստ արայ, ու նա չայնէ, ու վասն այնոր վնասի՝ նա անպարտ է: 152. եւ կամ թէ հայր զորդի ի վերայ խրատու քրշտէ, նա մեռնի ... կամ պարոն զճորտ ... որ մահ լինի զինչ ցեղ ու է ... նա այս ի կամայն եւ յոչ կամայն ի խառն է բանս: - 154. Բայց ի հրամանաց ելածն եւ ընդ

ախփրթութենէ պատահածն ու ընդ այլ դեհ գնացածն քան ընդ որ պարոնն հրամէ՝ նա ի լման վճար պիտի այնէ: - 166. որ պարոնն զիր հնգակն առնու ի վճարէն: - 168. ու վզենն պարոնին կու լինի - 168. Եւ գիտել պարտ է որ այս Գ իրքս որ ի պարոնաց /ծն. պարոնացն/ եւ ի թագաւորաց ի խնամքն եւ ի պահն կենայ առաւել քան զշէն գեղերն - 170.

ՊԱՐՈՆՈՒԹԻՒՆ - Կու հրամայէ արեւնքս որ ոչ իրիցնին ի հարկտութն խառնին եւ ոչ հարկտութն յիրիցնին, ոչ խնամութեամբ եւ ոչ ինչ ազգ իւայք, վասն պարոնութեանն հարկուն - 49. ու այլ ինչքն զինչ որ լինի՝ ու այն որ ի պտուգացն՝ երեցկնկանն լինի, եւ ի պարոնութեանն ի հրամանքն է մնացել - 52. Ու թէ չլինի արժանի, եւ անհաւատ քորձիկ լինի, նա թող ի պարոնութեան դարպասն տայ զինք եկեղեցին, որ առնու զինչ ուննայ - 54. եւ թէ աշխարհի երեց է, նա արժան է ընդ հարկետոր գիտունքն եւ ընդ մատուտորս պարոնութեան ըստ իւրաքանչիւր կերպի յարիլ ի բարին, վասն զի Աստուած զերկնային դաս հրեշտակացն զաստիճանաւորսն արար իւր ի սպասաւորութիւն. եւ զերկրաւորքս նոյնպէս ի տերութիւն եւ ի պարոնութիւն: - 64. զի կովոյ եւ ծառութեան ի պէտք է ի պարոնութեանն ի կարիքն: - 116. քաւել թէ պարոնութեան հրամանաւք լինայ այրել զյիմեցնելն եւ դարպսով: -117. Պարտ է գիտենալ, որ զվաճառացն եւ զպագրնոյն սահմանն ի քաղաք եւ ի դուրս՝ պարոնութիւնն սահման է զիրաւունքին՝ զչափն եւ զկշիռն եւ զայլն յայսպիսեացս - 126. Եւ զայնոք, որ դրամ քըշտեն կամ դրամ հարթեն՝ անխեղճ առ պարոնութիւնն՝ զձեռք կտրեն ի պակասն: - 127. Բայց թէ ըղորդի բաժինք չբերէ առ պարոնութիւնն՝ նա գող է, ու հարամ է, զինչ պահէ - 128. ՊԱՐՍԻԿ - Ապա երբ ուժվորեցին Պարսիկք ի վերայ Հայոց, նա տանէին զիրիցնին ի հեծել եւ այնկից ի վեր թուլցաւ - 50.

ՊԱՐՍՊԱԻՈՐ - Եթէ ոք մի տուն վաճառէ՝ ծախէ կամ գնէ պարսպաւոր քաղաքի ընդ ներքնէ՝ նա յիր պոմանն թող լինի իր վճարն - 119.

ՊԱՐՏ/Ք/ - Եւ ինք ի յիր վերայ չթողու զշալակն եւ զպարտք - 39. զի այն պարտք է, ու յառաջ զայն պիտի վճարել եւ զիր երիցնուն: - 46. Եւ թէ քրիստոնէ է, եկեղեցին քննէ, եւ զոր պարտն է՝ ի դարպասն տա որ դատէ - 74. Վասն այլ եկեղեցականաց կարգաց եւ պարտուց - 83. Եթէ քեզ ոքպարտքպարտենայ՝ նա մի՛ մտեր ի յիր տունն՝ որ ընդ ներքս ուր էր գրաւկանն գրաւկնել - 116. Եւ այլ կու հրամայէ արեւնքս, որ զայրի կնիկ չիշխէ ոք գրաւկնել վասն պարտուց, ապա դարպասու տեսովն վճարվի զիր պարտքն - 119. եւ յորժամ կարենան ծնաւորքն կամ ազգն վճարել զպարտն /ծն. զպարտքն/՝ նա ազատ է /գրքում՝ ազատէ/: - 133. նա թէ այլ յետեւ մեռնի, նա ելած է քշտաւորն ի մահուն պարտուցն ի դարպսէ եւ ընկած է ի յեկեղեցոյն պարտն /ծն. պարտքն/ եւ ի յապաշխարութիւն, որ քաւէ - 145. եւ նա զքո պարտքն /ծն. պարտ/ վճարէ - 173.

ՊԱՐՏԱԿԱՆ - Եւ թագվորն պարտի որ պահէ զաղքատն. թե ոչ՝ Աստուծոյ պարտական մնայ: - 13. Վասն որոյ պարտական են ամենայն կերպով Քրիստոսի

նմանութեամբն վարիլ սրբութեամբ եւ արդարութեամբ եւ ճշմարտութեամբ – 68. Բայց՝ զինչ ցեղ եւ է, արեան պարտական է, եւ սահմանել պիտի որ քաւէ: - 94. Եւ պարտական են թագաւորք եւ զարագլուխք՝ որ զիրենց երկրին վզենն մենակ դարձնեն ի ճանչաւոյն: - 118. նա չէ արեան պարտական, այլ գովելոյ եւ ամօթք տալոյ է արժան: - 143. Ապա թէ տէրն յայն բանն յուղարկէ զմարդն, որ չի նայ իր գործ եւ չի նայ յինք կրթած, ու վնասի՝ նա այն պարտական է եւ մահապարտ: - 149. Ապա թէ ոչ՝ որ անխնամ երես որոգայթել՝ նա պարտական է: - 152. Ապա թէ ոչ՝ նա պարտական է մեղացն – 165.

ՊԱՐՏԵՆԱԼ – Եթէ քեզ ոք պարտք պարտենայ՝ նա մի՛ մտեր ի յիր տունն՝ որ ընդ ներքս ուր էր գրականն գրակնել – 116.

ՊԱՐՏ Է - Գող եւ ծեծվոր չէ պարտ յղարկել թագվորին – 12. Բայց պարտ է ամենայն դատաւորաց գիտենալ, որ երագի նման է աշխարհիս ամէն վայելվածքն եւ անցաւոր – 14. Գիտել պարտ է որ մկրտութիւն եւ ձեռնադրութիւն մէկ է – 22. Զթերահաւատ մարդոյ զվկայութիւն բնաւ չէ պարտ առնուլ – 24. նա պարտ է գրել՝ որ եպիսկոպոս որ արհիեպիսկոպոսի գաւառ կենայ՝ նա պատեհ է, յարհիեպիսկոպոսին ի հնազանդութիւն կենան – 27. Բայց դատաւորին պարտ է փնտռել ըղորդութեամբ եւ ընտրել զակամայ սպաննութիւն: - 33. Եւ չէ պարտ կարծել. թէ փոքր գնով ենք գնած – 39. Բայց եւ մեզ աշխարհական հաւտիս պարտ էմերոց հովուացն հնազանդ լինել իբրեւ Աստուծոյ – 39. Պարտ է գիտել, որ ժողովարան թարգմանի՝ որ հաւնիկ լինի ամենայն ազգաց հաւատացելոց միասիրտ եւ միական եւ միահաւատ ի մաւր մեր հանգչիլ ի գիրկ – 41. ապա պարտ է յառաջ իր ապաշխարութիւն տալ քաջել վասն անհնազանդութեանն – 54. Եւ թէ ոք կարգաւոր ԱԲԵՂԱՅ որ զաղտաբար միս ուտէ, նա զայնպիսին զէր զիտառ եւ ծուռ մարդ պարտ է դատել եւ տուալ ապաշխարութիւն եւ կարգ դնել – 60. Եպիսկոպոսին պարտ է եւ պատշաճ, որ զամէն արի կենաց եւ փնտռէ ի վերայ քահանայիցն եւ սարկաւագացն վասն բոգութեան – 62. Ապա թէ հուրբելով լինի վասն պղծութեան՝ դու արա նմա զէտ զանարգանացն որ գրեցաք, քարկոծել պարտ է, զի անարգեաց: - 75. Ապա երէցն պարտ է որ երբ զայս առնու՝ նա հերիք այնէ – 76. Եւ զայս ժիր կարդալ պարտ է եպիսկոպոսին եւ պարոնացն – 80. նա պարտ է զինք չարաչար մահուամբ սատակել – 95. Բայց պարտ է գիտել՝ որ երկրին բնակիչք ի պարոնին պահն են – 97. Վասն թէ չէ պարտ բաժանել իրիցու ձեռնտվածն – 104. Եւ ոք զայնոք ի շենամեջ պարտ է թողուլ բնաւ, այլ ի յետ՝ յիրեանց սահմանած բնակութեանն: - 108. Նոյնպէս եւ զմունջն ոչ է պարտ ամուսնացնել բնաւ – 108. Պարտ է գիտենալ, որ զվաճառացն եւ զպազրնոյն սահմանն ի քաղաք եւ ի դուրս՝ պարոնութիւնն սահման է զիրաւունքին՝ զչափն եւ զկշիռն եւ զայլն յայսպիսեացս – 126. Եւ գիտել պարտ է, որ այլ հալալ կումաջ չկայ եւ ոչ մուտք՝ քան զայն, որ մարդ իր թրովն շահի յանաւրինաց ծեծ – 128. Ապա թէ տղայ լինի՝ նա ի հասակն հայել պարտ է – 157. Վասն թէ որպէս պարտ է

գնոր տուն շինել – 158. ու զայն զնտանոք եւ ծեծաւք եւ խրատնաւք պարտ է ըղորդել: - 159. Եթէ ումեք անտուն դիւահրե նա գիտել պարտ է տերանցն որ ի յիրենց մեղացն է եւ ոչ յանասնոց – 166. Բայց եւ յաղագս երմկերոյ գրել պարտ է գովելնոյ եւ խաշանց: - 170. Եւ գիտել պարտ է որ այս Գ իրքս որ ի պարոնաց եւ ի թագաւորաց ի խնամքն եւ ի պահն կենայ առաւել քան զշէն գեղերն – 170. Եւ մէկ պատն որ լինի ընդ երկուք ի մէջ՝ նա երկուքին լինի. եւ այնով արձակնայ շէնն, ու արգիլել բնավ չէ պարտ, կամ տեղ որ այգի չէ՝ նա խնայել դնաւոյն. նոյնպէս եւ գտան որմունք չէ պարտ եւ զայլ այսպիսիք: - 171.

ՊԱՐՏ Է ԵՒ ՊԱՏՇԱԾ - Եպիսկոպոսին պարտ է եւ պատշաճ, որ զամէն արի կենաց եւ փնտռէ ի վերայ քահանայիցն եւ սարկաւագացն վասն բոզութեան – 62.

ՊԱՐՏԻԼ – Քրիստոսի դատաստանին արիւնակովն պարտի թագաւորն զիր իրաւունքն տանել ըղորդ – 9. Եւ թէ ծեծվոր յղարկէ պարոնն գոք՝ ու բռնվի, նա պարոնն պարտի որ գնէ – 12. Եւ թագվորն պարտի որ պահէ զաղքատն – 13. Եզն այլ ծառութիւն չպարտի, զի զիր հնկակն տվել է: - 13. Նոյնպէս եւ իշխանքն պարտին զիրեանցն հարկատվացն եւ հնագանդացն պահել՝ որ ամէն մէկն զիր շինածն եւ զկորթբացած հայրենիքն ուննայ – 14. Եւ տեղոյն տերն պարտի, որ՝ թէ այլ մարդ լինայ գտել ի յիր հողն՝ նա կիսէ ընդ ինք զայն հնկակն – 17. Վասն եպիսկոպոսաց՝ թէ որպէս պարտին իրաց հնագանդել – 26. Եւ զայս ամէնս եպիսկոպոսն պարտի ի կարգ պահել – 38. Եւ թէ կինն այլ այրկան չկամենայ լինալ՝ նա ի յոր տեղ ուր կենայ կինն՝ նա պարտի այրիկն, որ զիր ապրանքն տայ զայն կնկանն եւ զհագնելիքն՝ անսղալ քանի ապրի – 89. ու եփ պսակվի՝ նա տուժանք չպարտի: - 96. Եթէ որ իրաւնաւք հաշիւ այնէ ընդ ծնաւոր կոյս աղչկան, եւ առնու հանէ յանձէ՝ նա՝ իրք որ կամաւք է լել՝ նա տուգանք չպարտի – 102. Եթէ որդին ի վնաս բռնվի՝ հայրն իրք չպարտի – 115. ապա այնք որ յառջեւ լինին ծնած՝ ազատ են, մահ չպարտին – 115. նա չպարտի ճորտն իրք, պարոնին է մեղանքն՝ որ զվզենն վճարէ: - 118. Ապա թէ հարուստ է ու գատական՝ նա մենակ պարտի այնել զվճարն ի ժամ – 122-123. Բայց մեծ իշխանք եւ փոքունքն եւ իմաստուն բնակիչք աշխարհին պարտին յորդորել միշտ զթագաւորն եւ իրենք զիրար՝ ի յայս ուղիղ սահմանիս պահելն: - 128. Բայց վասն եկեղեցոյն հնագանդութեանն պարտի մեղայ ասել խոստովանահարն – 142. եպիսկոպոսն պարտի /ծն. պարտին/ հնագանդել արիւնացս – 143. դատաւորք արիւնաւք գնոյն պարտին արբուցանել անաւոյն: - 144. Ապա թէ չարկամ յիշաւ այնէ, ու տանի զամբննին եւ առնաւղին այլ ի հետ՝ նա չպարտի վճար – 159. Ապա թէ վարձ է տվել պահելոյ՝ նա այլ վստահի իրաւնաւք պարտի զվճարն – 160. զի թէ հայրն մեռել լինի, նա որդիքն բնաւ վաշիս չպարտին տալ յոչ որ իրաւունք: - 161. նա զբժշկաց վարցն ու զղեղգինն ինք պարտի որ տայ: - 165. Զի թէ պատիկոս առանց դարպասու իշխէ հաշտիլ ընդ վնասարարն՝ նա գող է, ու տուգանք պարտի – 168. ու թէ աւիրեն՝ նա դարպասն պարտի, որ պատժէ – 171. ու իրենք պարտին, որ զիրենց

պահքն անսխալ ու աղէկ պահեն: - 173. Բայց թէ ի գազանէ եւ ի կերչաց իրք մի սխալ գայ, նա թէ վկայք աղէկ վկայեն, որ իւր բանիւ չքլեալ և ոչ յիւր ուժոյն մնացել, նա չպարտի իրք: - 173.

ՊԱՏԽՈՒՆ – որ իրենք գիտեն գայս՝ ու տան պացխուն առաջի Քրիստոսի – 42. նա ինք տայ Աստուծոյ պացխուն – 106. նա վասն այնոր չունի պացխուն ծախաւոյն – 125.

ՊԱԻՂՈՍ – Եւ Պաւղոս ասէ՝ կարգեաց Աստուած եւ եղ յեկեղեցոջ նախ զառաքեալս եւ երկրորդ զմարգարէս եւ երրորդ զվարդապետս – 40.

ՊԵՂԾ – Տե՛ս ՊԻՂԾ

ՊԵՂԾՈՒԹԻՒՆ – թէ ի կերակրոյն կամ ի տարոյն պեղծութենէն /ծն. վատութենէն/ անցնի՝ նա գնաւոյն է: - 124.

ՊԵՏՐՈՍ – Եւ ոչ յիշել զՔրիստոսի հրամանքն զոր հրամայեաց ընդ սուրբ առաքեալն Պետրոս՝ թէ դու ես վէն – 40. Ամ ի՞նչ Քրիստոս գայո՞ւ ընդ Պետրոսի մարդկութիւնն հրամայեաց եւ ընդ այլ հետեւողացն, թէ՞ ընդ եկեղեցոյն քարն կամ ընդ փայտն: - 40.

ՊԵՏՔ – Տե՛ս ՊԵՏՔ

ՊԵՐԻՏՈՒՏ – Եւ փիրիսկոպոսութիւնն Բ ազգն են՝ մէկն ձեռնադրված է ու մէկայլն ոչ. եւ բուտն՝ որ է յունարէն պերիտուտ: - 56.

ՊԵՐՊԵՌԱՍ – Եւ ընդհանուր գին արեան քրիստոնէին ԳՃ դեկան պերպետատ է - 10.

ՊԶՈՒՄՆ – Եւ յայս ամենիս վերայ փնդռել պիտի եւ ճշմարտել, որ թէ կամաւք լինի սղալն եւ կամ վասն պզման՝ նա զէղ մահապարտ զինք սպաննեն: - 154.

ՊԷՍ – զի զԱստուծոյ իրաւունս ծախեց Յուդայի պէս: - 20. այն հայրն՝ որ շան պէս զիւր միջաց բերած որդիքն ուրանայ ... նա դատի յԱստուծոյ: - 113.

ՊԷՏ – Եւ թողու զկնիկն, ու պէտջլինայ արել իր բնաւ - 92. Ապա թէ չայնեսգպէտ /ծն. պէտ/ ու մեռնի՝ նա որ տեսաւ ու չարարպէտն /ծն. պէտ/ նա վճարէ: - 163.

ՊԷՏ ԱՆԵԼ – Տե՛ս ՊԷՏ

ՊԷՏՔ – Եպիսկոպոսն յԱստուծոյ տեղն ինամք տանի ժողովրդեանն եւ զայնչաք սահմանած հարկն առնու ի սուրբ եկեղեցոյն եւ ի յայլ եկեղեցականացն ի պէտքն – 21. հայնց որ զիրենց ամէն պէտքն յայնկից ուննային՝ այրկտին ի յայրկտոյ վանքն եւ կնին ի կանեց: - 43. եւ ի յայն աղքատացն եւ յաւտարացն ի պէտքն եւ ի կարիքն դնեն զամէնն, հայնց որ իրենք չիշխեն այլ ուննալ, քան զիրենց քթեթն մէն: - 43. եւ վանքն տայ զպէտքն: - 51. Եւ իրք որ եկեղեցոյ լինի եւ եպիսկոպոսութեան, եւ իրիցնին եւ եկեղեցոյ բանհոգերն ծախել լինի՝ կամ այրել ինչ իպէտքս /ծն. պէտք/ է նա երբ նստի եպիսկոպոսն՝ նա կարէ այլուի զամէնն առնուլ – 60. եւ այլ պէտքն ի վաներոյն լինի: - 77. Ապա երբ խիստ թոյլ տվի /ծն. թուլցվի/՝ նա չոր հաց, կամ ի նշխարէն թող լնու զիրպէտքն: - 80. քաւէլ թէ կինն կամենայ, ու հաշիւ այնեն ընդ իրար՝ որ դնէ զինք ի տուն ու տայ զիր ամէն պէտքն /ծն. պէտք/ ու ինք առնու այլ

կին – 89. Եթէ ումեք կին գողենայ կամ աւերի ի ցաւոց և հաշիւ առնէ ընդ իրիկն, որ տայ իր զիւր պետքն քանի որ ապրի – 102. զի կովոյ եւ ծառութեան իպետքէ ի պարոնութեանն ի կարիքն: - 116.

ՊԻՂԾ, ՊԵՂԾ – Նոյնպէս եւ իշխանքն պարտին զիւրեանցն հարկատվացն եւ հնազանդացն պահել՝ որ ամէն մէկն զիւր շինածն եւ զկորթբացած հայրենիքն ուննայ, եւ չլինին ի վերայ յիրաց պատճառայոյզ ի պիղծն /ծն. պեղծն/ - 14. եւ այն որ կրկին կարգ էա՝ նա զէդ այլ պիղծ /ծն. պեղծ/ եւ անհաւատ կորսնէ՝ եւ տուծի ի դարպասէն իրաւամբք: - 22. Կու հրամայէ սուրբն Սահակ՝ թէ տգէտ եւ պեղծ մարդիկն քաժին կու ձգեն ի սուրբ եւ կաթուղիկէ վիմիս մէջ – 40. Ու թէ այլ յանդգնի, նա ու ի կարգէն այլ ձգվի, որ ոչ յեկեղեցին մտնէ՝ եւ զէդ պեղծ եւ անզգամ մարդ վատահի ձգվի: - 59. Եւ զխաբեքայ գանձասէր զետառքն հրամայէ ձգել ի կարգէն, եւ առնուլ զինչ ուննան զամէնն ի դարպասն, եւ այլ չթողուն մատ՝ ի յուխտ որ այնոց որ ի բարիքն գան զայթագողութեան պատճառ չլինի ի պիղծն: - 80. Ապա զայնոք որ մարդիկք դնեն, նա՝ թէ հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլվայ իրենք եկեղեցովն եւ ամէն բնակչաւք երկրին կարեն աքսորել: - 81. ու այրիկն լինայ բոզրած ու պեղծ – 88. Եւ թէ չըղորդի, նա քաժնէն իրանաւք, որ ի յայր /ծն.յայլ/ պեղծն չերթայ՝ եւ ի մահն՝ որ երկուքն մեռնի: - 92. Եւ ինքն, որ ծուռն է եւ պեղծ, նա զամէնն կորսնէ եւ մէկայլն առնու: - 92. Վասն իսեվ ու պեղծ այրկան – 92. Եթէ այրիկն իսեվ լինի ու պեղծ, եւ թողու զկնիկն ... նա յառաջ պատեհ է որ կնկան ազգն բերեն զայն փեսայն, եւ յիրար տան իրանաւք՝ որ կամ ուննայ զկինն զէդ պատեհ է, ու կամ թողու եւ տայ զիր: - 92. Նոյնպէս եւ թէ կնիկն պատահի պեղծ՝ է նա մէկ է իրաւունքն: - 92. եւ թէ վասն անհաստատութեանն կամ տվայտութեան, կամ թէ այրն բոզրած էր ու պեղծ եւ վասն այնոր թողցաւ եւ եսպան զինքն՝ նա զէդ մեծ մարդասպան է պատեհ, որ զինք տուծի – 93. Կու հրամայէ արեւնքս դատաւորաց եւ համաւրէն ունաւդաց աշխարհի, որ զայնոց՝ որ ի հարէ յորդիք կամ ազգաւ գողի կամ պիսակ՝ կամ պեղծ բորոտութիւն ուննան՝ նա զայնպիսեացն խափնեցնեն զինամութիւնն – 107. նա պեղծ է եւ ազահութիւն եւ պատճառն ամէն չարեաց – 142. Եթէ ոք զտղայ որ վասն բոզութեան կամ վասն այլ ցեղ պեղծ գործոյ իսեղդէ կամ սպանանէ ... ապա ինքն յայնցեղ մահով մեռանի զէդ այն տղայն – 143. վասն զի հնոյն հրամայածն այս է՝ թէ զինչ քեզ պեղծ /ծն. պիղծ/ է, դու քո ընկերին մի՛ առնէր – 144. որ պեղծ զարկսն ուննայ – 145. Եւ դեռ կարէ լինել, որ հայնց մեծ հարկ հանդիպի բժշկին, որ սղալէ ու չկարէ զալ առ հիւանդն, կամ որ վասն աղէկի դէղ տայ, նա պեղծ բերէ – 153. Եթէ ոք, որ կատարեալ հասակին լինայ, եւ պեղծ կամաւք մահ գործէ՝ կամ ի բան ածէ, որ մեռանի՝ նա մահապարտ է – 156. Ապա թէ վասն չարութեան լինի՝ նա պեղծ է – 159.

ՊԻՆԴ – եւ ի տաւներն երկար եւ պինդ քարոզութեամբ՝ զիտուն վարդապետաց քարոզութեամբ՝ կշտացնէ զիրենք – 39.

ՊԻՍԱԿ – Վասն գողեաց եւ պիսակաց եւ բորոտաց – 107. Կու հրամայէ արեւնքս դատաւորաց եւ համարեն ունաւոյց աշխարհի, որ զայնոց՝ որ ի հարկ յորդիք կամ ազգաւ գողի կամ պիսակ՝ կամ պեղծ բորոտութիւն ունան՝ նա զայնպիսեացն խափնեցնեն զխնամութիւնն – 107.

ՊԻՍԱԿՈՒԹԻՒՆ – Վասն բորոտութեան, պիսակութեան եւ գողութեան – 86. Ապա թէ լինի անբժշկելի բորոտութիւն եւ կամ գողութիւն հանդիպի եւ կամ պիսակութիւն՝ թէ այրկան եւ թէ կնկան, նոյնպէս եւ հետ տարոյն ազատ են: - 86.

ՊԻՏԵՆԱԼ – քանց կարեն հանել ու տանել խանդկով ընդ ամէն մարդոյ գետններ՝ ի յիր հողն եւ շինել զինչ իւր պիտենայ – 16. զի թէ տարին լմնայ, ու չլինայ վճարել, նա ի վճարն կարէ առնուլ զիր հողն այլվայ, ու տայ զինչ տուել լինայ ի գնողէն, թէ իր պիտենայ – 122.

ՊԻՏԻ – Զբերդոտութն եւ զայնպիսիքն անհնար պիտիսպաննել ու զկինն ու զորդիսն ծառայ տայ ի դարպասն եւ կարէ ծախել – 10. Քան զայլ ազգ մարդիկքն /ծն. մարդ/ վարդապետքն հարկեւորածպիտին, զի հոգոց բժիշկք են եւ եկեղեցոյ հաստատութիւն: - 14. Բայց տեսնուպիտի եւ փնտռել եւ իմանալ զմտնելոյն, որպէսն ի վարձն ու ի ամէն կերպ: - 18. Եւ պատրաստելպիտի եկեղեցոյն յայստեղս, որ բարեգործութեան բանն ի չար չդառնայ – 25. ու յառաջ զայն պիտի վճարել եւ զիր երիցնուն: - 46. նա զինչ ունան առնուպիտի – 78. եւ իւրատել ու այնել զինչ իր պիտի: - 81. Ապա յայրկանն հայրենեստներոյն վերայ էլ պիտիհայել ու տնտղել – 89. Բայց՝ զինչ ցեղ և է, արեան պարտական է, եւ սահմանել պիտի որ քաւէ: - 94. Բայց՝ զինչ ցեղ եւ է՝ զեկեղեցոյն քաւութիւնն առնուլ պիտի – 94. եւ ի յայտ տեղդ մեծ փնդաւորութիւն պիտի եւ հայիլ ի կտրճին ուժն ու ի յաղչկնին – 97. Բայց եւ գողան այլ պիտիմկրտել, երբ ծնանի – 100. որ յաւիտեան ծառայ ուննայ զինք ու այնէ զինչ իր պիտի – 105. ու չպիտի զառողջ սերմն ... ի յախտաժէտն խառնել եւ աւերել զմարդկութեանն ազգս: - 108. եւ պիտիոր զեղ որդոյ առնուն ի տանէն եւ ի տեղոյն եւ յընչիցն բաժին զեղ երկու քուրոջ: - 109. Եւ թէ կինն մայր լինի որդոց ու թէ աւտար մարու՝ զիր պռոյզն եւ զմահրն առնու, եւ թէ պիտի՝ կենայ ի խէչ որդեցն. ու թէ ոչ՝ նա ելնէ առնու իր այրիկն եւ զինչ կամի՝ զայն այնէ: - 110. Հարցանէն յարեւնքս վասն անընկմահու՝ թէ լինի իրենց թաղումն կամ պատարագ. նա կու հրամայէ թէ՝ աղէկ բարակ հետաքրքիր պիտի լինել – 115. Թէ պոմանն կըշտով լինի, ու թէ պակաս լինի՝ նա ի գնողէն ի վայր երթայ, կամ վճարէ զպակասն. զի խաբէութիւն չպիտի: - 123. Ապա աղէկ պիտիիմանալ՝ որ դըրուստ ի վատ թրծելոյ լինայ պատճառն, եւ ոչ ի դիպելո կամ ի յայլ իրաց – 124. Եթէ որ մարդոյ իրք տայ ի պահ, ու գողնվի՝ նա տեսնուլ պիտի թէ կայ իր գողցած իրք ի հետն թէ ոչ՝ եւ երդմամբ փնտռեն – 136. Կու հրամայէ արեւնքս, որ զայն ցեղն երկու ազգ պիտիդատել՝ մէկ վասն արբեցողութեան ... եւ երկու հետ, վասն վնասուն գոր գործեց – 141. Յայս պիտիհայիլ դատաւորացն, եւ պատրաստ կենալ յանմեղ արենէ: - 150. Բայց տեսնուպիտի՝ թէ ի՞նչ ցեղ է յուղարկելն՝ ինքն

յաւժարեցաւ ի գնայն, եւ թէ ի կահրա յուղարկեցաւ: - 151. Բայց աղէկ յիմանալ պիտի/գրքում՝ պետի/ զպատճառն՝ թէ գիշերն է լել յանկասկած, թէ ի մշակէ է. թէ յի՞նչ իրաց – 152. Եւ յայս ամէնիս վերայ փնդեղալիտի եւ ճշմարտել, որ թէ կամաւք լինի սղալն եւ կամ վասն պզման՝ նա զէդ մահապարտ զինք սպաննեն: - 154. թէ ու սիրով լինի վնասն՝ նա դեռ չէ պատեհ ի փրթման թողուլ, ապա չաք մի տուգնելալիտի, որ պատրաստին ի բան: -158. Եւ թէ ուրդի սուտ վկայ ի վերայ մարդոյ՝ նա կու հրամայէ արէնքս, որ՝ զինչ այն սուտ վկայութեամբն անմեղն պիտիոր տանջուէր, նա զինք տանջեն թէ մահու էր՝ թէ խրատելոյ՝ եւ թէ տուգնելոյ: - 163. նոյնպէս եւ թէ պնդեց թէ՝ մի՛ գահել, ու նա գահեց, կամ վագցնէ ու կոտրէ եւ մեռնի՝ նա թէ պատռեցնաւն ի հասակ կենայ՝ նա վճարելալիտի: - 165. թէ զգուշացուցել լինայ տէրն ... եւ նա այլ ազգ այնէ՝ նա այնոր վստահ վճար պիտի – 165. Բայց ի հրամանաց ելածն եւ ընդ ախփրթութենէ պատահածն ու այլ դեհ գնացածն քան ընդ որ պարոնն հրամէ՝ նա ի լման վճար պիտի այնէ: - 166. Եթէ անասունք մտեն ի յայգի կամ յաճուք կամ յարտ կամ կալ կամ այլ վնաս զինչ ու լինի՝ նա պախրէի ու գեհին պատ պիտի որ արգիլէ զիրենք – 167. Եւ զայլ անսնոցն վնասն տեսնուլալիտի եւ զպահրանն, նոյնպէս եւ զարծաւն եւ զսպաննելն եւ զգնելն անասնոց – 167. Եւ ի հաւտ դարպսուն պիտիարիանալ – 168. Բայց աղէկ պիտիտեսնուլ ու փնտռել վկայաւք՝ որ ընդ վնասուն տէրն դարպաս ասցել լինայ եւ ի դարպաս այլ գնացել ու ասցել – 169. նա պիտի զհայնցեղն ծեծնաւք ու սուգնաւք ահել, որ զանասունքն հայնց պահեն՝ որ վնաս չայնեն – 169. Բայց ի վերայ ամենայնի՝ խոզի իսկի պատ չկայ, որ կարէ զինք արգելել. խոզարծ պիտիդնել, կամ զմատակայ շինութիւնն քակել – 169. Զսինաւո լերանց եւ դաշտաց՝ քաղքնոյ եւ բերդերոյ՝ եւ զգեղորոյ/գրքում՝ զգերոյ/ դնելալիտի նշանով եւ գրով ամբրցնել – 170. զի թէպէտ եւ յառաջն գրած կենայ՝ Բայց ու յետինն պիտի որշատնան: - 171. Բայց աղունին վատութեան պատճառն էլ պիտիտեսնուլ վասն զիճութեան ցորենոյն եւ այլ իրվոյ գոր լինի ի հացն: - 171. ապա դու զնորա վարձն տուր, եւ նա զքո պարտքն վճարէ, զգողցածն ու զգարկածն եւ զսպաննածն ու զկոտրածն անսղալ վճարելալիտի: - 173.

ՊՂԻՆԾ - Տէ՛ս ՊՂԻՆԶ

ՊՂԻՆԶ, ՊՂԻՆԾ - Եւ բրդեղէնն ու բամբկեղէնն եւ պղինձն /ծն. պղինձ/ ու երկաթն՝ զարացն է: - 12. Եւ երկաթն ու պղինձն ու կլայեկն՝ յորում երկիր գտնվի՝ այնոր է: - 13. Ապա երկաթն ու պղինձն ու այլ իրք զինչ եւ լինի՝ որ ի հողէ ելնէ՝ տեղոյն իշխանին է: - 16.

ՊՂԾԱԳՈՐԾՈՒԹԻԻՆ – Եւ թէ ծուռ բան այնէ այրն ընդ կինն պղծագործութեամբ հետ այլ ումեք, որ ստուգվի եւ թէ ընդ անասուն մեղանչէ ... նա բաժնվի իրաւնաւք – 90.

ՊՂԾԵԼ – Եւ սուրբ առաքեալքն են սահմանել որ մահապարտ են եւ պղծող տաճարի կարդան: - 19.

ՊՂԾՈՒԹԻՒՆ – Եթե ոք ընդ անգետս հաղորդի անսուրբ, նա պատեհ է տեսնուլ զմարդն՝ թէ ինչ մարդ է եւ կամ յինչ հասակի, խեւ է թէ խելաւք որ հաքրեց ու արար վասն պղծութեան – 74. Ապա թէ հուքրելով լինի վասն պղծութեան՝ դու արա նմա զէտ զանարգանացն որ գրեցաք – 75. Ապա թէ տեսնուն, որ վասն այրկանն պղծութեան լինի ... նա զայրիկն աղէկ ըղորդեն դարպսու սաստով ... և ապա հաշտեցնեն զիրենք: - 105.

ՊՆԴԱՆՔ – Եւ տեսէք՝ թէ քանի՞ պնդանք կայ հայրապետացն և այլ դատաւորաց եկեղեցոյն – 30.

ՊՆԴԵԼ – Եւ այլ շատ ի վերայ իրաւանացս կու պնդէ Մարգարէն: - 4. սուրբն Սահակ գրել էր ի հաւս արիւնաւք ի հին եւ ի նոր կտակարանացն՝ ու պնդել եւ խրատել էր – 41. սուրբ հայրն Սահակ ... զգուշացոյց զմեզ եւ պնդեաց ... որ ամէն ազգ եւ երկիր իրենց հաշվնովն եւ ժմովն իրենց տաւն կու այնեն – 41. Նա կու պնդէ արեւնքս, որ երբ ի վանքն իջնուն, նա թէ կին կենայ ի հետն չելնէ՝ ի շուրջ գայ ի վանքն – 51. Կու հրամայէ արեւնքս եւ կու պնդէ, որ բնաւ ոչ ժամուց առնու քահանայն՝ եւ ոչ հողադրամ: - 53. Եւ այլ կու պնդէ զեկեղեցոյ առաջնորդն եւ զաշխարհի դատաւերն, որ ուր երեց գտնուն՝ որ առնու, նա զկարգն առնուն – 54. Այլվայ կու կրկնաբանէ արեւնքս եւ կու պնդէ, որ այն հայրն՝ որ շան պէս զիր միջաց բերած որդիքն ուրանա ... նա դատի յԱստուծոյ: - 113. Ամ այն մարդն, որ ի յիր գործոյն պատեհն մեռանի՝ նա անպարտ են տէրքն՝ բահրակ, այն տէրն որ զամէնն պնդելլինայ եւ արիացուցել զիր գործաւորքն եւ զհնազանդքն: - 148. թէ զգուշացուցել լինայ տէրն ու պնդել ի վերայ իրացն զտանաւղն ու նշան տըլել, և նա այլ ազգ այնէ՝ նա այնոր վստահ վճար պիտի. նոյնպէս եւ թէ պնդեց թէ՝ մի՛ գահել, ու նա գահեց, կամ վազցնէ ու կոտորէ եւ մեռնի՝ նա թէ պատռոցնաւղն ի հասակ կենայ՝ նա վճարել պիտի: Ու թէ վարաւզն մեռնի ի վերայ պնդելոյն՝ նա զքաստուն տէրն անպարտ է: - 165. Բայց ի վերայ ամենայնի դատաւորաց ստուգելոյն է դատաստանն՝ պնդելն եւ թողուլն: - 166.

ՊՈՄԱՆ – նա կարէ հայրն թագել զինք ի պոման՝ որ հետ իր մահուն չլինի ժառանգ արթոռոյն այն թագած դստերն որդիքն – 8. նա կու հրամայէ արեւնքս՝ որ զնորա գործն ի յայն տրտնջաւղն տան՝ որ այնէ. բայց հայնց՝ որ ընդ պոման եւ ընդ զմարթեցնելոյ չաւիրէ զամէնն - 73. Եւ թէ նեղածն կանուխ տայ հրամանք եւ կամ պոմանդնեն, եւ զինչ ու դնեն նա կարեն դնել մէկ դիհն եւ մէկալն, ու այն ընդունելի է: - 86. Ապա է տարի է պոմանն /ծն. պայմանն/ որ համբերէ, թէ հարուստ լինի ու թէ տառապեալ: - 89. նա պատեհ է, որ թէ պոմնով /ծն. պայմանով/ չլինի շալկել այրիկն զխորթերն՝ ի մաւր առնուլն, նա տան զխորթերն ի յազգն, որ հանգչին: - 91. Եւ անէ զինչ հաշիւ լինի արած ու պոման /ծն. պայման/ ընդ իրար: - 102. Ապա թէ ընդ այլ ոք լինայ խնամէխաւսած աղչիկն՝ նա ծնաւորն զնորա փաւշամնչէքն տան, եւ լմնցնեն զնրա պոմանն /ծն. պայմանն/: - 102. Եթէ ոք մի տուն վաճառէ՝ ծախէ կամ գնէ պարսպաւոր քաղաքի ընդ ներքնէ՝ նա յիր պոմանն /ծն. պայմանն/ թող

լինի իր վճարն – 119. Ապա տուն, որ պարբսպի ընդ դրուցէ լինի, նա այնոր հաշին գեղ արտի կամ գետնի մի է համարած, ու այնոր ծախելոյ վճարն մենակ լինի, որ ի յայն պոմանն վճարեն յոր դնեն: - 120. քաւել թէ տիրոջն կամաւք լինի յիմելոյն պոմանն /ծն. պայմանն/: - 120. Եւ եզին որ լինի վաճառ՝ նա նոյնպէս եւ այս վկայաւք եւ պոմնով /ծն. պայմանով/ պատեհ է որ լինի – 121. Նոյնպէս եւ կովն. թէ քշտան լինի, կամ ամուլ՝ նա դառնայ յեալթն ասուրն փորձէն եւ ի պոմանն /ծն.պայմանն/, որ դրվի ի վերայ: -122. Եւ որ հող կամ գետին վաճառէ, թէ վասն տառպելութեան, որ ծախէ զիր գետինն, եւ գայ իր դրացին եւ ընկերն ու գնէ՝ նա ի պոմանն /ծն.պայմանն/ է իր համբերելն: - 122. Եւ թէ ոչ վասն տառպելութեան, այլ իրք պատճառի լինայ լել վաճառն՝ նա մէկ տարին է պոմանն: - 123. Եւ որ մեղուք վաճառեն, նա թէ աշունն լինի՝ նա մեղրովն գեղ որ կայ ծախեն, կամ կըշտով դնենպոման /ծն.պայման/, կամ կոթրու: - 123. Թէ պոմանն /ծն. պայմանն/ կըշտով լինի, ու թէ պակաս լինի՝ նա ի գնողէն ի վայր երթայ, կամ վճարէ զպակասն – 123. Թէ ի գարուն լինի ծախն՝ նա քսան ար փորձէ գնաւոյն, եւ զվճարն ընկերաւք եւ վկայաւք տայ ի պոմանն /ծն. պայմանն/ - 123. Բայց ի վկայքն եւ ի պոմանն /ծն. պայմանն/ է հասել – 124. վասն աղքատութեան մարդ ընդ մարդ հաշիւ այնէ պոմնով /ծն. պայմանով/, եւ տայ՝ թէ կալ զիսայ հայրենիքս, ու տուր ինձ զիսայ չաք դէկանս – 129. որ դառնայ ի յինք իր պոմնովն /պայմանովն/ եւ վկայաւք – 129. Բայց դատաւորք պատեհ է, որ աղէկ տեսնուն զպոմըննին /ծն. պայմաննին/ եւ գերկրին տիպաւննին – 132. Եւ այլ կու հրամայէ արեւնքս որ թէ մարդ ուժ այնէ տառպել մարդոն, եւ զիր վարձն ի յիր պոմանն /ծն.պայմանն/ չվճարէ՝ կամ կտրէ, ու գայ դատըստնի տառպելն, նա դարպասն վճարել տայ – 145. ու չայնէ զբանն հայնց գեղ, որ պոմանն /ծն. պայմանն/ լինայ – 146. Եւ թէ գազանակեր լինի, նա թէ տան անսուն լինի ու տված լինի պոմնով /ծն. պայմանով/ որ ի տունն ուննայր, ու ի դուրս եթող՝ որ կերվաւ՝ նա վճարէ: - 160. Եւ զինչ ցեղ սովորութիւն լինի երկրին եւ պահ տալոյն պոմըննին /ծն. պայմաննին/՝ նա ի այնոր վերայ երթայ դատաստանն: - 160. Եւ իրաւունք է, որ զդրածպոմանն /ծն. պայմանն/ եւ զվարձն անպակաս տայ իրենց – 173.

ՊՈՄԱՆ ԴՆԵԼ - Տե՛ս ՊՈՄԱՆ

ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ – Ապա ի վերայ բանի պոռնկութեանն /ծն. պոռնկութեան/ թողու այր զկինն: - 88.

ՊՈՒԿ – Նշանակ եւ պուկ բերդատէրն մէն իշխէ վերցնել: - 12.

ՊՈՒՍՏԻՄՈՆ – Յաղագս պոխստիմոներոյ – 116. Կու հրամայէ արեւնքս թէ՛ մի՛ դներ պոխստիմոն եւ մի գրավ վասն քո ... երկու երկնաքարերի թէ որ է լավ կամ կտրուկ: - 116. զի կու հրամայէ արեւնքս՝ թէ երբ զգրակնուն կամ զպոխստիմոնին վճարն հայնց ուժով կու տայ առնուլ, նա որչափ եւս առաւել զկորսնելոյն կամ զվատնելոյն հրամայէ վճար լինել – 119.

ՊՌՈՅԳ, ՊՌՈՅՔ - Եւ պատեհ է որ յիւ հայրենի երկրէն զեղ եղբար մի կէս բաժին տայ իր արժեարք ընդ պոռոյգն: - 8. ու այլ ինչքն որ լինի՝ ու այն որ իպոռուգացն՝ երեցկնկանն լինի - 52. Եւ թէ հետ տարոյն չգտնվի, ու տղայ չկենայ՝ նա դառնայ պոռոյքն, նոյնպէս եւ տուայրն՝ թէ այրիկն լինի տուել. ապա թէ տղայ կենայ՝ նա պոռոյքն տղային է, չդառնայ - 86. ու այն կինն առնու յայրկէն զիր ամէն պոռոյքն ու զմահրն, եւ երթայ առնու իր այրիկ: - 87. Ապա թէ կնկնէն լինի՝ նա չտայ այրիկն մազ մի՝ ոչ պոռոյք եւ ոչ մահր - 87. Ապա թէ յայրկնէն լինայ պատճառն, նա զպոռուգացն յերեք բաժնէն մէկն տուգանք տայ կնոջն իր անձինն զին - 87. եւ զիր պոռոյգն /ծն. պոռոյքն/ եւ զինչ բերել լինայ զամէնն ի յինք դարձնէ: - 89. զայս երբ ստուգեն, ու այլ ճար չկենայ՝ նա բաժնվի իրաւնաւք, եւ զկէս պոռուգացն առնու այն որ բաժնվի: - 90. եւ տայ ի ձեռն, ու տայ զիր իրքն եւ զպոռոյգն /ծն. պոռոյքն/ ի յինքն, ու վարէ որ երթայ - 98. Եւ թէ կինն մայր լինի որդոց ու թէ աւտար մարու՝ զիր պոռոյգն եւ զմահրն առնու - 110.

ՊՌՈՅՔ - Տէ'ս ՊՌՈՅԳ

ՊՌՈՒԳԵԼ - եւ թէ կարենայ նա պոռուգէ զիրքն: - 133.

ՊՍԱԿ1 - նա իրաւունք է՝ որ թէ ուզենայ եկածն՝ նա խափանէն զյետի պսակն եւ առաջի պսակն է ընդունած: - 48. Բայց ի վերայ ամենայնի իրավունք է, որ առաջի պսակն ընդունած առնուի: - 48. Եւ թէ յետ է տարոյն զայ այրիկն. ու գտնու այլ այր կնկանն պսակով՝ նա թէ անպսակ է, նա առնու առջի այրիկն զկնիկն անսղալ: - 91. նա շատ դատաստան ու իրաւունք կարէ ուննալ ի յիր վերայ, որ անարգեց զպսակն եւ կոխեց: - 91. Այնոնք որ աներկեղութեամբ զիրենց պսակով կինն թողուն՝ առանց բոզութեան եւ կամ այլ իրաւնաւք պատճառանաց կոխեն զեկեղեցոյն պսակն եւ թողուն զիրեանց կաննին՝ նա կու հրամայէ արէնքս որ եաւթն տարի եկեղեցոյն յամէն ընդունելութենէ եւ ի պահէն ի դուրս մնան - 100. Եթէ աւագ սարկաւագի մահ հանդիպի՝ նա կինն չկարէ բնաւ այլ այրիկ առնուլ պսակով - 104. Վասն թէ յինչ հասակ պսակ լինի - 105. Կու հրամայէ արէնքս՝ պսակ որ տղայի լինի, որ քան զտասնուհինգ տարին պակաս լինի՝ նա չէ ընդունած այն պսակն - 105. Քահանայ՝ որ զայս այնէ որ անհասակաց պսակ այնէ ... նա զկարգն կորսնէ: - 105. զի երբ կնքած պսակուեցաւ՝ նա զէտ քրիստոնէի մի այլ է պսակուն հաշին: - 107. Ապա թէ կամենայ զինք իր պսակով կին այնել՝ նա կարաւ է - 133.

ՊՍԱԿ2 - Կու հրամայէ արէնքս՝ որ ով նոր տուն շինէ՝ նա բոլոր ցրւիցն պսակ դնէ. որ մարդ ընդ տան երդն ի վայր չընկնի մեռնի - 158.

ՊՍԱԿ ԱՅՆԵԼ Տէ'ս ՊՍԱԿ

ՊՍԱԿԵԼ - Եւ միաբանք տեղոյն պսակածլինին ընդ ուխտ տեղոյն սահմանեալ կարգովն - 43. Քահանայ՝ որ զայս այնէ որ անհասակաց պսակ այնէ, եւ կամ զայնոք որ ակամայ՝ առանց յիրար հաճելոյ հավնել են բռնադատութեամբ ազգացն՝ պսակէ՝ նա զկարգն կորսնէ: - 105.

ՊՍԱԿՈՒԵԼ - Տէ'ս ՊՍԱԿՎԵԼ

ՊՍԱԿՈՒԻԼ – Եթէ որ ծառայ շահի, եւ կամենայ ընդ ինք պսակուիլ /ծն. պսակուել/՝ նա պատեհ է, որ Խ աւր թողու զինք, որ զիր ծնաւորն լայ107.

ՊՍԱԿՎԵԼ, ՊՍԱԿՈՒԵԼ – Ապա թէ անայր կին լինի լել, եւ խոստացել լինայ թէ՛ պսակվիմ ընդ քեզ, ու այնով լինայ խաբել զկինն՝ նա ճարն է որ պսակվի. ու եփ պսակվի՝ նա տուժանք չպարտի: - 96. Եւ թէ ոչ՝ նա տայ հաւրն յիսուն դրամ, ու պսակվի ընդ ինք անբաժնելի: - 97. Եւ ապա պսակվի, եւ ուննա զինք հալալ: - 107. զի երբ կնքած պսակուեցաւ՝ նա զէտ քրիստոնէի մի այլ է պսակուն հաշին: - 107.

ՊՏՂԱԲԵՐ – Եւ զպտղաբեր ծառք երկրին չտայ կտրել: - 10. Վասն զպտղաբեր ծառ կտրելոյ – 161. Եթէ որ ի սիրտ ելնէ ու երթայ զմարդոյ պտղաբեր ծառ կտրել՝ նա կու հրամայէ իրաւունքս՝ որ այլվայ իր տան տնկել – 161.

ՊՏՂԱԻՈՐ – Եթէ որ զարկնէ պտղաւոր /ծն. զպատեղավոր/ կին, եւ նա ձգէ զտղայն, եւ թէ դեռ անկերպարանք լինի եւ խլինք՝ նա կէս տղայի վճարէ ցհայրն – 103.

ՊՏՈՒՂ – Ապա վայրի պտուղքն ի ծառոցանցն երկրին՝ շինականացն է – 16. Գրած է ի Մովսէսի յարէնքն, որ թէ որ ի ծառէ ի վայր ընկնի ու մեռնի՝ նա զծառն կտրեն, եւ՝ երբ մուրզ հանէ՝ նա ապա ուտվի պտուղն: - 78. Եւ յիմանան թէ այն ծառն քանի արժենայ, եւ թէ որչաք պտուղ կու տայր ի տարոջն – 161.

ՊՐԱՅԱԼ – Հինգերորդ դասք են էսկուպիտորիաքն, սոքա են՝ որ ասպարս և վահանս, կմբրաւոր շալկեն, զոր կու յիմնամ որ բազկնոց պրացալն է: - 69.

ՊՐԱԻՔՍԱԻՏՈՐԱՅ – Չորրորդ դասք պրաւքսաւտորայն է, որ երկթի ասպրնի շալկեն: - 68.

ՊՐԻՍՄԷ – Եւ արծաթն ու արծթով կտաւ՝ եւ պրիսմէն՝ իշխանացն է -12.

ՊՐԿԵԼ – Մարդ որ մարդ պրկէ՝ ամենն զինչ կենա՝ պրկաւղին է, եւ զրհին մէն պարոնին: - 12.

ՊՐՈՊԱՏԻԿԷ – Եւ բնաւ ոչ ի քաղաք եւ ոչ ի գեղ եկեղեցի առանց պարսպի որ լինի եկեղեցւոյն բոլոր ու դուռն ի վերայ՝ որ ի յեկեղեցին անսուրբ իրք չմերձենայ՝ չթողուն պրոպատիկէ /ծն. պրպատիկէ/ աւազանովն: - 37.

Ջ

ՋԱՂԱՅ – Եւ ջուր հանել ի գետոց ջրելոյ կամ ջաղցնոյ՝ չկարէ որ արգելուլ –16. Վասն ջաղցաց եւ խանութի, որ կապալ բերէ –120. Ապա ջաղացք եւ խանութք եւ հայնց իրք, որ կապալ բերէ՝ նա չէ պատեհ որ յիմէ վճարն –120. Վասն որ ջաղացք գնէ – 125. Վասն ջաղցնոյ /ծն. ջաղացնոյ/ եւ այլ այնցեղ իրաց, երբ գնէ որ վկայաւր եւ հաստատէ թղթով՝ նա այլ չկարէ փաւշամնիլ՝ ոչ գնաւղն եւ ոչ ծախաւղն –125.

Եւ զկապճկերն ըստ երկրին սահմանին այնեն, եւ ըստ ջաղցացն եւ ըստ ջրին ուժոյն – 172.

ՋԱՂԱՑՊԱՆ – Վասն ջաղցպներոյ – 171.

ՋԱՄԲԵԼ – եւ ջամբել ի կաթին տեղ գտուրք մարմին եւ զարին հաւրն մերոյ Յիսուսի Քրիստոսի – 41.

ՋԱՄԲՌ – Եւ որ յարքունի ջամբոէ իրք գողանայ՝ նա զերկու աչսն հանէ եւ զկինն ու գորդիսն առնուն եւ այլ զինչ ունենայ՝ առնուն – 10.

ՋԱՆԱԼ – Վասն որ գլխաւոր եկեղեցոյ ջանայ զիր ընկերոջ աստիճանն իլել – 58. Եթէ եպիսկոպոս կամ երէց ջանայ զիր ընկերոջ զաստիճանն եւ կամ զիրաւունքն իլել, նա կու հրամայէ արեւնքս՝ որ արգելէն զինքն ի յայն գործոյն: - 58. Եւ թէ ոք ի կարգէ ձգած լինի ... եւ նա ջանայ այլ ուրեք երթալ առնուլ՝ նա չէ իրաւունք որ տան – 59. Եւ թէ ցաւ ինչ կենայ՝ նա ջանան դեղերով: - 89. Ապա թէ ազգ մի լինի՝ որ փաւշամնի, նա պատեհ է, որ հաւատարիմ կինն ջանայ ի յետն, եւ քանի ու կարէ յորդորէ զինք՝ որ դառնայ յրդորդն, ու շահի զինքն – 93. կին՝ որ զիր այրն՝ որ իր գլուխ է՝ ջանայ սպաննել վասն իր բոզութեանն՝ նա պարտ է զինք չարաչար մահուամբ սատակել – 95.

ՋԱՆՈՒՆ – Եւ զայս ի ֆռանկաց եկեղեցականացն տես եւ, ուսիր՝ որ ջանուն /ծն. ջանուննի/ անուանին, որ եփ գուզվի եւ կարգվի ջանուն յեկեղեցին՝ այլ չկարէ պակսեցնել եպիսկոպոսն յիր /գրքում՝ յին/ ապրանացն մագ մի առանց իրաւանց: - 21.

ՋԱՐԴԵԼ – եւ զծոյն Գ հետ խրատ տալով յանդիմանեն եւ այլ ի հետ գաւազաներով ջարդեն – 37.

ՋԵՐՄՈՒԹԻՒՆ – հաճեցնէ իր սրտին ջերմութեամբն եւ աղաւթիւքն զտեսաւղսն /ծն. զտեսաւղքն/ 61.

ՋՆՁԵԼ – եւ ի Հայոց կանանց վաղ էջնջած այս կարգս: - 67.

ՋՈՐԻ – Եւ ջորին եւ ձին եւ էջն չտայ – 13.

ՋՈՒՐ – Եւ ջուր հանել ի գետոց ջրելոյ կամ ջաղցնոյ՝ չկարէ ոք արգելուլ կամ ասել թէ՝ սինաւոս իմ է, մի՛ հանել ջուր. քանց կարեն հանել ու տանել խանդկով ընդ ամեն մարդոյ գետններ՝ ի յիր հողն եւ շինել զինչ իւր պիտենայ. եւ չէ այն ջուրն՝ քանց այնոր որ տարաւ զայն ջուրն՝ հայրենիք իւր սեփական: - 16-17. եւ կարեն լուանալ տղայք եւ կանայք քաւութեան ջրովն – 67. Վասն որ առուով ջուր տանէ եւ վնաս այնէ այլոց – 152. Եթէ ոք առուով ջուր տանի ի յիր բանին կարիքն, եւ իր կարեցն լուծէ զջուրն՝ որ այլոց վնաս այնէ, նա թէ արիացուցել լինայ զվնասուն տերն՝ նա կիսավճար տայ իւրն – 152. եւ նա տանի ի ջուր, կամ ի կապ կամ ի փոս, կամ ի յայլ տեղ փոթորկեցնէ – 165. Չսինաւո լերանց եւ դաշտաց՝ քաղքնոյ եւ բերդերոյ՝ եւ զգեղերոյ /գրքում՝ զգերոյ/ դնել պիտի նշանով եւ գրով ամբրցնել. եւ յայն պահել զուժով գեղերն ի յիր չաքն ու զվատ ուժն՝ ի ջուր, ի հող, ի տունկ եւ ի

ծառ, յայգիք եւ ի պատեր – 171. Եւ զկապճկերն ըստ երկրին սահմանին այնէն, եւ ըստ ջաղցացն եւ ըստ ջրին ուժոյն – 172.

ՋՐԱՂԱՅ – Ջրադացք /ծն. ջաղացք/ եւ այսպիսի շինուացք ազատ է: - 13.

ՋՐԱՂԱՅՊԱՆ – Ջրադացայներն կու հրամայէ արէնքս՝ որ հատուկ եւ հաւատարիմք պատեհ է դնել վասն գոյութեան երկրին, որ չափրեն զաղունն – 171.

ՋՐԵԼ – Եւ ջուր հանել ի գետոց ջրելոյ կամ ջաղցնոյ՝ չկարէ ոք արգելուլ կամ ասել թէ՛ սինաւոս իմ է, մի՛ հանել ջուր – 16. զի թէ դիարթիկ այնէ՛ նա ամենն ջրեցաւ – 112.

Ս

ՍԱ – Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին եւ ի դժարաբառ եւ յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր եւ ի սովորական բառս ... ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ եւ որդոյ սորա Լեւոնին: - 4. Եւ արդ գրեցի զսա վասն հաստատութեան եկեղեցւոյ եւ գոյանալոյ երկրի – 4. Մեծն ի հայրապետսն՝ Ալէքսանդրուն էր յԵգիպտոսին, որ այլոց իշխէր ի հին սահմանն, եւ ի հետ սորա՝ Հռոմայն, եւ ապա Անտիոքացն, եւ սոցա տեսով պահվէին այլ դատաւորք եկեղեցոյն: - 57. Եւ սոքա՝ եղեն աստիճանաւորք հայրապետք – 65. Եւ սոքա կարեն արհնել մեռոն ու դնել պատրիարք: - 65. սոքա Գ կրկին նափորտ հագնին եւ զնոյն զսքեմդ: - 65. Ու կարեն ձեռնադրել զամեն վիճակաւորսն. եւ իսոցանէ երբ Գ կենան ինչ իրերաց, նա կարեն արհնել իրենց մեծ մետրապալիտ – 66. Եւ սոքա եւս պատուով են զանազանած, եւ ամուսնութեամբ մէկ են – 66. Հինգերորդ դասք են էսկուպիտորիաքն, սոքայ /ծն. սոքա/ են՝ որ ասպարս եւ վահանս, կմբրաւոր շալկեն – 69. Վեցերորդ դասք ստրատորոսք են. սոքա զեղ ըռքեպդարքն են, որ կազմաւ զձիոյն թամբերն հոգան եւ զհեծցնելն: - 69. Ընդդէմ Աստուծոյ իրաւանց եւ արինաց եւ ճշմարտութեան է, որ թագաւոր կամ իշխան կամ այլ ազգ գլխաւոր եկեղեցական կամ աշխարհական, որ վասն կաշառոյ սոցա հայր դնէ, զոր իրենք չուզենան – 73. սոքա երիցանցէ դատին եւ արքորին: - 83. Ի վերայ ամենայնի արէնքս զարձակելն լաւ կու հրամայէ այն կնանոյ, որ զայս պատճռնիս ունանան՝ բոգութիւն կամ կախարդութիւն եւ որ նման են սոցա /ծն. սոցին/ - 100. Կին՝ որ վասն մեղաց ի ծառութեան տարվի կամ ի յայլ ինչ որ նման է սորա ... զի արք կանայս առնին եւ կանայք յարանց եղեն ... բայց զինչ ցեղ ու է, երբ գայ՝ նա զիր կինն անսղալ առնու – 106.

ՍԱԶԱՅ – Ապա թէ ի գողութիւն բռնվի՝ նա զկարքն առնուն ու դարպսուն նամուսովն իրատ ու սազայայնեն՝ զեղ գողոյ ու անհաւտի: - 23. Եւ թէ յանդգնի ու

չգայ ի ժողովն, նա իմանան զիր խաւսքն եւ զպատճառն՝ եւ ի յայնոր վերայ իրաւունք տան եւ սագայ /ծն. ջաղայ/ ի խատն եւ ի քիչն: - 23. ու թէ Բանն մեծ լինի՝ նա սագայ տան ի վերայ իրացն: - 25. Ապա թէ այլ ցեղ լինի՝ նա ամբարտաւանութիւն է եւ տգիտութիւն ու իր սագայ տան այլ վարդապետին: - 26.

ՄԱԶԱՅ ԱՅՆԵԼ - Տե՛ս ՄԱԶԱՅ

ՄԱԶԱՅ ՏԱԼ - Տե՛ս ՄԱԶԱՅ

ՄԱԼԱԸ – Ու զկնքադրամն եւ զայլ մտերոյն բաժինքն սիրով եւ անխալապայ՝ որպէս գրել ենք՝ առնու ամէն մէկ զիր բաժինն սալար: - 37. ապա զինչ զենել է՝ սալար զիր իրաւունքն առնու՝ զերին ու զերբուծն ու զմորթին: - 55.

ՄԱԼՔԱԸՈՒԿ – նա առնու այրիկն սալքարուկ մի, ու գրէ ի վերայ – 98.

ՄԱԿԱԻ – Եթէ երկու մարդ յիրար անցնին ի ծեծ եւ կամաթք մարդիք լինին՝ նա տուգանքն սակաւ լինի այնոր: - 18. Եւ զայս հերիք այրէք զսակաւս ի լսել: - 27.

ՄԱՀԱԿ – Հարկ է փոքր ի շատէ յաղագս վանականաց գրել, եւ զայս արժան է զյերկար սահմանն ի սրբոյն Սահակայ գրենացն ուսանել: - 36. Բայց ինձ Սմբատայ՝ ծառայիս Քրիստոսի՝ յոյժ հարկ եղեւ յայս տեղիս գտնուլ զսրբոյն Սահակայ նախնոյն մերոյ գրեալ սահմանն – 36. հրամայեալ է սուրբն Սահակ, որ ամէն տարի հայրապետքն ժողովք այնէն ի մայրաքաղաքն, եւ ուղղեն զհաւատոց եւ զեկեղեցոյ կարգաց բաներն եւ հանեն զծուռն: - 36. Վասն սահմանի զոր սուրբն Սահակ է դրել վաներոյն սահմանն է – 39. Բայց այժմ զվաներոյ սահմանն համառատեցաք եւ գրեցաք զուժերն ի սրբոյն Սահակայ: - 39. Կու հրամայէ սուրբն Սահակ՝ թէ տգէտ եւ պեղծ մարդիկն բաժին կու ձգեն ի սուրբ եւ կաթողիկէ վիմիս մէջ – 40. սուրբ հայրն Սահակ ... զգուշացոյց զմեզ եւ պնդեաց ... որ ամէն ազգ եւ երկիր իրենց հաշվնովն եւ ժմովն իրենց տաւն կու այնէն – 41. Զայս սահմանս գրեաց սուրբն Սահակ – 45. Հայնց կու հրամէ սուրբ եւ երջանիկ հայրս մեր Սահակ: - 46. Եւ որպէս գրել ենք ի սրբոյն Սահակայ սահմանն եւ կրկին կու գրենք՝ երեցնոյ բաժինն՝ ի մատղէն զինչ եւ լինի՝ աջ երին ու երբուծնէ եւ խախցոցն, ու ի ցորենէն եւ ի գինոյն տասնակ ... եւ ի Սահակայն կայր մորթին գրած ու ի հաւս չկայ՝ եւ ես չգրեցի – 76.

ՄԱՀՄԱՆ – Զգաւառաց հարկն սահմանովն որ սահմանած է՝ առնուն պարոնայքն – 13. Եւ է ըղորդ հարկուն սահմանն այս – 13. Սահման է առաքելական արինաւքս, որ եպիսկոպոսն յԱստուծոյ տեղն ինամք տանի ժողովրդեանն – 21. Վասն վարդապետաց սահմանի – 26. Եւ ոչ ամենեւին ի սահմանադրութեանց եկեղեցոյ՝ եւ ոչ ի սահմանաց թեմերոց իշխէ ոք փոփոխել բնաւ առանց կաթողիկոսի՝ որ մեծ ժողովի տեսով այնէ: - 30. Եւ այնոց սահմանովն զաւտարքն հիւրընկալեն եւ մեծարեն որ յեկեղեցի գան: - 34. Եւ արդ, այս է սահման կարգած քահանայիցն – 36. Հարկ է՝ փոքր ի շատէ յաղագս վանականաց գրել, եւ զայս արժան է զյերկար սահմանն ի սրբոյն Սահակայ գրենացն ուսանել: - 36. զի երբ ի սրբոյն ի սահմանէն չեն ի պատկառիլ՝ նա ի մերոյս ո՞րպէս: - 36. Բայց ինձ

Սմբատայ՝ ծառայիս Քրիստոսի՝ յոյժ հարկ եղեւ յայս տեղիս գտնուլ զսրբոյն Սահակայ նախնոյն մերոյ գրեալ սահմանն, եւ անտի ճշմարտեցի զուղղութիւն սահմանիս – 36. Ի վանք եւ ի դուրք զամէն մեկ ի յիր սահմանն պահէ: - 38. Վասն սահմանի զոր սուրբն Սահակ է դրել վաներոյս սահմանն է – 39. Բայց այժմ զվաներոյ սահմանն համառատեցաք եւ գրեցաք զուժերն ի սրբոյն Սահակայ: - 39. Վասն աշխարհի իրիցնոյ սահմանի – 45. Չայս սահմանս գրեաց սուրբն Սահակ – 45. Վասն որ մարդ կենայ եւ մեռնի եւ իր սահմանայնէ – 46. Սահման էր՝ որ յառաջ չիշխէր եպիսկոպոսն վանացն. ապա թէմին մէն իշխէր – 50. Նա գրած է հինա՝ որ ով լսաւ լինի սահմանիս, եւ յեպիսկոպոսն թողու զվանքն իր ապրնաւքն՝ նա արինած է յԱստուծոյ – 50. Վասն հիւանդանոցներոյ սահմանի – 51. Սահման է յարինացն՝ որ թէ թագաւոր եւ թէ իշխան ու թէ հեծելոր, որ ի ճանպահ կենայ, ու վանք պատահի, նա ի հաւն իջնու, չիջնու ի գեղ – 51. Եւ այդ նոր դիր է նոր սահման – 53. Վասն որ չկայ սահման որ ժամուց առնուն – 53. Մեծն ի հայրապետսն Ալէքսանդրոսն էր յԵգիպտոսին, որ այլոց իշխէր ի հին սահմանն, եւ ի հետ սորա՝ Հռոմայն, եւ ապա Անտիոքացն – 57. Զի զայս ի Նիկիայի սահմանն ամրացուցել են եւ կապել – 61. Եւ զայս ի սուրբ Գրիգոր Լուսաւորչին սահմանն էլ գտնուս փակած – 62. Եւ որ ընդ սահմանն ի դուրս այլ կին առնու, նա Ե տարի ի դուրք կենայ ի յեկեղեցոյն եւ ապաշխարէ – 62. Հարց անապատաւորաց եւ նոցունց եղբարց սահման, զոր եղաւ ի սրբոյն Բարսղէ, ի յայս տեղս մենք այլայլել բնաւ չիշխենք – 72. Եւ որպէս գրել ենք ի սրբոյն Սահակայ սահմաննէ կրկին կու գրենք՝ երեցնոյ բաժինն՝ ի մատղէն զինչ եւ լինի – 76. Կու հրամայէ արեւքս եւ այն որ ի Նիկիայ հաստատեցաւ սահմանն, որ չիշխէ քրիստոնէ որ ի հասակ լինի հասել՝ նա աւագ հինգշաբթի արն զատկի քան զհաղորդն եւ զնշխար այլ աւելի իրք ուտել – 80. Եւ այս է դատաւորաց սահմանն – 95. Չայս այսպէս սահմանհրամայեաց աստուածային արեւքս: - 108. Պարտ է զիտել, որ զվաճառացն եւ զպագրնոյն սահմանն ի քաղաք եւ ի դուրս՝ պարոնութիւնն սահման է զիրաւունքին՝ զչափն եւ զկշիռն եւ զայլն յայսպիսեացս – 126. Բայց մեծ իշխանք եւ փոքունքն եւ իմաստունք բնակիչք աշխարհին պարտին յորդորել միշտ զթագաւորն եւ իրենք զիրար՝ ի յայս ուղիղ սահմանիս պահելն: - 128. Եւ վաճռնոյն սահմանն այս է՝ որ երկուքին կամաւք լինի եւ վկայաւք: - 128. Եւ զկապճկերն ըստ երկրին սահմանին այնեն, եւ ըստ ջաղացն եւ ըստ ջրին ուժոյն – 171.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ – Եւ ոչ ամենեւին իսահմանադրութեանց եկեղեցոյ՝ եւ ոչ ի սահմանաց թեմերոց իշխէ ոք փոփոխել բնաւ առանց կաթողիկոսի՝ որ մեծ ժողովի տեսով այնէ: - 30.

ՍԱՀՄԱՆ ԱՅՆԵԼ – Տե՛ս ՍԱՀՄԱՆ

ՍԱՀՄԱՆԵԼ – Ու կարաւոյ է թագաւորն յիր առողջութեան եւ ի մահուն կտակ գրել, ու սահմանել եւ տալ զլեռն եւ զդաշտն եւ զիր ամէն երկիրն զինչ ցեղ որ իր կամքն լինի – 8. Զգաւառաց հարկն սահմանովն որ սահմանածէ՝ առնուն պարոնայքն –

